ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆՆԵՐ



Ուսումնական ձեռնարկ
և
աշխատանքային ուղեցույց
Մարտ 2005

Փաստաթղթի բնօրինակը հրատարակվել է Կանադայի Միջազգային զարգացման գործակալության՝ CIDA աջակցությամբ, Աֆրիկյան ջրային ռեսուրսների զարգացման գործակալության՝ PAWD ծրագրի շրջանակներում:

Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆ
ՄԱՍ 1. Ուսումնական ձեռնարկ
1. ՋՈՒՀԿ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ
1.1.Ի՞ՆՉ Է ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ
1.2. ԻՆՉՈՒ՞ ՋՈՒՀԿ
1.3. ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ
1.4 ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ
1.5. ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ. ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՕԳՈՒՏՆԵՐ
1.6. ՋՈՒՀԿ-Ի ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ
2. ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՊԼԱՆԱՎՈՐԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ
2.1. ԻՆՉՈՒ՞ ՋՈՒՀԿ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ
2.2. Ի՞ՆՉ ԵՆՔ ԱԿՆԿԱԼՈՒՄ
2.3. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ
2.4. ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆ
3. ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒՄ
3.1. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՔՆԵՐ
3.2. ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒՄ
4. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ՄՇԱԿՈՒՄ
4.1. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ
4.2. ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ
4.3. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
4.4. ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ
4.5 ՀՁՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ
5. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՌԱՀԱՐ ՆՊԱՏԱԿ
5.1. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ
5.2. ԻՆՉՈՒ՞ Է ԿԱՐԵՎՈՐ ՀԵՌԱՀԱՐ ՆՊԱՏԱԿԸ
5.3. ՋՐԻ ՀԵՌԱՀԱՐ ՆՊԱՏԱԿ ՄՇԱԿԵԼՈՒ ՔԱՅԼԵՐ
6. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
6.1. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ
6.2. Ո՞Ր ԿԱՐԻՔՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԲԱՎԱՐԱՐՎԵՆ
6.3. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՔԱՅԼԵՐ
6.4. ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
6.5. ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐ
7. ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ
7.1. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ
7.2. ԻՆՉԻ՞Ց ՍԿՍԵԼ
7.3. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐ
7.4. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՇՐՋԱՆԱԿ
7.5.ՋՈՒՀԿ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ
8. ԿԱԶՄՎԱԾ ԵՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՋՈՒՀԿ ՊԼԱՆ
8.1. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔ
8.2. ՉՈՐՍ ՀԱՐՑ
8.3. ՊԼԱՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՋՈՒՀԿ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿ
ՄԱՍ 2. Աշխատանքային ուղեցույց
Օժանդակողի գրառումներ

Ծանոթություն

Ուսումնական դասընթացի այս նյութերը նախատեսված են «ՋՌՀԿ սկզբունքների հիման վրա ջրային ռեսուրսների կառավարման պլանի կազմում» թեմայով 3-4օրյա սեմինար անցկացնելու համար: Քանի որ դասընթացի տևողությունը սահմանափակ է, ժամանակը հիմնականում կենտրոնացվել է գործընթացը ներկայացնելու վրա և ավելի քիչ է ուշադրություն դարձվել նյութի բովանդակության խորությանը: Դասընթացի նպատակն է հակիրճ ներկայացնել ներածությունը, ինչպես նաև այլ անհրաժեշտ գործիքներ ու մեթոդներ: Պլանավորման գործընթացի ամեն մի փուլի համար առաջարկվում են համապատասխան օգտակար գործիքներ:

Չնայած նյութերը նախատեսված են ազգային ՋՌՀԿ պլանները կազմելու համար, դրանք հեշտությամբ կարող են հարմարեցվել նաև ավազանային մակարդակով պլանավորմանը, ուստի խրախուսվում է ուսուցանողների՝ այս նյութերը տեղական պայմաններին հարմարեցնելու ստեղծագործական մոտեցումը:

Երախտագիտության խոսք

Գրականության ցանկում տրված նյութերը բավականին հաճախ են օգտագործվել, իսկ որոշ դեպքերում՝ բառացի քաղվել:

Հեղինակները Cap-Net ցանցից և ԳՋՀ-ից են. Պոլ Թեյլորը, Լյուիս Ջոնքերը, Էմանուել Դոնկերը, Դիանա Գվիոն, Իբրահիմա Մբոջին, Չարլզ Մլինգին՝ Cap-Net-ից, Յան Հասսինգը և Դանիել Լոպեզը՝ ԳՋՀ-ից: Լրացուցիչ նյութեր են ընդգրկվել մի շարք ուսումնական դասընթացներ անցկացնելուց հետո, և փաստաթուղթը ըստ անհրաժեշտության շարունակաբար թարմացվում է:

Գրքի հայերեն թարգմանությունն իրականացվել է Կենտրոնական Ասիայի և Կովկասի Գլոբալ ջրային համագործակցության ֆինանսական օժանդակությամբ Ազգային ջրային համագործակցություն, Կայուն ջրային միջավայր ՀԿ-ների և ՋԻՆՋ ՍՊԸ-ի կողմից:

Թարգմանիչներ	Հասմիկ Մխիթարյան Լիլիթ Բաղդասարյան
Խմբագիրներ	Արևիկ Հովսեփյան Էդուարդ Մեսրոպյան
Տեխնիկական խմբագիր	Նազիկ Հովհաննիսյան

Նախաբան

Անկախ այն հանգամանքից՝ արձագանքում ենք արդյոք գործողություններ ձեռնարկելու միջազգային կոչերին, թե պարզապես ընդունում ենք ազգային կամ տեղական մակարդակով ջրային հիմնախնդիրները հրատապ լուծելու անհրաժեշտությունը, մեզանից շատերը բախվում են բարեփոխումների պլանավորմանը մասնակից լինելու անհրաժեշտությանը: Ջրային ռեսուրսների կառավարման բարեփոխումների ընդհանուր նպատակը զարգացման կայունությունն է, նաև սոցիալական արդարության և տնտեսական արդյունավետության ապահովումը: Ջրային ռեսուրսների կառավարման բարելավման առաջարկվող մոտեցումը պայմանավորված է պլանավորման ու որոշումներ կայացնելու գործընթացին շահագրգիռ կողմերի մասնակցությամբ: Ուստի ջրային ռեսուրսների կառավարման պլաններ մշակելիս ջրօգտագործողների մասնակցությունը կարող է ավելի ակտիվ լինել, քան ավանդական կառավարման պլանավորման ժամանակ:

Ջրային ռեսուրսների կառավարման ռազմավարություն ձևավորելը սովորաբար պլանը մշակելու առաջին քայլն է, քանի որ մինչ մանրամասն պլանավորումը պետք է սահմանվեն բարեփոխումների հիմական նպատակներն ու խնդիրները, համաձայնեցվեն դրանց հիմնական ուղղությունները:

Ներկայացվող ուսումնական ձեռնարկի և աշխատանքային ուղեցույցի նպատակը այն երկրների մասնագետներին աջակցելն է, որտեղ մշակվում է ջրային ռեսուրսների կառավարման ռազմավարություն կամ ջրային ռեսուրսների կառավարման պլան: Դասընթացի նյութերը մասնավորապես պայմանավորված են մի շարք երկրներում Գլոբալ ջրային համագործակցության (ԳՋՀ) նախաձեռնություններով և կարող են օգտագործվել «Փոփոխության խթանում» (Catalyzing Change, GWP, 2004) հրատարակության հետ համատեղ՝ որպես լրացուցիչ ուղեցույց և քննարկման նյութ:

Մենք համամիտ ենք այն տեսակետին, որ պլանավորումը ոչ թե գծային, այլ փուլային գործընթաց է, և այն պետք է ուղեկցվի գործընթացի պարբերական մոնիթորինգով, առաջընթացի գնահատմամբ և վերապլանավորմամբ: Ուսուցողական նյութերը ներկայացված են այս տեսանկյունից: Սակայն այն չի տարածվում պլանի իրականացման վրա: ՋՌՀԿ –ի ներդնելու հարցերին անդրադառնում են Cap-Net-ի այլ ուսումնական նյութեր:

Հուսով ենք, որ սույն ուսումնական ձեռնարկը կնպաստի ջրային ռեսուրսների կառավարման տարբերությունները բացահայտելուն և կարագացնի կայուն զարգացման դրական փոփոխությունները: Այս նյութերը հզորություններ ստեղծելու հիմք են, սակայն դրանք պետք է հարմարեցվեն տեղական պայմաններին, լեզվին, մշակույթին և փորձին: Ահա թե ինչու ենք մենք տեղական կազմակերպությունների՝ ունակություններ ձեռք բերելու գաղափարի վստահ կողմնակիցները: Ջրային ռեսուրսների կառավարման ազգային պլանավորմանը նպատակաուղղված լինելով՝ այս ուսուցողական նյութը հեշտությամբ կարող է հարմարեցվել ավելի ցածր մակարդակով (գետավազանային կամ ջրհավաքի) պլանավորմանը՝ ՋՌՀԿ-ը օժանդակող ազգային քաղաքականության և օրենսդրության սահմաններում:

Պոլ Թեյլոր
Տնօրեն
քարտուղար
CAP-NET
www.cap-net.org

Էմիլիո Գաբրիելլի
Գործադիր

ԳՋՀ
www.gwpforum.org

ՄԱՍ 1

Ուսումնական ձեռնարկ

1. ՋՈՒՐԿ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1. Ի՞ՆՉ Է ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Եթե պարզ արտահայտվենք, ջրային ռեսուրսների համապարփակ կառավարումը տրամաբանական և ներընմբռնողական հրապուրիչ գաղափար է: Այս գաղափարի հիմքն այն է, որ սահմանափակ ջրային ռեսուրսների տարբերակվող օգտագործումները փոխկապակցված են: Դա ակնհայտ է բոլորիս: Ոռոգման բարձր պահանջարկն ու գյուղատնտեսությունից աղտոտված դրենաժային հոսքերը հանգեցնում են խմելու կամ արդյունաբերական օգտագործման համար քաղցրահամ ջրերի պաշարների կրճատման: Կենցաղային և արդյունաբերական կեղտաջրերը աղտոտում են գետերն ու սպառնում էկոհամակարգերին: Մյուս կողմից, եթե ջուրը մնա գետում՝ ձկներն ու էկոհամակարգերը պահպանելու համար, ապա հնարավոր կլինի ավելի քիչ ջուր վերցնել մշակաբույսեր աճեցնելու համար: Կան բազում օրինակներ, որոնք ապացուցում են այն հիմնական միտքը, թե սահմանափակ ջրային ռեսուրսները չկարգավորված օգտագործելը շռայլություն է, հետևաբար ոչ կայուն:

Համապարփակ կառավարում նշանակում է, որ ջրային ռեսուրսների բոլոր օգտագործումները դիտարկվում են համատեղ: Ջրային ռեսուրսների բաշխման ու կառավարման որոշումները հաշվի են առնում ամեն մի ջրօգտագործման ազդեցությունները մյուս օգտագործումների վրա: Միաժամանակ հաշվի են առնվում համընդհանուր սոցիալական և տնտեսական նպատակներն ու կայուն զարգացման ձեռքբերումը: Սա նաև բոլոր բնագավառների նկատմամբ հետևողական քաղաքականության երաշխիք է: Կարելի է նկատել, որ ՋՈՒՐԿ հիմնական գաղափարն ընդլայնվել է՝ որոշումներ կայացնելու գործընթացին բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությունն ապահովելու համար: Տարբեր ջրօգտագործողների խմբեր (ֆերմերներ, համայնքներ, բնապահպաններ և այլն) կարող են ազդել ջրային ռեսուրսների կառավարման ու զարգացման ռազմավարությունների վրա: Դա հավելյալ շահեկան է, քանի որ տեղեկացված ջրօգտագործողները կարգավորման ու հսկողության կենտրոնական մարմիններից ավելի արդյունավետ են իրականացնում տեղական ինքնակառավարումը՝ լուծելով այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են ջրամատակարարումն ու ջրհավաք ավազանի պահպանությունը:

Կառավարումն օգտագործվում է ամենալայն իմաստով: Այն շեշտում է, որ պետք է կենտրոնանալ ոչ միայն ջրային ռեսուրսները զարգացնելու վրա, այլև գիտակցաբար կառավարել ջրային տնտեսության զարգացումն այնպես, որ երաշխավորվի ապագա սերունդների՝ ջրային ռեսուրսները երկարաժամկետ և կայուն օգտագործելը:

<u>Ուստի ջրային ռեսուրսների համապարփակ կառավարումը անընդհատ, համակարգված գործընթաց է, որը սոցիալական, տնտեսական և բնապահպանական նպատակների համատեքստում ապահովում է ջրային ռեսուրսների կայուն զարգացում և բաշխում, ջրօգտագործման մոնիթորինգ:</u>

Կարող են տրվել ավելի շատ օրինակներ, որոնցում համապարփակեցումը օգտակար կլինի:

Այն հակասում է շատ երկրներում կիրառվող բնագավառային մոտեցմանը: Երբ խմելու ջրի մատակարարման համար պատասխանատու է մեկ գործակալություն, ոռոգման ջրամատակարարման համար՝ մեկ ուրիշը, իսկ շրջակա միջավայրի պահպանության համար՝ երրորդ գործակալությունը, միջբնագավառային կապերի բացակայությունը հանգեցնում է ջրային ռեսուրսների չհամաձայնեցված զարգացման ու կառավարման՝ նպաստելով հակամարտությունների, կորուստների, շռայլումների և անկայուն համակարգերի:

1.2. ԻՆՉՈՒ՞ ՋՌՀԿ

Ջուրը կենսական նշանակություն ունի մարդկանց կյանքի, առողջության ու արժանապատիվ ապրելակերպի համար և մարդկության զարգացման հիմնարար ռեսուրս է: Քաղցրահամ ջրի համաշխարհային պաշարների վրա ճնշումը տարեցտարի աճում է: Միևնույն ժամանակ շատերը իրենց հիմնական կարիքները բավարարելու համար դեռևս չեն օգտվում համապատասխան ջրամատակարարման համակարգերից: Բնակչության աճը, տնտեսական գործունեության զարգացումը և կենսապայմանների բարելավված ստանդարտները հանգեցնում են քաղցրահամ ջրերի սահմանափակ ռեսուրսների համար մրցակցության աճի և հակամարտությունների: Նշենք մի քանի պատճառ, թե ինչու են շատերը համոզված, որ աշխարհն ընդհարվելու է սպասվելիք ջրային ճգնաժամին:

Շրջանակ 1. Ջրի ճգնաժամ. փաստեր

- Համընդհանուր ջրի միայն 0.4%-ն է մատչելի մարդկանց:
- Այսօր ավելի քան երկու միլիարդ մարդ ավելի քան 40 երկրներում տուժում է ջրի պակասից:
- 263 գետավազաններ համատեղ օգտագործվում են երկու կամ ավելի երկրների կողմից:
- 2 միլիոն/տոննա/օր մարդկային արտաթորանք լցվում է ջրային ուղիներ:
- Զարգացող երկրների բնակչության կեսը շփվում է ջրի աղտոտված աղբյուրների, ինչը ավելացնում է հիվանդությունների դեպքերի քանակը:
- Բնական աղետների 90%-ը 1990-ականներին պայմանավորված էին ջրով:
- Մարդկանց թվի՝ վեցից ինը միլիարդի աճը հաջորդ 50 տարիների ընթացքում կլինի ջրային ռեսուրսների կառավարման հիմնական շարժիչ ուժը:

- Բնակչության աճի, տնտեսական գործունեության և ջրօգտագործողների՝ ջրի համար մրցակցության ակտիվացման պատճառով հզորանում է մարդածին ճնշումը ջրային ռեսուրսների վրա:
- Ջրառները երկու անգամ ավելի արագ են աճել, քան բնակչությունը, և ներկայումս աշխարհի բնակչության մեկ երրորդն ապրում է միջինից բարձր ջրային սթրեսով երկրներում:
- Աղտոտումը մեծացնում է ջրի պակասը՝ նվազեցնելով ստորին հոսքերում ջրի օգտագործման հնարավորությունը:
- Ջրային ռեսուրսների կառավարման թերությունները, առկա աղբյուրները ավելի լավ կառավարելու փոխարեն նոր աղբյուրներ օգտագործելու վրա կենտրոնանալը և ջրային ռեսուրսների կառավարման՝ «վերևից-ներքև» բնագավառային մոտեցումները հանգեցնում են ռեսուրսի ոչ համապարփակ զարգացման ու կառավարման:
- Բուռն զարգացումը հանգեցնում է շրջակա միջավայրի վրա ավելի մեծ ազդեցությունների:
- Կլիմայի տատանումների ու փոփոխությունների մտահոգությունները պահանջում են ջրային ռեսուրսների կառավարման բարելավում, որպեսզի հնարավոր լինի հաղթահարելու ավելի ուժգին հեղեղներ ու երաշտներ:

1.3. ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1.3.1. Ջրի կառավարման ճգնաժամ

Ջրային ռեսուրսները կառավարելիս նախկինում գերակայել և դեռևս գերակշռում են բնագավառային մոտեցումները: Սա հանգեցնում է ռեսուրսի չհամաձայնեցված և մասնատված զարգացման ու կառավարման: Բացի այդ ջրի կառավարումը սովորաբար իրականացվում է «վերևից-ներքև» սկզբունքով և գտնվում այնպիսի հիմնարկությունների ձեռքում, որոնց օրինականությունն ու արդյունավետությունը կասկածելի են: Այսպիսով, անարդյունավետ կառավարումը սրում է սպառվող ռեսուրսի համար հարաճուն մրցակցությունը: ՋՌՀԿ-ն խթանում է տնտեսության առանձին բնագավառների համագործակցությունը՝ խրախուսելով նաև շահագրգիռ կողմերի մասնակցություն, գործընթացի թափանցիկություն և ծախսերի առումով արդյունավետ տեղական կառավարում:

1.3.2. Ջրի պահպանումը մարդկանց համար

Չնայած մեծ թվով երկրներ ջրի՝ մարդկանց հիմնական պահանջների բավարարումը դիտում են առաջնահերթ խնդիր, այնուամենայնիվ երկրագնդի բնակչության 1/5-ը զրկված է անվտանգ խմելու ջրից, իսկ կեսը՝ կոյուղուց: Զարգացող երկրներում այս ծառայությունների բացակայությունը հիմնականում բացասաբար է ազդում բնակչության ամենաչքավոր խավի վրա: Այդ երկրներում քաղաքային և գյուղական տարածքներում ջրամատակարարման և ջրահեռացման կարիքները բավարարելը մոտակա տարիների ամենալուրջ մարտահրավերներից է: Մինչև 2015թ. ջրի և ջրահեռացման կարիք ունեցող բնակչության թիվը կեսով կրճատելը Հազարամյակի զարգացման նպատակներից[1] է: Այն կպահանջի ներդրումային գերակայությունների էական վերակողմնորոշում, ինչին շատ ավելի հեշտ է հասնել այն երկրներում, որտեղ իրականացվում է ՁՈՀԿ:

1.3.3. Ջրի պահպանումը սննդի արտադրության համար

Բնակչության աճի կանխատեսումները ցույց են տալիս, որ հաջորդ 25 տարիներին սնունդ կպահանջվի 2-3 միլիարդով ավելի մարդկանց: Ջուրը գնալով ավելի շատ է դիտվում սննդի արտադրությունը հիմնականում սահմանափակող գործոն, որը համարժեք է (եթե ոչ առավել կարևոր) հողի պակասին: Ոռոգվող գյուղատնտեսությունն արդեն օգտագործում է ամբողջ ջրառների 70%-ը (ամբողջ անվերադարձ ջրօգտագործման ավելի քան 90%): Եթե անգամ ընդունենք, որ հաջորդ 25 տարիներին ոռոգման ջրի պահանջը կավելանա 15-20%-ով (ինչն ամենայն հավանականությամբ ցածր ցուցանիշ է), ապա հնարավոր է, որ ջրի բաշխման լուրջ հակամարտություններ առաջանան ոռոգվող գյուղատնտեսության, տնտեսության տարբեր բնագավառների և էկոհամակարգերի միջև: ՁՈՀԿ-ն առաջարկում է ավելի արդյունավետ ջրօգտագործման, ջրամատակարարման, պահանջարկի կառավարման, բոլոր ջրօգտագործողների միջև ջուրը արդարացի բաշխելու, ինչպես նաև կեղտաջրի մաքրման և վերաշրջանառության հեռանկարներ՝ ստեղծելով ջրային ռեսուրսների լրացուցիչ քանակ:

1.3.4. Կենսական նշանակության էկոհամակարգերի պահպանություն

Ցամաքային էկոհամակարգերը, որոնք գտնվում են ավազանի վերին հոսքերում, կարևոր են անձրևաջրի ինֆիլտրացիան կարգավորելու, ստորերկրյա ջրերի վերականգնման և գետային հոսքի ռեժիմների համար: Ջրային էկոհամակարգերը ապահովում են տարբեր տնտեսական օգուտներ՝ ներառյալ այնպիսիք, ինչպիսիք են փայտանյութը, վառելափայտը և դեղաբույսերը, այլև վայրի կենդանիների կենսամիջավայր և ձվադրավայրեր են:

Ջրային էկոհամակարգերը կախված են գետային հոսքի սեզոնայնությունից, ջրի ծախսից և մակարդակի տատանումներից, հոսքի ռեժիմից, և ջրի որակը վատանալու դեպքում առկա է դրանց ոչնչացման վտանգ: Հողային և ջրային ռեսուրսների կառավարումը պետք է ապահովի կենսական նշանակության էկոհամակարգերի պահպանումը, հաշվի առնի զարգացման ու կառավարման որոշումներ կայացնելիս այլ բնական ռեսուրսների վրա բացասական ազդեցությունները և, որտեղ հնարավոր է, դրանց նվազեցումը: ՁՈՀԿ-ն կարող է նպաստել ջրի «բնապահպանական պաշարի» պահպանմանը՝ որպես մարդկային զարգացման համար էկոհամակարգերի պահպանությանը համարժեք նշանակությամբ բաղադրիչ:

---

[1] Հազարամյակի զարգացման նպատակները չքավորության դեմ պայքարի և կենսամակարդակի բարձրացման հնչեղ ծրագիր է, որի մասին համաշխարհային առաջնորդները պայմանավորվել են 2000թ.-ի սեպտեմբերին տեղի ունեցած «Հազարամյակի գագաթաժողովում»: Ամեն մի նպատակի համար որոշվել են մեկ կամ ավելի խնդիրներ, որոնց մեծ մասը պետք է լուծվի մինչև 2015 թվականը՝ սկզբնաժամկետ ընդունելով 1990թ.-ը: Ավելի շատ տեղեկություններ կարելի է ստանալ ՄԱԿ-ի Զարգացման գործակալության հետևյալ կայքից՝ http://www.undp.org/mdg/:

1.3.5. Գենդերային անհավասարություններ

Ջրային ռեսուրսների պաշտոնական կառավարման մեջ գերիշխում են տղամարդիկ: Չնայած պաշտոնավարող կանանց թիվն աճում է, սակայն նրանց ներկայացուցչությունը ջրային բնագավառի կառույցներում դեռևս չափազանց ցածր է: Սա կարևոր հարց է, քանի որ ջրային ռեսուրսների կառավարման եղանակը կանանց և տղամարդկանց վրա տարբերակված է ներգործում: Որպես ընտանիքի առողջության պահապաններ և կենցաղային ջրի ու սննդի ապահովողներ՝ կանայք կենցաղային ջրամատակարարման ու ջրահեռացման առաջնային շահագրգիռ կողմ են: Չնայած դրան՝ ջրամատակարարման և ջրահեռացման տեխնոլոգիաներին, ջրառի կետերին և շահագործման ու պահպանման համակարգերին վերաբերող որոշումները հիմնականում կայացնում են տղամարդիկ: Բարի մտադրություններ ունեցող մի ՀԿ՝ «Կանայք և ջրային միությունը», հաջող օրինակ է բերում. այն օգնում էր գյուղացիներին ջրի շիթով մաքրվող զուգարաններ տեղադրելու՝ ջրահեռացման ու հիգիենայի պայմանները բարելավելու համար առանց կանանց նախապես հարցնելու այն լրացուցիչ երկու լիտր ջրի մասին, որ նրանք ստիպված պետք է լինեն բերելու հեռու աղբյուրներից ամեն շիթի համար:

ՋՌՀԿ փիլիսոփայության կարևոր տարրն այն է, որ ջրօգտագործողները՝ հարուստ թե աղքատ, տղամարդ թե կին, հնարավորություն ունենան ազդելու իրենց առօրյային վերաբերող որոշումներ ընդունելու գործընթացի վրա:

1.4. ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

1992թ. Դուբլինում[2] կայացած հանդիպման արդյունքում ընդունվեցին չորս սկզբունքներ, որոնք ջրային բնագավառի հետագա բարեփոխումների հիմք են:

Սկզբունք 1. *Քաղցրահամ ջուրը սպառվող և խոցելի ռեսուրս է, կյանքի պահպանման, զարգացման և շրջակա միջավայրի համար կենսական կարևորություն:*

Քաղցրահամ ջրի սահմանափակ ռեսուրս լինելու գաղափարը բխում է նրանից, որ ջրաբանական շրջապտույտը որոշակի ժամանակահատվածում գոյացնում է ջրի ամրագրված քանակություն: Այս համընդհանուր քանակությունը չի կարող զգալիորեն փոխվել մարդկային գործողություններով, չնայած այն կարող է և հաճախ սպառվում է մարդկանց կողմից ջրային ռեսուրսների աղտոտման պատճառով: Քաղցրահամ ջրի պաշարը բնական ռեսուրս է, որը պետք է պահպանվի՝ միաժամանակ երաշխավորելով դրանով անհրաժեշտ ծառայություններ մատուցելը: Այս սկզբունքնով ջուր պահանջվում է տարբեր նպատակների, գործառույթների և ծառայությունների համար, ուստի կառավարումը պետք է լինի ամբողջական (համապարփակ) և հաշվի առնի ռեսուրսի պահանջարկներն ու վտանգները:

Ջրային ռեսուրսների կառավարման համապարփակ մոտեցումը թելադրում է մարդկային այլևայլ գործունեությունների փոխհամաձայնեցում, որոնք որոշում են ջրի պահանջարկը, հողօգտագործումները և հոսքաջրի ծավալները: Այս սկզբունքով ջրհավաք տարածքը կամ գետավազանը ջրային ռեսուրսների կառավարման տրամաբանական միավոր է:

---

[2] «Ջուր և շրջակա միջավայր» թեմայով միջազգային կոնֆերանս Դուբլինում. Իռլանդիա, հունվար 1992թ.:

Սկզբունք 2. *Ջրային ռեսուրսների կառավարումն ու օգտագործումը պետք է հիմնվեն այնպիսի մոտեցումների վրա, որոնք նախատեսում են բոլոր մակարդակներում ջրօգտագործողների, նախագծողների և որոշումներ կայացնողների մասնակցություն:*

Ջուրը ռեսուրս է, որը շահագրգռում է բոլորին : Շահագրգիռ կողմերի իրական մասնակցությունն է առկա միայն այն դեպքում, եթե նրանք որոշումներ կայացնելու գործընթացի մի մասն են: Մասնակցության ձևը կախված է ինչպես ջրի կառավարման կամ ներդրումների մասին այս կամ այն որոշումների շրջանակներից, այնպես էլ այդ որոշումը ընդունելու տնտեսական իրավիճակից: Մասնակցային մոտեցումը երկարաժամկետ համաձայնություն և ընդհանուր պայմանավորվածություն ձեռք բերելու լավագույն միջոց է: Մասնակցությունն նշանակում է պատասխանատվություն ստանձնել, ճանաչել բնագավառային գործողությունների ազդեցությունը այլ ջրօգտագործողների և ջրային էկոհամակարգերի վրա, ընդունել ջրօգտագործման արդյունավետությունը բարելավելու և ռեսուրսի կայուն զարգացման անհրաժեշտությունը: Քանի որ մասնակցությունը միշտ չէ, որ հանգեցնում է փոխզիջումների, ուստի ընդունելի են նաև դատական գործընթացները կամ հակամարտությունները լուծելու այլ մեխանիզմներ:

Կառավարությունները պարտավոր են օգնել հատկապես կանանց և այլ մեկուսացված սոցիալական խմբերի շրջաններում ստեղծելու մասնակցության հնարավորություն ու ունակություն: Հարկ է ընդունել, որ պարզապես մասնակցության հնարավորություններ ստեղծելը ոչինչ չի տա ներկայումս անշահավետ վիճակում գտնվող խմբերին, քանի դեռ նրանց մասնակցելու կարողությունները չեն հզորացվել:

Սկզբունք 3. *Կանայք կարևոր դեր են խաղում ջրային ռեսուրսների օգտագործման, կառավարման և պահպանման գործում:*

Կանանց՝ որպես կենցաղում ջուր ապահովողների և օգտագործողների, ինչպես նաև կենսամիջավայրի պահապանների կենտրոնական դերը հազվադեպ է արտացոլվել ջրային ռեսուրսների զարգացման և կառավարման ինստիտուցիոնալ կառույցներում: Ընդունված է, որ կանայք կենտրոնական դեր են խաղում ջրի կենցաղային, իսկ շատ դեպքերում՝ նաև գյուղատնտեսական օգտագործման մեջ: Սակայն կանայք տղամարդկանցից ավելի քիչ ազդեցիկ դեր ունեն ջրային ռեսուրսները կառավարելիս, խնդիրները վերլուծելիս և որոշումներ կայացնելիս:

ՋՌՀԿ-ը պահանջում է ընդունել կնոջ դերն այդ գործընթացում: Որոշումներ կայացնելու բոլոր մակարդակներում կանանց լիարժեք և արդյունավետ մասնակցության դրույթներ մշակելիս պետք է հաշվի առնվեն այն մոտեցումները, որոնցով տարբեր հասարակական ֆորմացիաներ բաշխում են սոցիալական, տնտեսական և մշակութային դերերը տղամարդկանց և կանանց միջև: Գոյություն ունի սեռային իրավահավասարության և ջրի կայուն կառավարման կարևոր փոխկապակցվածություն: Կանանց և տղամարդկանց՝ ջրային ռեսուրսների կառավարման բոլոր մակարդակներում հավասարապես ընդգրկելը հնարավորություն կընձեռի արագացնելու կայունության ձեռքբերումը: Ջուրը համապարփակ և կայուն կառավարելը զգալիորեն կնպաստի սեռերի իրավահավասարությանը՝ բարելավելով կանանց և տղամարդկանց հիմնական կարիքները բավարարելու նպատակով ջրի և ջրին առնչվող ծառայությունների մատչելիությունը:

Սկզբունք 4. *Ջրօգտագործման բոլոր մրցակցային բնագավառներում ջուրն ունի տնտեսական արժեք և պետք է դիտարկվի որպես տնտեսական ապրանք:*

Այս սկզբունքի համաձայն՝ նախ պետք է ընդունվի համապատասխան գնով մաքուր ջուր և նորմալ սանիտարական պայմաններ ունենալու մարդու հիմնարար իրավունքը: Ջուրը որպես տնտեսական ապրանք կառավարելը կարևոր է այնպիսի սոցիալական նպատակների հասնելու համար, ինչպիսիք են արդյունավետ և արդարացի օգտագործումը, ջրային ռեսուրսների պահպանումը և ջուրը խնայողաբար օգտագործելու խթանումը:

Ջուրն արժեքավոր է և՛ որպես տնտեսական, և՛ որպես սոցիալական ապրանք: Ջրային ռեսուրսների կառավարման մեջ շատ անհաջողություններ կարող են բացատրվել այն հանգամանքով, որ չի ընդունվել ջրի իրական ամբողջական արժեքը:

Արժեքն ու վճարը երկու տարբեր հասկացություններ են, և հստակ պետք է տարանջատվեն: Ջրի արժեքը այլընտրանքային օգտագործումների ժամանակ կարևոր է՝ ջուրը որպես սակավ ռեսուրս արդյունավետ բաշխելու համար: Ջրի արժեքն այս դեպքում թե՛ կարգավորման, թե՛ տնտեսական միջոց է: Ջրի վճարը (կամ չվճարելը) կիրառվում է որպես տնտեսական միջոց՝ անապահով խմբերին աջակցելու, ջրի պահպանման և արդյունավետ ջրօգտագործման վարքագծի վրա ազդելու, պահանջարկը կառավարելու խթաններ ապահովելու, ծախսածածկումն ու լրացուցիչ ծառայությունների համար առանձին սպառողների վճարելու պատրաստակամությունն ապահովելու համար:

Ջրին՝ որպես տնտեսական ապրանքի վերաբերվելը կարևոր է ջրօգտագործող մեկ կամ տարբեր բնագավառների շրջանակներում տարբեր օգտագործողների միջև ջուրը բաշխելու որոշումներ կայացնելիս: Սա մասնավորապես կարևոր է, երբ մատակարարման ծավալների ավելացումն այլևս անհնար է:

1.5. ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ. ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՕԳՈՒՏՆԵՐ

1.5.1. Ազդեցություններ

Ընդհանուր առմամբ ջրօգտագործումներն իրականացվում են ի շահ հասարակության, սակայն դրանցից շատերն ունեն նաև բացասական ազդեցություններ: Այդ ազդեցությունները կարող են ավելի խորանալ կառավարման վատ մեթոդներ կիրառելու կամ տեղերում ջրային տնտեսության կառավարման ռեժիմները չկարգավորելու պատճառով:

Ամեն մի երկիր ունի զարգացման գերակա և տնտեսական նպատակներ, որոնք սահմանվում են՝ ելնելով բնապահպանական, սոցիալական և քաղաքական իրավիճակներից: Ջրօգտագործման ամեն ոլորտում սովորաբար ծագում են խնդիրներ և սահմանափակումներ, սակայն այս հարցերը համապարփակ լուծելու պատրաստակամությունն ու կարողությունը պայմանավորված են ջրային ռեսուրսների կառավարման կառույցով: Ցանկացած երկրում ՋՌՀԿ-ն ներդնելու առաջին և ամենախոշոր քայլերից է ջրի տարբեր աղբյուրների, ինչպես նաև տարբեր ջրօգտագործումների փոխկապակցվածությունը ընդունելը:

Աղյուսակ 1 . Ջրօգտագործման բնագավառների ազդեցություններ ջրային ռեսուրսների վրա

	Դրական ազդեցություններ	Բացասական ազդեցություններ
Շրջակա միջավայր	• Մաքրում • Պահպանություն • Ջրաբանական շրջապտույտ	
Գյուղատնտեսություն	• Հետադարձ հոսքեր • Ինֆիլտրացիայի աճ • էրոզիայի նվազեցում • Ստորերկրյա ջրերի վերականգնում • Սննդարար նյութերի օգտահանում	• Սպառում • Աղտոտում • Աղակալում • Ճահճակալում • էրոզիա
Ջրամատակարարում և ջրահեռացում	• Սննդարար նյութերի օգտահանում	• Ջրի մաքրման բարձր մակարդակի պահանջ • Մակերևութային և ստորերկրյա ջրերի աղտոտում

1.5.2. ՋՌՀԿ օգուտներ

Բնապահպանական օգուտներ

- էկոհամակարգերը կարող են շահել ջրի կառավարման համապարփակ մոտեցումից, քանի որ այս դեպքում ջուրը բաշխելու քննարկումների ժամանակ հնարավորություն է ստեղծվում նաև էկոհամակարգերի կարիքները պարզաբանելու: Ներկայումս այս կարիքները հաճախ չեն էլ հիշատակվում բանակցային սեղանի շուրջը:
- ՋՌՀԿ-ն կարող է աջակցել բնագավառին՝ էկոհամակարգերի կարիքների և դրանցից ստացվելիք հնարավոր օգուտների մասին այլ օգտագործողների շրջանում իրազեկման մակարդակը բարելավելով: Հաճախ էկոհամակարգերի կարիքները թերագնահատվում են և չեն ընդգրկվում պլանավորելու ու որոշումներ կայացնելու գործընթացում:
- էկոհամակարգային մոտեցումը ՋՌՀԿ-ի համար ապահովում է մի նոր շրջանակ, որն ավելի շատ ուշադրությունը կենտրոնացնում է ջրի կառավարման համակարգային մոտեցման վրա. վերին ջրհավաք ավազանների պահպանություն (օրինակ՝ անտառային զանգվածների վերականգնում, արդյունավետ հողագործություն, հողի էրոզիայի դեմ պայքար), աղտոտման հսկողություն (օրինակ՝ աղտոտման կենտրոնացված աղբյուրների նվազեցում, ցրված աղբյուրների միավորում, ստորերկրյա ջրերի պահպանություն) և բնապահպանական թողքեր: էկոհամակարգային մոտեցումը ենթաբնագավառային մրցակցային հեռանկարի այլընտրանք է, ինչը կարող է միավորել շահագրգիռ կողմերին՝ բոլորին ընդունելի հեռահար նպատակներ և համատեղ գործունեություն մշակելիս:

Գյուղատնտեսության օգուտներ

- Որպես խոշոր ջրօգտագործող և մակերևութային ու ստորերկրյա ջրերի ցրված աղտոտման հիմնական աղբյուր՝ գյուղատնտեսությունն ունի բացասական դեր: Հաշվի առնելով գյուղատնտեսական արտադրանքի փոքր հավելյալ արժեքը՝ հաճախ հատկապես ջրի սակավության պայմաններում ջուրը գյուղատնտեսությունից վերցնում և վերաբաշխում են այլ ջրօգտագործողների միջև: Սակայն գյուղատնտեսության համար ջրի հատկացումները չմտածված նվազեցնելը կարող է տնտեսական և սոցիալական հետևանքներ ունենալ: ՋՌՀԿ-ի դեպքում պլանավորողներին խրախուսում են բնագավառային տնտեսությունների սահմաններից դուրս ազդեցությունները հաշվառելու, նաև զբաղվածության, շրջակա միջավայրի վրա և սոցիալական արդարության հիմքով ջրային ռեսուրսների կառավարման որոշումների ազդեցությունները հաշվի առնելու համար:
- Որոշումներ կայացնելու գործընթացում ընդգրկված բոլոր բնագավառները և բոլոր շահագրգիռ կողմերը ՋՌՀԿ-ն ջրային ռեսուրսների բաշխման տարբեր որոշումներ կայացնելիս ի զորու են արտացոլելու հասարակական ջրի «հավաքական» արժեքը՝ որպես մի ամբողջություն: Սա նշանակում է, որ մարդկանց առողջության պահպանության, չքավորության նվազեցման և գենդերային հավասարության գործընթացում սննդի արտադրության ներդրման արժեքների գնահատումը, օրինակ, կարող է բացառել ամեն մի խորանարդ մետր ջրից շահույթի նորմերի զուտ տնտեսական համեմատության մոտեցումները: ՋՌՀԿ-ն կարող է հավասարապես հաշվի առնել ինչպես գյուղատնտեսությունից վերադարձված հետադարձ հոսքերի՝ այլ բնագավառներում կրկնակի օգտագործման ներուժը, այնպես էլ քաղաքային ու արդյունաբերական կեղտաջրերի կրկնակի օգտագործման գյուղատնտեսության հնարավորությունները:
- ՋՌՀԿ-ն պահանջում է այնպիսի համապարփակ կառավարում, որ ջրային, հողային և դրանց առնչվող այլ ռեսուրսներ կայուն օգտագործվեն: Գյուղատնտեսության բնագավառի համար ՋՌՀԿ-ն ձգտում է մեծացնել ջրի արտադրողականությունը (այսինքն՝ ամեն կաթիլի դիմաց ավելի շատ բերք) այն սահմանափակումների շրջանակներում, որոնք պարտադրվում են առանձին շրջանի կամ երկրի կողմից՝ ելնելով տնտեսական, սոցիալական և էկոլոգիական պայմաններից:
-

Ջրամատակարարման և ջրահեռացման օգուտներ

- Պատշաճ իրականացվող ՋՌՀԿ-ն նախ և առաջ ամբողջ աշխարհի չքավոր բնակչությունը կապահովի անվտանգ ջրով, ինչպես նաև կկրճատի անվտանգ խմելու ջուր չունեցող բնակչության թիվը: ՋՌՀԿ քաղաքականության իրականացումը ապահովում է կենցաղային ջրամատակարարման բարձր անվտանգություն, ինչպես նաև աղտոտման դեմ ավելի արդյունավետ պայքարելով ջրի մաքրման ծախսերի նվազեցում:
- Մարդու, հատկապես կանանց և չքավորների՝ կենցաղային և արտադրական նպատակներով ջրօգտագործման իրենց արդարացի բաժինն ունենալու իրավունքի ընդունումը անխուսափելիորեն հանգեցնում է այդ խմբերի պատշաճ ներկայացուցչության անհրաժեշտությանը ջրային ռեսուրսները բաշխելու որոշումներ կայացնող մարմիններում:
- Համապարփակ կառավարման և արդյունավետ օգտագործման համար ելակետ պետք է լինեն այն խթանիչները, որոնք կստիպեն, որպեսզի ամեն մի բնագավառ ձգտի ապահովելու ջրային ռեսուրսների մաքրում, վերաշրջանառություն, կրկնակի օգտագործում և շռայլումների նվազեցում: Զարգացած արդյունաբերությամբ երկրներում աղտոտման՝ խստորեն պարտադրված բարձր վարձերը զգալիորեն բարձրացրել են ջրօգտագործման արդյունավետությունը, ինչը շահավետ է կենցաղային ջրամատակարարումներին և շրջակա միջավայրին:
- Անցյալում ջրահեռացման համակարգերը հաճախ կենտրոնանում էին մարդկային բնակավայրերից կեղտաջուրը հեռացնելու վրա՝ մաքուր և առողջ պահելով բնակավայրերի տարածքները: Սակայն կեղտաջրերը պարզապես փոխադրելով այլ վայրեր՝ ստեղծվում էր կեղտաջրի՝ հաճախ վնասակար էկոլոգիական հետևանքներով օգտահանման խնդիր: ՋՌՀԿ-ի ներդնումը հնարավորություն կընձեռի կիրառելու ջրահեռացման այնպիսի լուծումներ, որոնք կնպատակաուղղվեն կեղտաջուր առաջացնող

օգտագործումները նվազագույնի հասցնելու՝ կրճատելով կեղտաջրի արտադրությունը, այլև լուծելով կեղտաջրի՝ արտադրվող վայրերին հնարավորինս մոտ մաքրման հիմնախնդիրները:

- Տեղական մակարդակով ջրային ռեսուրսների կառավարման բարելավված միասնականացումը կարող է հանգեցնել տնային տնտեսությունները ջրամատակարարումով ապահովելու ծախսերի զգալի նվազեցման, եթե, օրինակ, հենց սկզբից տնային տնտեսությունների ջրամատակարարման տնային բաղադրիչի հետ նախագծվեն մեծ քանակով ոռոգման համակարգեր:

1.6. ՋՌՀԿ-Ի ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

ՋՌՀԿ-ի փաստարկները հզոր են և անվիճելի: Երկրների մեծ մասի հիմնախնդիրը տարբեր բնագավառներ առանձին զարգացնելու երկարաձիգ պատմություն է: Գլոբալ ջրային համագործակցությունը ՋՌՀԿ-ն սահմանում է այսպես.

> *«ՋՌՀԿ-ն մարտահրավեր է ավանդական պրակտիկաներին, վերաբերմունքներին ու մասնագիտական անտարակուսելի փաստերին: Այն հակադրվում է արմատացած բնագավառային շահերին և պահանջում, որ ջրային ռեսուրսը կառավարվի համապարփակ ի շահ բոլորի: Ոչ ոք չի համարում, որ ՋՌՀԿ մարտահրավերն ընդունելը հեշտ է լինելու, սակայն անհրաժեշտ է, որ ջրի հարաճուն ճգնաժամը կանխելու սկիզբը դրվի»:*

ՋՌՀԿ-ն նախ և առաջ փիլիսոփայություն է: Որպես այդպիսին՝ այն առաջարկում է գաղափարական շրջանակ, որի նպատակը ջրային ռեսուրսների կայուն կառավարումն ու զարգացումն է: Այն ընդամենը պահանջում է, որ մարդիկ փորձեն փոխել իրենց աշխատանքային գործունեությունը՝ ավելի լայնորեն նայելով շրջապատող միջավայրին և գիտակցելով, որ ոչինչ տեղի չի ունենում ուրիշների գործողություններից անկախ: Այն նաև ձգտում է ջրի կառավարման մեջ ներմուծել ապակենտրոնացված ժողովրդավարության մի տարր՝ շեշտելով շահագրգիռ կողմերի մասնակցությունը և հնարավոր ամենացածր մակարդակով որոշումներ կայացնելը:

Այս ամենը ենթադրում է փոփոխություններ, որոնք պարունակում են և՛ սպառնալիքներ, և՛ հնարավորություններ: Սպառնում են մարդկանց, իշխանությունների դիրքերին, նաև մասնագետների ինքնավստահությանը: ՋՌՀԿ-ն պահանջում է հիմնական սկզբունքների մշակում, որոնք հնարավորություն կընձեռեն հաճախ անգամ ակնհայտ հակասական մոտեցումներով բազմաթիվ շահագրգիռ կողմերի միասնաբար աշխատելու:

Գոյություն ունեցող կառուցվածքային և իրավական շրջանակների պատճառով ՋՌՀԿ-ն ամենայն հավանականությամբ, բարեփոխումներ կպահանջի ջրային ռեսուրսների պլանավորման և կառավարման բոլոր փուլերում:

Պահանջվում է **գործողությունների համընդհանուր պլան,** որը կպարունակի փոփոխություններ իրականացնելու մեթոդներ: Այդ պլանի կազմումը, ամենայն հավանականությամբ, պետք է սկսել ջրային ռեսուրսների կայուն կառավարման սկզբունքներ նկարագրող նոր ջրային ռազմավարություն մշակելուց:

Ռազմավարության գործնական կիրառումը հավանաբար կթելադրի օրենսդրական և կառուցվածքային բարեփոխումներ: Սա երկարատև գործընթաց է, ինչը պետք է զուգակցվի բարեփոխման ենթակա գործակալությունների և հասարակության ակտիվ խորհրդակցություններով: ՋՌՀԿ-ի ներդնումը կարելի է լավագույնս իրականացնել աստիճանաբար. որոշ փոփոխություններ կարող են անմիջապես լինել, իսկ որոշ փոփոխություններ նախապատրաստելու և կարողություններ ստեղծելու համար կպահանջվեն տարիներ:

Նկար 1 . ՋՌՀԿ-ն և բնագավառների կապը



1.6.1. Քաղաքական և իրավական շրջանակ

Հարաբերությունները փոփոխվում են, քանի որ պաշտոնյաները ավելի ու ավելի են գիտակցում ռեսուրսներն արդյունավետ կառավարելու անհրաժեշտությունը: Նրանք հասկանում են նաև, որ նոր ենթակառուցվածք ստեղծելիս պետք է հաշվի առնվեն բնապահպանական և սոցիալական ազդեցությունները, ինչպես նաև ծառայություն մատուցելու տեսանկյունից տնտեսապես կենսունակ համակարգերի անհրաժեշտությունը: Սակայն նրանք դեռևս կարող են սահմանափակվել նման փոփոխությունների քաղաքական ազդեցություններով: Ուստի ջրային քաղաքականությունը վերանայելը ակտիվ խորհրդակցություններ և քաղաքական պարտավորություն պահանջող գլխավոր քայլ է:

Ջրային օրենսդրությունը քաղաքականությունը վեր է ածում օրենքի և պետք է՝

- Պարզաբանի ջրօգտագործողների ու ջրամատակարարների լիազորություններն ու պատասխանատվությունները:
- Պարզաբանի պետության դերը այլ շահագրգիռ կողմերի նկատմամբ:
- Օրինականացնի ջրային ռեսուրսների բաշխման փոփոխություններ:
- Որոշի կառավարության ջրատնտեսական կազմակերպությունների և ջրօգտագործողների խմբերի իրավական կարգավիճակը:
- Երաշխավորի ռեսուրսը կայուն օգտագործելը:

Ջրային բնագավառի քաղաքականության մեջ ՋՌՀԿ-ի որոշ սկզբունքներ ընդգրկելը և քաղաքական աջակցություն ապահովելը կարող է բարդ խնդիր լինել, քանի որ հարկ կլինի կտրուկ որոշումներ կայացնելու: Ուստի զարմանալի չէ, որ հաճախ իրավական և կառուցվածքային հիմնական բարեփոխումները աջակցություն են ստանում միայն այն դեպքում, երբ ծագում են ջրի կառավարման լուրջ խնդիրներ:

1.6.2. Կառուցվածքային շրջանակ

Զարգացող երկրների կառավարությունները ջրային ռեսուրսների պլանավորումն ու կառավարումը բազմաթիվ պատճառներով համարում են կառավարության պատասխանատվության հիմնական մասը: Այս տեսակետը համապատասխանում է միջազգային մոտեցմանը, որով խրախուսվում է կառավարության՝ ծրագրերի կատարող լինելու փոխարեն որպես կարգավորող և օժանդակող օրգան հանդես գալը: Խնդիրը պատասխանատվության մակարդակի մասին փոխադարձ համաձայնություն ձեռք բերելն է, այսինքն՝ որ մասնավոր դեպքում է կառավարությունը դադարում պատասխանատվություն կրելուց կամ համագործակցող հարաբերություններ հաստատում ջրային ծառայությունների կառավարման ինքնավար մարմինների և կամ համայնքային ջրօգտագործող կազմակերպությունների հետ:

Ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման հայեցակարգը զուգակցվել է գետավազանը որպես ՋՌՀԿ-ի գործնական իրականացման տրամաբանական աշխարհագրական միավոր ընդունելու գաղափարով: Գետավազանը ապահովում է ռազմավարական պլանավորման շատ առավելություններ, մասնավորապես կառավարական բարձր մակարդակներում, թեև չպետք է թերագնահատվեն դժվարությունները: Ստորերկրյա ջրապարունակ շերտերը հաճախ հատում են ջրհավաք ավազանի սահմանները, և խնդիրներ են հարուցվում, քանի որ գետավազանները հազվադեպ են համընկնում գոյություն ունեցող վարչական տարածքներին կամ կառուցվածքներին:

ՋՌՀԿ-ն ներդնելու համար անհրաժեշտ են կառուցվածքային կարգավորումներ՝ ապահովելու՝

- Որոշումներ կայացնելու գործընթացում ընդգրկված շահագրգիռ միավորումների աշխատանքը, որին կներգրավվեն հասարակության բոլոր խավերը, և ապահովված կլինի գենդերային հավասարությունը:
- Ջրաբանական սահմանների վրա հիմնված ջրային ռեսուրսների կառավարումը:
- Ավազանային և ենթաավազանային մակարդակներով կազմակերպչական կառուցվածքները՝ հավանական դարձնելու հնարավոր ամենացածր մակարդակով որոշումներ կայացնելը:
- Տնտեսության տարբեր բնագավառներում ազգային ջրային ռեսուրսների օգտագործման հարցերում կառավարության համակարգումը:

ՕԳՏԱԿԱՐ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐ ԻՆՏԵՐՆԵՏԻՑ

- CAP-NET WEBPAGE
  - Cap net –ի ուսուցողական ձեռնարկ: http://www.cap-net.org/iwrm_tutorial/mainmenu.htm
- GWP WEBPAGE
  - ԳՋՀ Տպագրություններ: http://www.gwpforum.org/servlet/PSP?iNodeID=231&iFromNodeID=102
  - ԳՋՀ Գործիքների արկղ: www.gwpforum.org

ՀԱՐՑԵՐ

Ուսումնասիրելով ՋՌՀԿ հիմնական սկզբունքները՝ Դուք հավանաբար կկարողանաք գնահատել ՋՌՀԿ իրականացնելու իրավիճակը Ձեր երկրում: Ահա որոշ հարցեր, որոնց Դուք հավանաբար կցանկանաք պատասխանել.

- Ո՞րն է Ձեր երկրում ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման անցնելու անհրաժեշտության ապացույցը:
- Հաշվի առնելով Ձեր երկրում ջրային ռեսուրսների կառավարման կառուցվածքները՝ կառուցվածքային և իրավական ի՞նչ բարեփոխումներ են պահանջվում ՋՌՀԿ իրականացնելու համար:
- Արդյոք անհետաձգելի կարիք կա՞ ջրային ռեսուրսները համապարփակ կառավարելու, և ինչպե՞ս դա անել լավագույնս: Ի՞նչ օգուտներ կունենան տարբեր բնագավառներ:
- Ինչպիսի՞ տարբեր ազդեցությունների են ենթակա կանայք և տղամարդիկ Ձեր երկրում ջրային ռեսուրսների կառավարման փոփոխությունների դեպքում:

2. ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՊԼԱՆԱՎՈՐԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑ. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2.1. ԻՆՉՈՒ՞ ՋՌՀԿ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Ինչպես արդեն նշվել է, ջրային հիմնախնդիրները բազմաթիվ են, լուծումները՝ անհետաձգելի: Թերևս այնքան էլ հեշտ չէ իրականացնել այն լուծումները, որոնք պահանջում են հաշվի առնել այդ խնդիրների սոցիալական, տնտեսական և քաղաքական ազդակները և փոփոխությունները:

Ջրային ռեսուրսների կայուն կառավարում ու զարգացում ապահովելու համար ՋՌՀԿ մոտեցումների ներդրման պլանավորումը կարող է տարբեր լինել: Անհրաժեշտ է առաջին հերթին անդրադառնալ այնպիսի ջրատնտեսական հիմնախնդիրների, որոնք ազդում են հասարակության վրա՝ թելադրելով աստիճանաբար ՋՌՀԿ-ին անցնելու որոշակի գործողություններ: Այն փաստը, որ ջրային հիմնախնդիրները ջրի կառավարման ավելի խորը ճգնաժամի ազդակ են, հաճախ հանգեցնում է ջրային ռեսուրսների ավելի կայուն կառավարման երկարաժամկետ պլանավորման: Չքավորության նվազեցման և կայուն զարգացման գործընթացում ջուրը գլխավոր գործոն ընդունելը նույնպես ստիպում է, որ ջրի ազգային պլաններ մշակելիս հաշվի առնվի ջրային ռեսուրսների վիճակը:

2.2. Ի՞ՆՉ ԵՆՔ ԱԿՆԿԱԼՈՒՄ

Այս գործընթացի արդյունքը պետք է լինի Կառավարության հաստատած և իրականացվող ՋՌՀԿ պլանը: Գործընթացի ժամանակ շահագրգիռ կողմերն ու քաղաքական գործիչները առավել կտեղեկացվեն ջրային հարցերին, ջրային ռեսուրսների կայուն կառավարման ու զարգացման անցնելուն և դրանից ստացվող օգուտներին: Երկրի իրավիճակից կախված՝ պլանը կարող է ավելի կամ պակաս մանրամասն լինել, սակայն պետք է պարունակի երկարաժամկետ միջոցառումներ, որոնք կպահանջվեն՝ ապահովելու համար կայունության, սոցիալական արդարության և օգտագործման արդյունավետության շարունակականությունը:

2.3. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ

Ռազմավարական լինել նշանակում է փնտրել այնպիսի լուծումներ, որոնք վերացնում են ջրային հիմնախնդիրներ առաջանալու ոչ թե ախտանշանները, այլ պատճառները: Դա պահանջում է երկարաժամկետ հեռանկարներ:

Ջրի հիմնախնդիրների գործոններն ընբռնելը օգնում է մշակելու դրանց լուծման ընդհանուր հայեցակարգը և պարտավորեցնում կյանքի կոչել այդ լուծումները: Այդ իմաստով ռազմավարությունը ձևավորում է գործողությունների զարգացման երկարաժամկետ շրջանակ, ինչը հանգեցնում է ՋՌՀԿ սկզբունքներով ջրային ռեսուրսների կայուն օգտագործման:

Ջրային ռազմավարության մեկ այլ առանձնահատկություն է հակամարտությունները դիտարկելը: Ջրային ռեսուրսների կառավարումը գործընթաց է, որը բնութագրվում է մրցակցային և հակամարտող շահերի ու տեսակետների բախումով: Ջրային ռեսուրսների կառավարման համապարփակ մոտեցումը խթանում է երկխոսության, բանակցային ու մասնակցային մեխանիզմները: Ռազմավարության և դրան հաջորդող պլանավորման գործընթացում այս սկզբունքները կիրառելը ապահովում է որոշումներ կայացնելու թափանցիկություն, փոխզիջումների անհրաժեշտություն և պլաններն իրականացնելիս պարտավորությունների ստանձնում:

Շրջանակ 2 . ՋՌՀԿ պլանավորում նշանակում է՝

- Ջրային ռեսուրսների կառավարման միակ պատասխանատուն պետությունն է տեսակետից **անցում** այն տեսակետին, որ դա ամբողջ հասարակության պատասխանատվությունն է:
- Կենտրոնացված և վերահսկվող որոշումներ կայացնելուց **անցում** պատասխանատվությունների և հնարավորությունների տարանջատման, բանակցությունների թափանցիկության, համագործակցության ու համատեղ գործողությունների:
- Բնագավառային պլանավորումից **անցում** ջրային ռեսուրսների համակարգված կամ համապարփակ պլանավորման:

Ինչու՞ է պլանավորումը կարևոր Ձեզ համար:

2.4. ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆ

Պլանավորումը տրամաբանական գործընթաց է, որն առավել արդյունավետ է, երբ դիտարկվում է իբրև անընդմեջ շրջան, ինչպես ցույց է տրված Նկար 2-ում:

Նկար 2 . ՋՌՀԿ պլանի մշակման և կարգավորման շրջան



Պլանավորման շրջանը փուլերի տրամաբանական հերթագայություն է, որ անընդհատ ղեկավարվում և աջակցվում է կառավարմամբ և խորհրդատվություններով (տես Նկար 2-ը):

Ինչու՞ պետք է շրջան լինի և ոչ թե ուղիղ գիծ:

2.4.1. Պլանավորման նախաձեռնում (Նմուշ 3)

Պլանավորման գործընթաց սկսելու շարժիչ ուժ կարող են լինել ներքին և արտաքին ազդակները կամ էլ երկուսը միասին: Ջրային ռեսուրսների բարելավված կառավարման ու զարգացման համաձայնություն ձեռք բերելուն պես հարց է ծագում՝ ինչպես պետք է մշակել այդ միջոցառումները իրականացնելու պլան:
Սա էլ հենց այս դասընթացի նպատակն է:

ՋՌՀԿ պլանավորումը թելադրում է կառավարման խմբի ձևավորում, որը կկազմակերպի և կհամակարգի աշխատանքները և կապահովի շահառուների հետ պարբերական խորհրդակցություն: Կառավարության օժանդակությունն ստանալու համար մեկնարկային է կայուն զարգացման նպատակով ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման սկզբունքները հասկանալու պահը:

2.4.2. Աշխատանքների պլանավորում և շահառուների մասնակցություն (Նմուշ 4)

ՋՌՀԿ պլանավորումը պահանջում է հետագայում ջրային ռեսուրսների կայուն կառավարման լուրջ պարտավորությունների ստանձնում: Այն ենթադրում է թե՛ Կառավարության, թե՛ շահառուների քաղաքական կամք և մասնակցություն:

Շահառուների պարտավորություններ ստանձնելը անհրաժեշտություն է, քանի որ նրանք մեծապես ազդում են ջրի կառավարման վրա՝ իրենց միավորումներով և կամ իրենց վարքագիծը փոխելով: Ուստի պլանավորումը պահանջում է ճանաչել և համախմբել հաճախ հակադիր բազմապիսի նպատակներ ունեցող համապատասխան շահառուների:

Քաղաքական գործիչները ևս շահառուների մի խումբ են, քանի որ նրանք պատասխանատու են պլանի հաստատման համար և միաժամանակ հաշվետու են դրա հաջողության կամ անհաջողության համար: Այսպիսով՝

- գործընթացի կառավարումը,
- քաղաքական պարտավորությունները,
- շահառուների արդյունավետ մասնակցությունը և
- ՋՌՀԿ սկզբունքները հասկանալը

պլանավորման գործընթացի կարևոր պահերն են:

2.4.3. Ռազմավարական հեռահար նպատակ (Նմուշ 5)

Ջրի ազգային հեռահար նպատակն ընդգրկում է երկրի ջրային ռեսուրսների վիճակի, օգտագործման և կառավարման համընդհանուր ձգտումներն ու հույսերը: Այդ իմաստով ջրի ազգային հեռահար նպատակը ապահովում է ղեկավար սկզբունքներ և ջրային ռեսուրսներին առնչվող հետագա գործողությունների ուղեցույց՝ մասնավորապես ուղղորդելով պլանավորման գործընթացը:

Ի՞նչ նկատի ունենք ջրային ռեսուրսների կայուն կառավարում և օգտագործում ասելով:

Հեռահար նպատակը կարող է վերածվել կամ չվերածվել ազգային ջրային քաղաքականության, սակայն ակնկալվում է, որ ցանկացած դեպքում այն պետք է ուղղվի ջրային ռեսուրսների կայուն կառավարմանը:

2.4.4. Իրավիճակի վերլուծություն (Նմուշ 6)

Հեռահար նպատակի հասնելու անհրաժեշտ միջոցառումները որոշելու համար կարևոր է գիտակցել տիրող իրավիճակը: Շահառուների և տարբեր կառավարական կազմակերպությունների հետ խորհրդակցությունը կենսական կարևորություն է այս գործընթացի համար, քանի որ հնարավորություն է ընձեռում հասկանալու ջրային ռեսուրսների մատչելիությանն առնչվող մրցակցային կարիքներն ու նպատակները: Վերլուծության ընթացքում պարզաբանված ջրային հիմնախնդիրները, ջրի հեռահար նպատակին կամ ՋՌՀԿ սկզբունքներին համադրելը անմիջապես երևան է հանում անհրաժեշտ կամ հնարավոր լուծումներ:

Այս փուլը բացահայտում է ջրային ռեսուրսների կառավարման ուժեղ և թույլ կողմերը, ինչպես նաև մատնանշում այն տեսակետները, որոնց հարկ է անդրադառնալ՝ իրավիճակը բարելավելու և ջրի ազգային հեռահար նպատակին հասնելու համար: Իրավիճակի վերլուծության արդյունքում կարող են ձևակերպվել պարզաբանված հիմնախնդիրների լուծման, ինչպես նաև ազգային գերակայությունների ապահովման հարցեր:

2.4.5. Ջրի կառավարման ռազմավարություններ (Նմուշ 7)

Հնարավոր լուծումները մշակվում են հիմնախնդիրները բացահայտելու հետ միաժամանակ կամ անմիջապես հետո: Նման լուծումները պետք է վերլուծվեն՝ հաշվի առնելով դրանց առնչվող պահանջները, առավելություններն ու թերությունները, ինչպես նաև իրագործման հնարավորությունը:

ՋՌՀԿ պլանի խնդիրների սահմանումը կարևոր է այս փուլում, քանի որ հայտնի են հիմնախնդրի բարդության աստիճանը և հաղթահարվելիք խոչընդոտները: Ամեն մի խնդրի համար ընտրվում է ամենահամապատասխան ռազմավարություն, գնահատվում այն իրագործելու հնարավորությունը, ինչպես նաև կայուն կառավարման համընդհանուր նպատակի համապատասխանությունը: Քանի որ ջրային բնագավառը խրթին է, տեխնիկական և կառավարման միջոցառումների շրջանակը՝ ընդգրկուն, ապա արդեն իսկ այս փուլում պետք է պարզաբանվեն դրանց գերակա ոլորտները:

2.4.6. Մշակված և հաստատված ՋՌՀԿ պլան (Նմուշ 8)

ՋՌՀԿ պլանը կարող է մշակվել հեռահար նպատակի, իրավիճակի վերլուծության և ջրային ռեսուրսների ռազմավարության հիման վրա: Կարող են պահանջվել պլանի՝ ոչ միայն իրագործելի և իրատեսական գործունեությունների և ֆինանսավորում ստանալու, այլև որոշակի փոխզիջումների և կայացված որոշումների հարցերում քաղաքական գործիչների և շահառուների համաձայնությունը ստանալու մի քանի նախագծեր: **Կառավարության՝ պլանի հաստատումը** շատ կարևոր է ռեսուրսները կենտրոնացնելու և պլանն իրագործելու համար:

2.4.7. ՋՌՀԿ պլանի իրականացում և գնահատում

Այս հարցերը սույն ուսումնական նյութի քննարկման առարկա չեն: ՋՌՀԿ պլանի մշակումը կարևոր փուլ է, սակայն այն վերջնանպատակ չէ: Հաճախ պլանները չեն իրագործվում, և կարևոր է հասկանալ դրա հիմնական պատճառները ու խուսափել դրանցից:

- Գործընթացի քաղաքական աջակցության բացակայություն: Այս իրավիճակը սովորաբար ստեղծվում է գործընթացը արտաքին աղբյուրներից խթանելու կամ գործընթացի նախաձեռնմանը գլխավոր որոշում կայացնողներին չներգրավելու պատճառով:
- Կառավարությանն անմատչելի ռեսուրսի պահանջներով անիրատեսական պլանավորում:

- Անընդունելի պլաններ: Մեկ կամ ավելի ազդեցիկ խմբերի մերժած պլաններ՝ չհամապատասխանող խորհրդատվության կամ անիրատեսական փոխզիջումների ակնկալիքների պատճառներով: Չհամապատասխանող խորհրդատվությունը կենսական կարևորություն ունի ջրի այնպիսի հարցեր լուծելիս, որոնցում շոշափվում են տնտեսության կամ իշխանության շահերը :

Ջրային ռեսուրսների կայուն կառավարման ու զարգացման հասնելը երկարաժամկետ գործընթաց է, ուստի պլանը հարկ է դիտել որպես անընդմեջ թարմացվող՝ որոշակի պարբերական գնահատման ու ճշգրտման հնարավորություններով:

ՕԳՏԱԿԱՐ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐ ԻՆՏԵՐՆԵՏԻՑ

- Կայուն զարգացման ազգային ռազմավարություններ. Ռեսուրսների գիրք.
  - http://www.nssd.net/res_book.html#contents
- UNESCAP. Ջրային ռեսուրսների ռազմավարական պլանավորում և կառավարում.
  - http://www.unescap.org/esd/water/spm/

Վարժություն

Փոքր խմբերով քննարկել և կազմել պլանավորման շրջանի ամեն մի փուլի գործողությունները, որոնք Ձեր կարծիքով անհրաժեշտ են ձեր երկրին կամ տարածաշրջանին:



3. ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒՄ

3.1. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Այս բաժնում դիտարկվում են պլանավորման գործընթացը նախաձեռնելու և համակենտրոնացնելու հարցերը, ուստի այս փուլում ակնկալվում է.

- Ջրային ռեսուրսների բարելավված կառավարման համար Կառավարության՝ հետաքրքրության փոխարինում պարտավորությամբ և պլանը մշակող համապատասխան կառույցի ստեղծում:

Նկար 3. Ուժերը համակենտրոնացնելու փուլ. ուղղորդող ուժեր, արդյունքներ և գործունեություն



3.2. ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒՄ

ՋՌՀԿ պլանավորման գործընթացի նախաձեռնումը կարող է ընթանալ մի քանի ուղղություններով: Միջազգային մակարդակով «Կայուն զարգացում» թեմայով համաշխարհային գագաթաժողովում կառավարությունները համաձայնել են մինչև 2005թ. մշակել ջրային ռեսուրսների կայուն կառավարման ու զարգացման պլաններ: Այս նպատակին են հետամուտ միջազգային հանրությունը և դոնոր կազմակերպությունները: Արդյունքում ՋՌՀԿ պլաններ մշակելու շարժիչ ուժերը այս դեպքում կարող են լինել արտերկրի դոնոր և միջազգային կազմակերպությունները, որոնք այդ նպատակին հասնելու օժանդակություն են առաջարկում:

Երկրների մակարդակով շատ կառավարություններ տեղյակ են այն հիմնախնդիրներին, որոնք առկա են ջրային ոլորտում (ջրային ռեսուրսների աղտոտում, սակավություն, վթարներ, ջրօգտագործման համար մրցակցություն և այլն), և արդեն որոշվել են գերակա խնդիրները: Շատերը նաև ջրային ռազմավարության կամ ջրի հեռահար նպատակ մշակելու առաջին քայլերն են արել և կամ օժանդակել են իրենց տարածաշրջաններում ռազմավարական հեռահար նպատակներ մշակելուն: Որոշակի ջրային հիմնախնդիրների կամ հիմնախնդիրներով տարածքների վրա կենտրոնանալը Կառավարության համար նույնպես համապատասխան խթան է, որպեսզի նա գործի: Եթե անգամ սա հանգեցնում է որոշակի հիմնախնդիրներ լուծելու ավելի որոշակի միջոցառումների պլանի, այն կարող է օժանդակել աստիճանաբար ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման անցնելուն:

ՋՌՀԿ պլանի մշակումը պահանջում է սովորական կառավարման պլանավորումից տարբերվող գործընթաց: Հիմնական տարբերությունները ներառում են.

- Բազմաբնագավառային մոտեցում: Ջուրը համապարփակ կառավարել նշանակում է զարգացնել բոլոր բնագավառների կապերն ու կառավարման կառուցվածքները: Որպեսզի նման մոտեցումները հաջողվեն, սկզբից ևեթ պլանավորման ու ռազմավարության մշակման գործընթացում պետք է ընդգրկվեն հիմնական ջրօգտագործող բնագավառները:

- Շարժուն գործընթաց: Ջրային ռեսուրսների կայուն կառավարման համակարգի ստեղծումն ու համապարփակ մոտեցումը երկարատև գործընթաց է, որը պահանջում է պլանների պարբերական վերանայում, հարմարեցում և, հնարավոր է նաև, շտկում՝ դրանց արդյունավետությունն ապահովելու նպատակով:

- Շահառուների մասնակցություն: Քանի որ ջրային ռեսուրսների կառավարման հիմնախնդիրների մեծ մասը զգալի է ամենացածր մակարդակներում, ջրային ռեսուրսների կառավարման փոփոխությունները պետք է ուղղվեն ամենացածր մակարդակով անհատական միջոցառումներին, ուստի ռազմավարության մշակման գործընթացը պահանջում է շահառուների հետ ակտիվ խորհրդակցություն:

Անկախ ՋՌՀԿ պլանավորում նախաձեռնելու Կառավարության որոշման պատճառներից պետք է իրականացվեն մի շարք հիմնական գործողություններ.

- Կառավարության պարտավորության ստանձնում,
- Ջրային ռեսուրսների կայուն կառավարման սկզբունքների իրազեկման բարելավում,
- Կառավարման խմբի ձևավորում:

3.2.1. Կառավարության պարտավորության ստանձնում

Որպեսզի որևէ պլան հաստատվի և իրականացվի, այն պետք է ընդունի կառավարությունը և հենց սկզբից լինի Կառավարության կառուցվածքում:

Կարող է պահանջվել մի քանի նախարարությունների պարտավորությունների ստանձնում, եթե ակնկալվող փոփոխությունները մեկ նախարարության իրավասությունից դուրս են: Ջրային ռեսուրսների կառավարման համակարգի բարեփոխումները ազդում են բոլոր ջրօգտագործողների վրա և սպառնում որոշ ազդեցիկ նախարարությունների լիազորություններին: Այդ նախարարությունների՝ պարտավորություններ ստանձնելը պետք է ապահովվի հենց սկզբից, կամ առնվազն պետք է լինի աշխատանքային պլանի առաջնահերթ խնդիրներից մեկը:

Որո՞նք են Ձեր երկրում ջրի հետ կապված ամենակարևոր ու ազդեցիկ նախարարությունները:

Ո՞ր նախարարությունը կամ վարչությունը պետք է ղեկավարի պլանավորման գործընթացը:

Եվ կառավարման խմբի կառուցվածքը, և ջրային ռեսուրսների կառավարման վերաբերյալ իրազեկման բարելավումը պայմանավորված են կառավարության պարտավորությունների ստանձնումով և պահպանումով: Քաղաքական աջակցության հարցը կքննարկվի հետագայում՝ բոլոր նմուշները դիտարկելիս:

Կառավարության՝ պարտավորություններ ստանձնելու ցուցանիշները ներառում են պլանավորման գործընթացի ֆինանսական հատկացումները, պլանավորող խումբ ղեկավարելը, պլանի մշակմանը ներգրավված նախարարությունների և գործակալությունների թիվը:

3.2.2. Ջրային ռեսուրսների կառավարման իրազեկման բարելավում

Ի՞նչ ռազմավարություն է Ձեզ պետք օգտագործել՝ հիմնական քաղաքական և կառավարական դեմքերին բացատրելու ՋՌՀԿ-ն:

ՋՌՀԿ պլանավորման գործընթացը պետք է համապատասխանի և ուղղակիորեն արձագանքի ազգային ջրային ռեսուրսների հիմնահարցերին ու խնդիրներին և հիմնավորվի դրանցով: ՋՌՀԿ-ն պետք է ներկայացվի որպես փոփոխության հասնելու և երկրում առկա որոշ հիմնախնդիրներ լուծելու իրատեսական միջոց: Իրազեկման բարելավումը պետք է շարունակվի պլանավորման ողջ ընթացքում, սակայն այս փուլում շեշադրվում է կառավարության հիմնական պաշտոնյաների իրազեկման բարելավումը, ովքեր պետք է տեղյակ լինեն ազդեցությունների հնարավորությանը և միջոցառումների հաջողությանը նախքան ՋՌՀԿ սկզբունքներով պլանավորում իրականացնելու պարտավորություն ստանձնելը:

Ստեղծման պահից՝ կառավարման խումբը նույնպես պետք է հնարավորություն ունենա լիարժեք տեղեկատվություն ստանալու ՋՌՀԿ-ի մասին և պետք է ընդունակ լինի համոզիչ բացատրելու այն ռազմավարություններն ու առկա տարբերակները, որոնք կարող են բարելավել ջրային ռեսուրսների կառավարումը: Կառավարական առաջատար պաշտոնյաների համար մեկ կամ երկժամյա կարճատև քննարկումը կարող է բավարար լինել: Կառավարության հետաքրքրությունը կարող է խթանել նաև միջազգային հանրության ուշադրությունը կամ բարձրակարգ որևէ իրադարձություն:

3.2.3. Կառավարման խմբի ձևավորում

Բոլոր շահառուներին ընդգրկելը պետք է լինի հստակ կառավարման շրջանակներում՝ համաձայնեցված դերերով և պատասխանատվություններով:

ՋՌՀԿ պլանավորման գործընթացը կառավարող հիմնական կազմակերպությունները կարող են ներառել, օրինակ՝

- Ազգային կառավարությանը
- Համակարգող կոմիտեին
- Կառավարման խումբը
- Անհրաժեշտության դեպքում ԳՋՀ-ը կարող է գործել որպես օժանդակող:

Գործընթացի վաղ փուլում պետք է հստակեցվի և համաձայնեցվի կառավարող տարբեր կազմակերպությունների դերը (Աղյուսակ 2):

ԱՂՅՈՒՍԱԿ 2. ԴԵՐԵՐԻ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԲԱՇԽՈՒՄ

	ԴԵՐ
ԱԶԳԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ	• Ղեկավար դեր, գործընթացի «սեփականատեր» • Ֆինանսավորման կենտրոնացում • Մակրոտնտեսական քաղաքական միջավայրի ստեղծում
ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԿՈՄԻՏԵ	• Գործընթացի ուղղորդում (ներկայացուցչական մեծ խումբ) • Բնագավառների և շահառուների խմբերի համակենտրոնացում • Արդյունքի որակի երաշխավորում • Իրականացման ընթացքի մոնիթորինգ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՒՄԲ Որակավորված մասնագետների խումբ	• Ռազմավարության մշակման, իրականացման և կարողություններ ստեղծելու ամենօրյա գործընթացների կառավարում
ՄԻՋՆՈՐԴ ԻՆՍՏԻՏՈՒՏ այնտեղ, որտեղ անհարժեշտ է օրինակ՝ ազգային ՀԿ-ներ, ԳՋՀ-ի ազգային/տարածաշրջանային խմբեր, ՄԱԿ-ի ազգային գրասենյակի տեղական թիմեր	• Բանակցությունների համար չեզոք դիրքորոշման ապահովում • Ռազմավարության մշակման գործընթացի աջակցություն՝ ծառայություն մատուցելով և գիտելիքներ փոխանակելով • Հզորությունների ստեղծում և ուսուցանում

Տարբեր երկրների ջրային ռեսուրսների կառավարման ոլորտում տիրող իրավիճակների բազմազանության և պլանավորման գործընթացն իրականացնելուն տարբեր աստիճանի պատրաստ լինելու հետևանքով գոյություն չունի արդյունավետ կառավարման ծրագրի ընդունված, ավարտուն նմուշ:

Ղեկավար կոմիտե

Ղեկավար կոմիտե ստեղծելուց հետո ռազմավարական պլանավորման նախաձեռնությունն ուղղորդելու համար այն պետք է հսկի պլանը նախապատրաստելու բոլոր փուլերը, երաշխավորի, որ նախաձեռնությունը իրականացվում է արդյունավետ և ապահովվում է առավելագույն օգուտ: Ղեկավար կոմիտեն այս գործընթացի մեջ պետք է ներգրավի ջրային բնագավառում որոշումներ կայացնող կառավարման մարմինների ու կազմակերպությունների, ինչպես նաև ընտրի այլ հիմնական շահառուների: Ղեկավար կոմիտեի անդամների վերջնական ընտրությունը պետք է հավասարակշռված լինի, և հարկ է, որ հենց սկզբից բոլոր մասնակից կազմակերպությունները (Կառավարություն, մասնավոր հատված, քաղաքացիական հասարակություն և այլն) ստանձնեն շահառուներին ընդունելի պարտավորություններ:

Շրջանակ 3 . Ղեկավար կոմիտեի գլխավոր առաջադրանքը

- Աշխատանքային խումբն ապահովել ընդհանուր ուղեցույցով և աջակցել աշխատանքներին
- Քննարկել կառավարման խմբի առաջարկություններն ու հաշվետվությունները
- Պարբերաբար վերլուծել առաջընթացը
- Աջակցել կառավարման խմբին ելակետային տվյալներ ու տեղեկություններ ձեռք բերելու հարցում
- Պատասխանատու լինել համապատասխան գործակալությունների, կազմակերպությունների կամ համայնքների իրականացրած աշխատանքների համակարգման ու մոնիթորինգի համար
- Որոշում կայացնել աշխատանքային խմբի կազմի մասին և նշանակել դրա անդամներին:

Կառավարման խմբի ձևավորում

Պլանավորման գործընթացի արդյունավետ իրականացման բանալին աշխատանքները համակարգելու բավարար լիազորություններով և ռեսուրսներով, շահառուներին ընդունելի քարտուղարություն/ համակարգող մարմին/ կառավարման խումբ ստեղծելն է: Սովորաբար խմբի անդամները բնագավառի համապատասխան գործակալությունների առաջատար պլանավորողներն են, ովքեր դիտարկում են պլանավորման գործընթացի տարբեր հեռանկարներ: Սակայն կառավարման խումբը կարող է ունենալ նաև խորհրդատուներ կամ նեղ մասնագետներ:

Կառավարման խմբի դերը ղեկավար կոմիտեի պահանջները գործնականորեն իրագործելն է՝ միևնույն ժամանակ ղեկավար կոմիտեին տեղյակ պահելով առաջընթացին և ծագող հիմնահարցերին:

Կառավարման խումբը պատասխանատվություն է կրում պլանավորման գործընթացին հասարակության մասնակցությունը ապահովելու և ՋՌՀԿ պլան կազմելու աշխատանքները ղեկավարելու համար:

Կառավարման խմբի առաջադրանքներն են.

- Կազմակերպել և համակարգել ռազմավարություն մշակելու ընդհանուր գործընթացը.
- Պլանավորել որոշակի գործունեություն ու հանդիպումներ.
- Ապահովել փորձաքննություն և ռեսուրսներ.
- Աջակցել աշխատանքային խմբերին և այլ կոմիտեների.
- Գործել որպես հաղորդակցությունը համակարգող կենտրոն:

Շրջանակ 4 . Ղեկավար կոմիտեի հնարավոր անդամները

- Առաջատար քաղաքական գործիչ՝ որպես նախագահ
- Աշխատանքային խմբի առնվազն մեկ անդամ
- Համապատասխան նախարարությունների ու վարչությունների պաշտոնյաներ
- Պետական կարգավորող մարմնի ներկայացուցիչ
- Շահագրգիռ կողմերի ընտրած ներկայացուցիչներ
- Ընտրված մասնագետ-փորձագետներ
- Արտաքին օժանդակության գործակալության ներկայացուցիչ

Շրջանակ 5 . Կառավարման խմբի անդամների հմտություններ

Նազագույն հմտություններ

Խմբի ղեկավարում և ծրագրի կառավարում

- Հաղորդակցվելու և բանակցելու հմտություններ
- Վարչական աջակցություն

Ցանկալի հմտություններ

- Ջրային ռեսուրսների ոլորտի կազմակերպում և պլանավորում
- Քաղաքական, ինստիտուցիոնալ, իրավական հմտություններ
- Տեխնիկական հմտություններ. ջրաբանություն, պահանջարկի գնահատում և այլն:
- Սոցիալ-տնտեսական վերլուծություն
- Տնտեսագիտություն և ֆինանսներ

Կառավարման խմբի կազմը կարող է փոփոխվել՝ կախված նրանից, թե ինչպես են դրսի աղբյուրներից անհրաժեշտ տվյալներ հավաքվում, նաև ակնկալվող արդյունքների ծավալից ու աշխատանքի բնույթից: Նույն ձևով կարող է փոփոխվել նաև խմբի աշխատատեղը: Սակայն փորձը ցույց է տալիս, որ խումբը լավագույնս կաշխատի, եթե տեղակայվի Կառավարության որևէ վարչությունում: Եթե ակնկալվող արդյունքները պլանավորվում է ստանալ հեռավոր ապագայում, ապա գերադասելի է, որ այն տեղակայվի համակարգող գործառույթներով որևէ հիմնարկությունում, օրինակ՝ Ֆինանսների կամ Պլանավորման նախարարություններում: Կառավարման խմբի տեղակայումը հնարավոր է նաև Կառավարությանն ընդունելի որևէ այլ անկախ մարմնում:

Բազմաշահագրգիռ դիրքորոշում
Տարբեր բնագավառների ջրօգտագործողների օժանդակության դիրքորոշում
ԳՋՀ-ի լրացուցիչ արժեք

Գլոբալ ջրային համագործակցությունը (ԳՋՀ) օգտագործում է տարբեր բնագավառների շահառուների տարածաշրջանային և ազգային մակարդակներով ստեղծած Տարածաշրջանային և Ազգային ջրային համագործակցությունները (ԱՋՀ)՝ որպես ազգային ՋՌՀԿ և ջրի արդյունավետ օգտագործման պլաններ մշակելուն աջակցող միջոց:

ԱՋՀ-երը չեզոք կազմակերպություններ են, որոնք բոլոր շահառուներին հնարավորություն են տալիս միավորվելու և քննարկելու, թե ինչպես կարելի է որոշակիորեն օժանդակել ռազմավարություններ և ջրի ավելի կայուն կառավարման ու օգտագործման պլաններ մշակելուն ու իրականացնելուն: ԱՋՀ-ները կազմակերպում են ֆորումներ, որտեղ քննարկում են վերջին նվաճումները՝ բարձրացնելով շահառուների՝ փոփոխություններ իրականացնելու ըմբռնման մակարդակը՝ դրանով իսկ դարձնելով այդ փոփոխություններն ավելի արդյունավետ, ստիպում են իրականացնել անհրաժեշտ օրենսդրական և կառուցվածքային բարեփոխումներ:

Ազգային ՋՌՀԿ պլանների (որոնք ունեն բոլոր գլխավոր շահառուների աջակցությունը և հավանության են արժանացել համապատասխան կառավարական մարմինների կողմից) կազմմանն աջակցելիս ԳՋՀ ազգային մակարդակով համագործակցության նպատակն է ապահովել պլանների համընդհանուր մատչելիությունը՝ դրանով իսկ հեշտացնելով հետագայում պլանի իրականացմանն աջակցելու նպատակով ռեսուրսների կենտրոնացումը:

Այսպիսով, Ջրային համագործակցությունը՝

- Չեզոք դիրքորոշում է ապահովում երկխոսության և տեղեկություններ փոխանակելու համար
- Աջակցում է ՋՌՀԿ ռազմավարության և պլանի մշակման գործընթացին՝ խորհրդատվությամբ և փոխանակելով տարբեր տարածաշրջաններում և երկրներում ձեռք բերված գիտելիքներն ու քաղած դասերը:
- Խթանում է կարողությունների ստեղծումը և ուսուցումը՝ մշտական կապ ապահովելով կարողություններ ստեղծող ցանցերի հետ և աշխատանքները համակարգելով:

ՕԳՏԱԿԱՐ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐ ԻՆՏԵՐՆԵՏԻՑ

- Քայլ անել: Ձեր ավազանի շահառուների ներգրավում և մասնակցություն
  - http://www.epa.gov/owow/watershed/outreach/documents/stakeholderguide.pdf
- Հասարակական կապերի պլանավորման գործնական խորհուրդներ. ԶԼՄ-ներ, սոցիալական փոփոխություններ.
  - http://media.socialchange.net.au/planning_comms/10steps.html
- Տեղեկատու. WSSCC համակարգողների համար WASH քարոզարշավներ իրականացնելու ձեռնարկ
  - http://www.wsscc.org/download/Advocacy_Sourcebook.pdf
- Ուղեցույց «Կանանց և ջրօգտագործողների շահերի պաշտպանություն» և «Ջրային միություն» կազմակերպությունների համար
  - http://www.genderandwateralliance.org/reports/GWA%20Advocacy%20manual.pdf
- Համագործակցության ուղեցույց: Կանադայի կառավարություն
  - http://www.hrsdc.gc.ca/en/epb/sid/cia/partnership/partnerhb_e.pdf
- Կառավարման խմբի ձևավորում, հոդվածներ և մեթոդական ցուցումներ
  - http://web.mit.edu/hr/oed/learn/teams/articles.html

4. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ՄՇԱԿՈՒՄ

4.1. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Պլանավորման շրջանի այս փուլն ուղղված է ՋՈՒՀԿ պլանը կազմելու աշխատանքները նախապատրաստելուն, ուստի այս փուլից ակնկալվող արդյունքներն են.

- Մանրամասն աշխատանքային պլանով ու որոշակի ֆինանսավորմամբ ծրագիր:
- Պլանավորման գործընթացն ապահովող քաղաքական կամք ու օժանդակություն:
- Շահագրգիռ կողմերի լայն մասնակցության համապատասխան կառույց:
- Պլանավորման գործընթացին օժանդակելու կարողություններ ստեղծող պլանավորված միջոցառումներ:

Հաջորդ բաժիններն առավել մանրամասն են անդրադառնում այս արդյունքներին:

Նկար 3. Համակենտրոնացման փուլ. ուղղորդող ուժեր, արդյունքներ և գործողություններ



4.2. ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ

Պլանավորում սկսելու գործընթացի բաղադրիչներ են կառավարման խմբի ձևավորումը, աշխատանքայի պլանի մշակումը, համապատասխան շահագրգիռ կողմերի ներգրավումը և քաղաքական պարտավորությունների ստանձնումը: Խմբի և գործընթացի կառավարման այլ կառուցվածքների գործողությունները տեղի են ունենում պլանավորման ողջ շրջանում և այն շարունակական պահելու միջոց են:

Ջանքերը համախմբելիս պետք է վստահություն ձեռք բերվի գործընթացի նկատմամբ: Վստահությունը այն ոչ նյութական սոցիալական կապիտալն է, որը ապահովում է միասնություն՝ նվազեցնելով անորոշությունը: Վստահությունը պակասեցնում է հակամարտությունները, հեշտացնում խորհրդատվության և արդյունքի հասնելու գործընթացը: Վստահության կորուստն ունի հակադարձ ազդեցություններ:

4.2.1. Աշխատանքային պլանի մշակում

Տեխնիկական առաջադրանքի կազմում

Համակենտրոնացման փուլը պլանավորման ողջ գործընթացի հիմնական փուլերից է, որի ընթացքում պետք է կազմվի ՋՈՒՀԿ պլանի տեխնիկական առաջադրանքը (ՏԱ): Կարևոր է, որ սկզբունքային կառուցվածքային հարցերը մանրամասն պլանավորվեն թիրախ տարածքների, պահանջվող ռեսուրսների ու ֆինանսների առումով՝ և՛ ՋՈՒՀԿ պլանը, և՛ դրա առաջարկներն իրականացնելու համար: ՏԱ-ն պետք է պայմանավորվի այս նկատառումներով և հետագա գործողությունների հստակ կառուցվածք ապահովի:

ՏԱ-ն կարող է մշակվել կառավարման խմբի ձևավորմանը զուգահեռ կամ խմբի գլխավոր առաջադրանքներից մեկը լինել: Հաճախ թիմի գործառույթները սահմանվում են ՏԱ-ում: Կարևոր է հիշել, որ ՏԱ-ն հիմնարար փաստաթուղթ է, որտեղ հստակ շարադրված են կարիքները, նպատակները և լուծվող խնդիրների շրջանակները: Այսպիսով, ՏԱ-ն պետք է բովանդակի պլանավորման ողջ գործընթացը կառավարող հիմնական կանոնները: ՏԱ-ի տիպային բաղադրիչները ներառում են նախնական տեղեկությունները, ռազմավարական պլանավորման նպատակները, պատասխանատվությունների բաշխումը, աշխատանքի/առաջադրանքների ծավալը, աշխատանքային պլանը, հաշվետվություններ ներկայացնելու պահանջները, գործընթացը կառավարելու կառուցվածքը, պահանջվող բյուջեն ու ռեսուրսները, ինչպես նաև օժանդակ տվյալների, նյութերի և տեղեկությունների աղբյուրները: Խմբի աշխատանքի արդյունքների պլանավորվումը և ժամանակային շրջանակները խմբի աշխատանքը վերահսկելու կարևոր ցուցանիշներից են:

Ռեսուրսների և ֆինանսական միջոցների ձեռքբերում

Պլանավորման գործընթացը սահմանափակվում է հատկացված բյուջեով: Աշխատանքային պլանը, հանդիպումների քանակը, խորհրդատուները սահամանափակվում են ֆինանսավորմամբ, այլ գործոններով: Հնարավոր է, որ կառավարման խումբը մշակի բյուջեն, սակայն ավելի հավանական է, որ խումբը չձևավորվի այնքան ժամանակ, քանի դեռ համակենտրոնացման փուլին չի հատկացվել որոշակի գումար: Անհրաժեշտ կլինեն մարդկային և այլ ռեսուրսներ, և հարկ կլինի հստակեցնել խորհրդատուների հետ պայմանագիր կնքելու պայմանները:

Աշխատանքային պլան

Համակենտրոնացման գործընթացի վերջնական փուլը ՏԱ-ի պահանջների հիման վրա աշխատանքային պլան մշակելն է: Աշխատանքային պլանը համատեղում է ՋՈՒՀԿ պլանի կարիքները և հավաքագրած ռեսուրսները, ապահովում առանձին գործողությունների ու գործունեությունների մանրամասն պատկեր: Աշխատանքային պլանը կարող է մշակվել այս

ուսումնական նյութում պարզաբանված հաջորդական քայլերով: Աշխատանքային պլանով պետք է կազմվի խումբը և կամ այդ նպատակով վարձվի որևէ խորհրդատու, և պետք է առաջին փուլի հիմնական արդյունքներից մեկը լինի: Աշխատանքային պլանում պետք է ներառվեն.

- Պահանջվող առաջադրանքների համառոտ նկարագրությունը
- Կիրառվելիք աշխատանքային պլանն ու մեթոդաբանությունը
- Ղեկավարության և փորձագետների պատասխանատվությունները
- Ծրագիրը սկսելու հիմնական պահերը
- Հիմական խորհրդակցությունները (սեմինարները), հաղորդակցության մեխանիզմները:

Արդյոք կարծու՞մ եք, որ աշխատանքը պետք է կատարի խումբը, թե՞ նա պետք է միայն համակարգի:

4.3. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ցանկացած բարեփոխում հաջող իրականացնելու համար անչափ կարևոր են քաղաքական աջակցությունն ու պարտավորությունը: Ամենաբարձր մակարդակով քաղաքական պարտավորությունները (կառավարություն, պետության ղեկավար) անհրաժեշտ են, եթե պլանը փոփոխություններ է ակնկալում նախարարություններում կամ իրավական ու ինստիտուցիոնալ կառույցներում: Քաղաքական առաջնորդների՝ ջրային ռեսուրսների կայուն կառավարումն ու զարգացումը, ՋՌՀԿ մոտեցման անհրաժեշտությունն ընկալելը առաջին կարևոր քայլն է: Հարգված քաղաքական կամ հասարակական առաջնորդը կարող է աջակցել այդ ընկալումն ապահովելուն՝ դրանով իսկ պաշտպանելով գործընթացը:

Շրջանակ 6. Քաղաքական պարտավորության մասին

Չափման ենթակա

- Ֆինանսական հատկացում պլանավորման գործընթացին:
- Պլանավորման խմբի ղեկավարություն:
- Պլան մշակելու որոշման մեջ ընդգրկված նախարարությունների ու գործակալությունների թիվը:
- Քաղաքական գործիչների հետ աշխ. հանդիպումներ /գործունեություններ:

Քննարկման ենթակա

- Կառավարության պաշտոնական քաղաքականությունը կամ հայտարարությունը դեռևս չի երաշխավորում արդյունավետ գործունեություն:
- Կառավարությունը հաճախ օգտագործում է վերևից-ներքև մոտեցում և սկզբից ևեթ հաշվի չի առնում շահագրգիռ կողմերին:
- Քաղաքական պարտավորությունը պետք է երկարաժամկետ լինի և առնչվի քաղաքական կուսակցություններին:
- ՀԿ-ները կարևոր դեր են խաղացել ջրի զարգացման պատկերները մշակելիս:

Ինչու՞ է անհրաժեշտ ուժեղ քաղաքական աջակցություն.

- Որպես ջրային ռեսուրսների գերակա խնդիրները և հարցերը միջգերատեսչական մակարդակով լուծելու երաշխիք:

- Որպեսզի ռազմավարությունը համակարգող խմբին աշխատելու հնարավորություն ընձեռվի (քարտուղարությունն ու ղեկավար կոմիտեն ձևավորվելու և աշխատելու համար պետք է հենվեն քաղաքական աջակցության վրա):

- Որպես երաշխիք, որ ջրային ռեսուրսների զարգացման հեռահար նպատակն ու խնդիրները հաշվի են առնում ազգային զարգացման այլ խնդիրների համապատասխող քաղաքական նպատակները:

- Եվ ընդհակառակը, երաշխավորելու, որ ջրային ռեսուրսների զարգացման հեռահար նպատակն ու խնդիրները արտացոլվեն քաղաքական պլաններում:

- Նաև երաշխավորելու, որ ջրի կայուն կառավարման մոտեցումները ներառվեն ազգային զարգացման պլաններում, միջոցառումներում և այլ բնագավառների քաղաքական հայտարարություններում:

- Երաշխավորելու, որ ռազմավարության քաղաքական ազդեցությունները հաշվի են առնվում ողջ գործընթացի ժամանակ և ոչ թե պարզապես ձևականորեն որևէ վերջնական պահի (ապահովելով աշխատանքի անընդհատ կատարելագործում):

- Որպեսզի որոշումները կայացվեն ըստ հանձնարարվող քաղաքականության, իրավական և ինստիտուցիոնալ բարեփոխումների:

- Որպես պլանն ընդունելու և իրականացնելու երաշխիք:

- Որպեսզի կառավարական միջոցներից հատկացումներ ապահովվեն (և եթե անհրաժեշտ է, ապահովվի դոնորների աջակցություն):

Ջրային ռեսուրսների կայուն կառավարումն ու զարգացումը նշանակալիորեն փոփոխում են կառավարման ավանդական մեթոդները, և իշխանական կառույցներում ու որոշումներ ընդունող համակարգերում ակնկալվող փոփոխությունները բացահայտ քաղաքական հետևանքներ են ունենում: Այս հանգամանքը պետք է ընդունել և գիտակցաբար հաշվի առնել ՋՌՀԿ պլանավորման ողջ գործընթացում:

Ինչպե՞ս կարելի է ձեռք բերել քաղաքական պարտավորություն

Քաղաքական պարտավորությունը պետք է երկարաժամկետ լինի, ուստի անհրաժեշտ է աշխատել քաղաքական բոլոր կուսակցությունների, երիտասարդ, այև հասուն քաղաքական գործիչներին հետ այնպես, որ ստանձնած քաղաքական պարտավորությունը չմերժվի նոր կառավարություն ձևավորելիս: Այդ պատճառով համոզիչ ռազմավարական հեռահար, բոլոր կողմերի ձգտումները բավարարող նպատակի ձևավորումը գործունեության լավ հիմք է ապահովում:

Ռազմավարության մի քանի օրինակ.

- Պարզաբանել ՋՌՀԿ տարբեր հիմնախնդիրների վրա ուշադրություն հրավիրելու հնարավորությունները:

- Հիմնվել միջազգային պարտավորությունների վրա: Օրինակ՝ կառավարությունների մեծ մասը, ներառյալ նաև Ջերը, միացել է ջրային ռեսուրսների կայուն կառավարման և արդյունավետ օգտագործման պլաններ մշակելու միջազգային հռչակագրին:

- Առաջին քայլերը կարելի է սկսել հիմնական քաղաքական գործիչների և մասնագետների հետ հաղորդակցվելուց՝ հետագայում աստիճանաբար ապահովելով նրանց աջակցությունը:

- Օգտագործել որոշակի հիմնախնդրի լուծման վրա հիմնված մոտեցում և դիմել խորհրդարանի անդամներին ընտրողների ջրային հիմնախնդիրները լուծելու համար:

> Հնարավո՞ր է արդյոք հասնել այն բանին, որ հողի, ջրի, շրջակա միջավայրի, տեղական իշխանության, էներգետիկայի նախարարությունները միասին աշխատեն:
>
> Ինչպե՞ս Դուք դա կանեիք:

- Օգտագործել հրապարակայնությունը՝ ջրային ոլորտի հարցերը ազգային խնդիրների օրակարգում ընդգրկելու և այդպիսով դրանք քաղաքական գործիչներին հղելու համար:

- Ապահովել տեղեկատվություն կամ ջրային, հողային ռեսուրսների, շրջակա միջավայրի վիճակը ներկայացնել խորհրդարանական համապատասխան հանձնաժողովին կամ այլ համապատասխան կառավարական մարմինների:

- Պատրաստել օժանդակ գովազդային նյութեր, երկար հաշվետվությունների ամփոփումներ և այլ նպատակաուղղված տեղեկատվական նյութեր՝ համապատասխան համառոտ և ընթեռնելի ծավալով:

Ընտրել «գործընթացային մոտեցում» և աշխատել պարտավորություն ստանձնել հետագա աշխատանքի ընթացքում, սակայն շատ չուշացնել:

4.4. ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

(Հղում «Ափամերձ քաղաքների կեղտաջրերի կառավարման բարելավում»)

ՋՌՀԿ մոտեցման գլխավոր սկզբունքներից մեկը շահագրգիռ կողմերի մասնակցությունն է: Ջուրը վերաբերում է բոլորին, և ջրային բնագավառի բարեփոխումների հաջողության համար կարևոր է պարզել շահագրգիռ կողմերի տեսակետներն ու շահերը: Շահագրգիռ կողմերի մասնակցության կարևորությունը պետք է ընդունվի ծրագիր նախապատրաստելու ու իրականացնելու մի շարք մոտեցումներում, որոնք ներառում են.

- շահագրգիռ կողմերի հետաքրքրությունների, դրանց կարևորության և առաջարկվող ծրագրի վրա հնարավոր ազդեցությունների բացահայտում,
- ծրագրին աջակցելու ունակ տեղական ինստիտուտների կամ գործընթացների պարզաբանում,
- ՋՌՀԿ պլանի նախապատրաստման ու իրականացման տարբեր փուլերում շահագրգիռ կողմերին ընդգրկելու նախապայմանների և ռազմավարության ապահովում:

Ի՞նչ եք կարծում, ո՞րն է ՋՌՀԿ-ի մասնակցության լավագույն մակարդակը:

Աղյուսակ 3 . Մասնակցության տեսակներ

	ԲՆՈՒԹԱԳՐԵՐ
Կառավարվող մասնակցություն	Մասնակցությունը պարզապես ցուցադրական է:
Պասիվ մասնակցություն	Մարդիկ մասնակցում են այնքանով, որքանով նրանց տեղյակ է պահվում, թե ինչ է որոշվել կամ արդեն տեղի ունեցել: Տարածվող տեղեկատվությունը վերաբերում է միայն արտաքին մասնագետներին:
Մասնակցություն խորհրդատվությամբ	Մարդիկ մասնակցում են խորհրդատվություն ստանալով կամ հարցերի պատասխանելով: Մասնակցության ոչ մի հնարավորություն որոշումներ կայացնելիս, և մասնագետները պարտավոր չեն մասնակիցների տեսակետները հաշվի առնել:
Նյութապես օժանդակվող մասնակցություն	Մարդիկ մասնակցում են սնունդ, դրամ կամ այլ նյութական օժանդակություն ստանալու ակնկալիքով: Բնակիչները դադարում են մասնակցել գործընթացին, երբ ազդակները սպառվում են:
Գործառնային մասնակցություն	Արտաքին գործակալությունների մասնակցությունը դիտվում է որպես ծրագրի նպատակներին հասնելու, հատկապես ծախսերը նվազեցնելու միջոց: Ծրագրի նախապես սահմանված նպատակներին հասնելու համար մարդիկ կարող են մասնակցել խմբեր կազմելով:
Ինտերակտիվ մասնակցություն	Մարդիկ մասնակցում են համատեղ վերլուծությունների, ինչը հանգեցնում է գործողությունների պլանի և տեղական այն խմբերի կամ ինստիտուտների կազմավորմանը կամ ուժեղացմանը, որոնք որոշում են, թե ինչպես են օգտագործվում առկա ռեսուրսները: Ուսումնասիրման մեթոդը կիրառվում է զանազան կարծիքներ հաշվի առնելու համար:
Ինքնակենտրոնացում	Մարդիկ մասնակցությունը նախաձեռնում են անկախ արտաքին ինստիտուտներից: Նրանք ռեսուրսներ և տեխնիկական խորհուրդներ ստանալու համար կապեր են հաստատում ու զարգացնում արտաքին ինստիտուտների հետ, բայց հսկողություն սահմանում ռեսուրսների օգտագործման վրա:

Աղբյուր. Dalal-Clayton B. Bass S (2002)

Վերջին կետը ցույց է տալիս, որ շահագրգիռ կողմեր ներգրավելու ռազմավարությունը պլանավորման գործընթացի բաղկացուցիչ մասն է և ոչ թե դեպքից դեպք իրականացվող միջոցառում:

Շահագրգիռ կողմերի ներգրավումից ստացվող օգուտներ

- Հիմնավորված որոշումներ են կայացվում, քանի որ հաճախ շահագրգիռ կողմերը հարուստ տեղեկություններ են ունենում, որոնք կարող են օգտակար լինեն ծրագրին:
- Շահագրգիռ կողմերը ամենամեծ բացասական ազդեցությունն են կրում ջրային ռեսուրսների սակավությունից կամ վատ կառավարումից:
- Ծրագրի վաղ փուլերում համաձայնության գալը կարող է նվազեցնել ծրագրի իրականացմանն ու հաջողությանը վնասող հակամարտությունների հավանականությունը:
- Շահագրգիռ կողմեր ներգրավելը ապահովում է պետական և մասնավոր գործընթացների թափանցիկություն, քանի որ ներգրավված տարբեր շահագրգիռների կողմեր հսկում են այդ գործընթացները:
- Շահագրգիռ կողմերի ներգրավումով վստահություն է ստեղծվում կառավարության և քաղաքացիական հասարակության միջև, ինչն իր էլ հերթին կարող է հանգեցնել երկարաժամկետ համագործակցային հարաբերությունների:

Շահագրգիռ կողմերի մասնակցություն ապահովելու քայլեր

Շահագրգիռ կողմերի մասնակցության նախապատրաստումը հիմնականում ներառում է չորս քայլ.
1. Խմբերի և անհատների մեծ ցանկից որոշել այն հիմնական շահագրգիռ կողմերին, որոնք կարող են ազդել կամ ազդեցություն կրել ջրային ռեսուրսների կառավարման փոփոխություններից:
2. Գնահատել շահագրգիռ կողմերի շահերը և ՋՌՀԿ-ի պլանների հնարավոր ազդեցություններն այդ շահերի վրա:
3. Գնահատել որոշված շահագրգիռ կողմերի ազդեցությունն ու կարևորությունը:
4. Ուրվագծել շահագրգիռ կողմերի մասնակցության ռազմավարություն (պլանը կազմելու տարբեր փուլերում շահագրգիռ կողմերին ներգրավելու ծրագիր):

Քայլ 1. Հիմնական շահագրգիռ կողմերի որոշում

Հիմնական շահագրգիռ կողմերին որոշելիս հարկ է քննարկել հետևյալ հարցերը.

- Ովքե՞ր են հնարավոր շահառուները:
- Ո՞վ կարող է կրել բացասական ազդեցություն:
- Արդյոք որոշվե՞լ են խոցելի խմբերը, որոնք կարող են ազդեցություն կրել պլանից:
- Արդյոք որոշվե՞լ են ջրային ռեսուրսների կառավարման համակարգերում փոփոխությունների կողմնակիցներն ու հակառակորդները:
- Արդյոք համապատասխանաբար որոշվա՞ծ և ներկայացվա՞ծ են գենդերային շահերը:
- Ի՞նչպիսի հարաբերություններ կան շահագրգիռ կողմերի միջև:

Այս հարցերի պատասխանները կկազմեն մի պարզ ցուցակ, որը շահագրգիռ կողմերի վերլուծության հիմքն է:

Ոչ բոլոր շահագրգիռ կողմերը կարիք ունեն կամ ցանկանում են ներգրավվել գործընթացին առնչվող բոլոր առաջադրանքներում: Շահագրգիռ կողմերի վերլուծության նպատակն է երաշխավորել, որ կառավարման խումբը և պլանավորման գործընթացի կառավարման մեջ ընդգրկված այլ մասնակիցներ ճիշտ գնահատեն տարբեր խմբերի հետաքրքրություններն ու շահերը, մասնակցության հնարավորությունները, ակնկալիքներն ու մասնագիտական հմտությունները: Ուստի կարևոր է դեռևս վաղ փուլերում հստակեցնել ռազմավարական պլանավորման գործընթացներում հիմնական մասնակիցների դերերը և փոխհարաբերությունները, ինչպես նաև սահմանել այդ գործընթացում ինստիտուտների և կազմակերպությունների պաշտոնական դերերն ու մանդատները, և թե ինչպես են դրանց օժանդակում քաղաքական տարբեր շրջանակներ:

Քայլ 2. Շահագրգիռ կողմերի շահերի և դրանց վրա ՋՈՒԿ-ի հնարավոր ազդեցությունների գնահատում

Հիմնական շահագրգիռ կողմերը որոշելուց հետո կարելի է քննարկել այն հնարավոր շահերը, որ այս խմբերը կամ անհատները կարող են ունենալ ծրագրում: Տարբեր շահագրգիռ կողմերի շահերը գնահատելու համար պետք է պատասխանել հետևյալ հարցերին՝

- Որո՞նք են շահագրգիռ կողմերի ակնակլիքները պլանից:
- Ի՞նչ օգուտներ կարող են ծրագրի արդյունքում ստանալ շահագրգիռ կողմերը:
- Ի՞նչ ռեսուրսներ կարող են և կցանկանան համակենտրոնացնել շահագրգիռ կողմերը:
- Շահագրգիռ կողմերի ո՞ր շահերն են հակադրվում ՋՈՒԿ նպատակներն:

Տարբեր շահագրգիռ կողմերի շահեր գնահատելիս կարևոր է հասկանալ, որ որոշ շահագրգիռ կողմեր կարող են ունենալ թաքնված, բազմակի կամ հակասական նպատակներ ու շահեր: Ռազմավարական գործընթացին մասնակից տարբեր կազմակերպություններից ու խմբերից ամեն մեկն ունի սեփական շահեր, որոնք պետք է փորձի առաջադրել ու պաշտպանել: Նրանք գործընթացի մեջ կարող են ներգրավվել տարբեր եղանակներով և աջակցել տարբեր մակարդակներով. օրինակ՝ բացահայտել հիմնախնդիրները և գտնել լուծումներ, առաջարկել ընդհանրական կանխատեսումներ և ապագայի նպատակներ, քննարկել քաղաքականության տարբերակներն ու հնարավոր գործողությունները: Ռազմավարական գործընթացի մեջ ներգրավվելը կարող է դիտվել որպես իրավունք, սակայն այն նաև իր հետ որոշակի պատասխանատվություններ է առաջ բերում, ուստի կարևոր է սահմանել և համաձայնեցնել մասնակիցների դերերը հնարավորինս շուտ: Ջրային ռեսուրսների կայուն օգտագործման անցնելու համար փոխզիջումների հարկ կլինի: Ընդ որում անհրաժեշտ է ներգրավել շահագրգիռ կողմերին և ապահովել նրանց ակտիվ մասնակցությունը, եթե նրանք պետք է ընդունեն պլանի վերջնական տարբերակը:

Քայլ 3. Շահագրգիռ կողմերի ազդեցության ու կարևորության գնահատում

Երրորդ քայլի խնդիրն է գնահատել ավելի վաղ փուլում որոշված շահագրգիռ կողմերի հնարավոր ազդեցությունը, նաև կարևորությունը պլանը ընդունելիս: Ազդեցությունը գնահատվում է ծրագրի վրա շահագրգիռ կողմերի ունեցած իշխանությամբ: Այն կարող է արտահայտվել շահագրգիռ կողմերի միջոցով, որոնք պաշտոնապես վերահսկում են որոշումներ կայացնելու գործընթացը, կամ էլ ոչ պաշտոնապես՝ խոչընդոտելով կամ աջակցելով պլանն ընդունելուն կամ իրականացնելուն: Շահագրգիռ կողմերի կարևորությունը կախված է նրանից, թե որքանով է նրանց ակտիվ ներգրավումը կարևոր՝ ծրագրի նպատակներին հասնելու համար: Կարևոր շահագրգիռ կողմերը հաճախ այն կողմերն են, ովքեր պետք է օգուտ քաղեն ծրագրից, կամ ում նպատակները համընկնում են ծրագրի նպատակներին: Սակայն պետք է գիտակցել, որ շատ կարևոր որոշ շահագրգիռ կողմեր կարող են քիչ ազդեցիկ լինել և ընդհակառակը:

Շահագրգիռ կողմերի ազդեցությունն ու կարևորությունը գնահատելու համար պետք է գնահատել.

- Շահագրգիռ կողմի իշխանությունն ու կարգավիճակը (քաղաքական, սոցիալական և տնտեսական):
- Շահագրգիռ կողմի կազմակերպվածության աստիճանը:
- Ռազմավարական ռեսուրսների նկատմամբ շահագրգիռ կողմի հսկողությունը:
- Շահագրգիռ կողմի ոչ պաշտոնական ազդեցությունը (անձնական կապեր և այլն):
- Ծրագրի հաջողության համար շահագրգիռ կողմերի կարևորությունը:

Տարբեր շահագրգիռ կողմերի ազդեցությունն ու կարևորությունը կարող են դասակարգվել պարզ սանդղակով և համեմատվել: Ոչ ձեռնտու վիճակում գտնվողները, ինչպես, օրինակ, հասարակության չքավոր խավերը կամ որոշ գենդերային խմբեր, կարող են հատուկ ուշադրության կարիք զգալ՝ կարգավիճակի բացակայությունը հաղթահարելու համար: Նման դասակարգումը այս շահագրգիռ կողմերի մասնակցության ռազմավարությունն ընտրելու նախնական քայլ է: Հաջորդ քայլը, որը պետք է արվի՝ համոզվելու, որ գնահատումը հնարավորինս ճիշտ է, «դաշտային» խորհրդատվության անհրաժեշտությունն է:

Քայլ 4. Մասնակցության ռազմավարության ուրվագծում

Գործընթացի նախորդ երեք քայլերին շահագրգիռ կողմերի մասնակցությամբ կարելի է նախնական պլանավորել, թե ինչպես կարելի է լավագույնս ներգրավել տարբեր շահագրգիռ կողմերի: Շահագրգիռ կողմերի ներգրավումը պետք է պլանավորվի ըստ՝

- ամեն մի շահագրգիռ կողմի շահերի, կարևորության և ազդեցության.
- առանձնահատուկ ջանքերի ներդրման, որոնք պահանջվում են ոչ ազդեցիկ, բայց կարևոր շահագրգիռ կողմեր ներգրավելու համար.
- ծրագրի ամբողջ ընթացքում մասնակցության համապատասխան ձևերի:

Այս ռազմավարության շրջանակներում շատ կարևոր են ջրային ռեսուրսների կառավարման և ՋՈՌԿ մոտեցման ըմբռնումների բարելավմանն ուղղված միջոցառումները: Կարելի է պատրաստել օժանդակ բացատրական նյութեր կամ կազմակերպել ուսուցողական դասընթացների շարքեր ռադիոյով, հեռուստատեսությամբ և լրատվական այլ միջոցներով:

Աղյուսակ 4 . Շահագրգիռ կողմերի կարգեր

Ա. Բարձր շահագրգռություն/կարևորություն, մեծ ազդեցություն Այս շահագրգիռ կողմերը ծրագրին օժանդակելու արդյունավետ կոալիցիայի հիմքն են:	**Գ. Ցածր շահագրգռություն/կարևորություն, մեծ ազդեցության** Այս շահագրգիռ կողմերը կարող են ազդել ծրագրի արդյունքների վրա, սակայն նրանց և ծրագրի գերակայությունները չեն համընկնում: Նրանք կարող են ռիսկ կամ խոչընդոտ լինել ծրագրին:
Բ. Բարձր շահագրգռություն/կարևորություն, փոքր ազդեցության Այս շահագրգիռ կողմերը հատուկ նախաձեռնություն կթելադրեն, եթե նրանց շահերը հարկ լինի պաշտպանել:	**Դ. Ցածր շահագրգռության/կարևորության, փոքր ազդեցության** Այս շահագրգիռ կողմերը ծրագրին այնքան էլ կարևոր չեն:

Աղբյուր. Overseas Development Administration 1995.

Շահագրգիռ կողմերի մասնակցության մեթոդներ

Շահագրգիռ կողմերը պետք է ներգրավվեն պլանը մշակելու բոլոր կարևոր փուլերում: Այդ փուլերը պետք է պլանավորվեն, և աշխատանքային պլանը պետք է ներառի մասնակցության ժամանակացույցը, նպատակը, թիրախ շահագրգիռ կողմերի որոշումը, աշխատանքի մեթոդն ու ակնկալվող արդյունքները: Շահագրգիռ կողմերի մասնակցության ծավալներն ու ռազմավարությունը պետք է հստակեցվեն, քանի որ դրանք զգալիորեն ազդում են ծախսերի վրա:

Մեթոդները կարող են ներառել.

- Շահագրգիռ կողմերի աշխատանքային հանդիպումներ, որոնց հրավիրվում են ընտրված կողմերը՝ քննարկելու ջրին առնչվող հարցեր:
- Ներկայացուցչություն պլանավորման գործընթացի կառավարման կառույցներում:
- Տեղական խորհրդակցություններ «դաշտում»:
- Ուսումնասիրություններ:
- Համագործակցող կազմակերպությունների հետ խորհրդակցություններ (ինչպես, օրինակ, ՀԿ-ներ, կրթական կազմակերպություններ և այլն):

Ինչպե՞ս եք ըստ գերակայության դասակարգում շահագրգիռ կողմերը, և ինչպե՞ս կարող են ներկայացվել ավելի քիչ ազդեցիկները:

Տեղեկությունների բազմաթիվ աղբյուրներ օգտագործելը գերադասելի է ոչ միայն այն պատճառով, որ բարձրացնում է ձեռք բերված տեղեկության հուսալիության մակարդակը, այլև հատկապես այն առումով, որ տեղեկություններ հավաքելու մասնակցային մեթոդները (շահագրգիռ կողմերի հանդիպումներ, տեղական խորհրդակցություններ և այլն) տեղական շահագրգիռ կողմերի շրջանում կարող են առաջացնել պլանավորման գործընթացը և ծրագրի նպատակները համաձայնեցնելու սեփական մասնակցության զգացում: Ըստ այս մոտեցման՝ շահագրգիռ կողմերի մասնակցության ձևերը կարող են տատանվել ներգրավվածության ցածրից մինչև բարձր մակարդակներ:

Ո՞րն եք համարում շահագրգիռ կողմերի մասնակցության լավագույն մակարդակը Ձեր երկրում:

Նշվել է հիմնական շահագրգիռ կողմերին բացահայտելու անհրաժեշտությունը, սակայն հարկ կլինի որոշել նաև նրանց ամեն մի խմբի ներկայացուցչին: Պաշտոնական կառույցները կարող են հնարավորություն ստեղծել, որպեսզի դա հեշտությամբ որոշեն հենց շահագրգիռ կողմերը: Այլ դեպքերում պատասխանատու առաջնորդներին կամ ընդունված հռետորներին հնարավոր կլինի հայտնաբերել շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցելով: Կարևոր է խնդրել ընտրված ներկայացուցիչներին, որպեսզի նրանք ապահովեն իրենց ընտրողների պատասխան-արձագանքը, անհրաժեշտության դեպքում նաև պաշտպանեն անդամների տեսակետները՝ հայցելով նրանց աջակցությունը:

Քայլ 5. ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ

Հաջորդ հարցերը վերաբերում են ջրային ռեսուրսների կառավարման և պլանավորման գործընթացում տարբեր շահագրգիռ կողմերի կարողություններին.

- Որքանո՞վ է ՋՌՀԿ-ն նոր նրանց համար:
- Շահագրգիռ կողմերը տեղյա՞կ են արդյոք առաջարկվող ջրային բարեփոխումների կարևորությանը:
- Արդյոք նախարարներն ու այլ քաղաքական գործիչներ բավարար չափո՞վ են տեղեկացված՝ ճիշտ քաղաքական որոշումներ կայացնելու համար:
- Իսկապես կա՞ն արդյոք կարևոր գենդերային տարբերություններ ջրի մատչելիության ու օգտագործման մեջ:
- Արդյոք կառավարման խումբը հասկանու՞մ է բոլոր հարցերը և համապատասխան հմտություններ ունի՝ շահագրգիռ կողմերի մասնակցության գործընթացը հեշտացնելու (օժանդակելու):
- Որո՞նք են ջրային ռեսուրսների կառավարման ռազմավարական տարբերակները, և ինչպե՞ս է որոշվում՝ որն է լավագույնը:
- Ինչու՞ է պետք ջրի համար վճարելու գաղափարը:
- Արդյոք բավարար գիտելիքներ ունե՞նք, որպեսզի կարողանանք իրականացնել ՋՌՀԿ պլանը:

Նշված գիտելիքները պահանջվում են տարբեր կարգի մասնակիցներից պլանավորման գործընթացի տարբեր փուլերում, և մեծապես ազդում են նրանց՝ լումա ներդնելու կամ որոշակի առաջադրանք կատարելու կարողությունների վրա: Համապատասխան գիտելիքների բացակայությունն իր հերթին բացասաբար է անդրադառնում պլանի որակի և այն հաջող իրականացնելու հնարավորության վրա:

Ո՞րն է Ձեր կարծիքով ունակություններ ձեռք բերելու ամենակարևոր կարիքը:

Պլանավորման ընթացքում տեղին է քննարկել ունակություններ ձեռք բերելու կարիքները, սակայն նաև պետք է պատրաստ լինել դրանք աշխատանքի ընթացքում վերանայելու և կատարելագործելու: Բավարար կարողություններ ստեղծելիս սխալները սովորական են. սովորական են նաև չհաջողված ծրագրերը:

Ունակություններ ձեռք բերելու խնդիրը լուծելու պարզագույն եղանակը աշխատանքային պլանի ամեն մի բաղադրիչ վերահսկելն է՝ տալով՝ « **արդյոք պլանի տվյալ փուլում ընդգրկված մարդիկ ունե՞ն առաջադրանքներն արդյունավետ կատարելու բավարար գիտելիքներ»** հարցը: Եթե չունեն, ապա պետք է անհրաժեշտ քայլեր ձեռնարկել՝ նրանց ընկալումը, իրազեկումը, մասնագիտական հմտությունները կամ կարողությունները բարելավելու: Սա սկսվում է հենց սկզբից քաղաքական գործիչների գիտելիքները և կառավարման խմբի հմտությունները գնահատելով: Ունակություններ ձեռք բերելու կարիքները փոփոխվում են պլանն իրականացնելիս և պահանջում տարբեր հմտություններ:

ՕԳՏԱԿԱՐ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐ ԻՆՏԵՐՆԵՏԻՑ

- Վասահության համար պայմանների ստեղծում
  - http://www.resolv.org/pubs/buildingtrust/index.html
- Գլոբալ էկոլոգիական կառավարման երկրների հզորությունների զարգացման կարիքների ինքնագնահատման ձեռնարկ ԳԷՖ: Մատչելի է նաև ռուսերեն տարբերակը.
  - http://www.gefweb.org/Documents/enabling_activity_projects/enabling_activity_projects.html
- Բնական ռեսուրսների կառավարմանը շահագրգիռ կողմերին ներգրավելու մեթոդիկա. DFID
  - http://www.dfid.gov.uk/pubs/files/BPG02.pdf
- Շահագրգիռ կողմերի վերլուծության ուղեցույց. LACHSR
  - http://www.lachsr.org/documents/policytoolkitforstrengtheninghealthsectorreformpartii-EN.pdf
- Շահագրգիռ կողմերի մասնակցություն

Մասնակցություն. ռեսուրսների բաշխում. FAO. o http://www.fao.org/Participation/ft_find.jsp

Համաշխարհային բանկ. մասնակցության ուղեցույց.

- http://www.worldbank.org/wbi/sourcebook/sbhome.htm
- Մասնակցություն, համաձայնության ձեռքբերում, հակամարտությունների կառավարում. UNESCO.
  - http://unesdoc.unesco.org/images/0013/001333/133308e.pdf
- Գենդերը ՋՈՀԿ-ում, Նմուշ 4. Ուսուցանողների ուսուցում. ձեռնարկ.GWA
  - Այս նյութերը կարելի է անվճար պատվիրել info@cap-net.org հասցեով:

Քաղած հիմնական դասեր

1. Քաղաքական աջակցությունն ու բարի կամքը չափազանց կարևոր են ՋՈՀԿ ռազմավարական պլանի հաջողության համար:
2. Շահագրգիռ կողմերի՝ ռազմավարական պլանավորման առաջարկությունների վերաբերյալ համաձայնություն ձեռք բերելը և պլանի նկատմամբ սեփականության զգացումը շատ կարևոր են հետագայում պլանի իրականացումն ապահովելու համար:
3. Մասնակցային պլանավորման գործընթացի մեջ ներգրավել բոլոր շահագրգիռ կողմերին՝ ներառյալ քաղաքական առաջնորդներին, վարչությունների պաշտոնյաներին, մասնագետներին, ՀԿ-ներին, համայնքային կազմակերպություններին և մասնավոր հատվածին:
4. Օժանդակողի (ծրագրի կառավարման խումբ) դերն է աջակցել մասնակցային պլանավորման գործընթացի կառավարմանը, համակարգել քննարկումները, փոխանցել փորձը և օգնել, որպեսզի գլխավոր հարցերի շուրջը ձեռք բերվի համաձայնություն:



5. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՌԱՀԱՐ ՆՊԱՏԱԿ

5.1. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Պլանավորման գործընթացի այս փուլի արդյունքը ջրային ռեսուրսների կայուն կառավարման ու զարգացման սկզբունքներով ջրի հեռահար նպատակի կամ ջրային քաղաքականության պաշտոնական կամ ոչ պաշտոնական հաստատումն է:

Նկար 4. Ռազմավարական հեռահար նպատակի փուլ. ուղղորդող ուժեր, արդյունքներ և գործողություններ



5.2. ԻՆՉՈՒ՞Ի ԿԱՐԵՎՈՐ ՋՐԻ ՀԵՌԱՀԱՐ ՆՊԱՏԱԿԸ

Ազգային զարգացման կայունության ձեռքբերումը թելադրում է ռազմավարական հեռահար նպատակ, որը և՛ երկարաժամկետ է հեռանկարով, և՛ միավորում է զարգացման տարբեր գործընթացներն այնպես, որ դրանք նույնչափ կատարելագործվեն և մանրամասն մշակվեն, որքան բարդ են լուծվելիք խնդիրները: Ազգային մակարդակով ջրային ռեսուրսների կայուն զարգացման ու կառավարման ռազմավարական հեռահար նպատակը ենթադրում է.

- Երկարաժամկետ հեռահար նպատակի, միջնաժամկետ նպատակների ու կարճաժամկետ գործողությունների կապ.
- Բնագավառների հորիզոնական այնպիսի կապեր, որ զարգացումը համակարգված լինի.

- Ուղղահայաց տարածական այնպիսի կապեր, որ տեղական, ազգային և համընդհանուր քաղաքականությունը, զարգացման ջանքերը և կառավարումը միմյանց աջակցեն.

- Կառավարության, գործարարների, համայնքային ու կամավոր կազմակերպությունների իրական գործընկերություն, քանի որ հիմնախնդիրները չափազանց բարդ են, և միայնակ գործող որևէ խումբ չի կարող լուծել դրանք:

Ջրային ռեսուրսների վիճակի վերաբերյալ առաջիկա 20 տարվա հեռահար նպատակ ունենալը պլանավորման գործընթացի օգտակար սկիզբ է: Այն հնարավորություն է ընձեռում ստեղծելու ընդհանուր պատկերացում՝ խուսափելով առկա հակամարտությունների և համակարգերի հակադրությունների մտահոգություններից: Այդ ընդհանուր տեսակետն օգնում է շահագրգիռ կողմերին համախմբվելու և լուծելու դժվար հարցերը:

Չնայած քաղաքականությունն ու հեռահար նպատակը շատ տարբեր են, դրանցից ամեն մեկը կարող է համաձայնության հիմք լինել և ձևավորել ՋՌՀԿ պլանը մշակելու կառուցվածքը:

ՋՌՀԿ պլանի մշակման համատեքստում կարող է Կառավարությանը և շահագրգիռ կողմերին համոզելու կարիք զգացվել, որ ՋՌՀԿ մոտեցումը ճիշտ է ջրային ռեսուրսների կայուն կառավարման ու զարգացման երկարաժամկետ նպատակի հասնելու համար:

Ի՞նչ է հեռահար նպատակը

Հեռահար նպատակը հետագա վիճակը նկարագրող հայտարարագիր է: Այն նախանշում է տվյալ ժամանակահատվածը, սովորաբար մոտ 20 տարի, և չպետք է դիտարկի ավելի երկարատև հեռանկար: Խնդիրն այն է, որ հեռահար նպատակը կարող է շատ աղոտ և անհասանելի լինել: Իդեալականորեն այն պետք է մշակվի ազգային զարգացման հեռահար նպատակի համատեքստում:

Հեռահար նպատակը կա՛մ կարող է կազմվել երկրում ջրային ռեսուրսների զարգացման սկզբունքի համընդհանուր հայտարարության տեսքով կա՛մ մշակվել ավելի մանրամասն՝ ներառելով հետևյալ հարցերը.

- Ինչու՞ ջրի կառավարումը բարեփոխման կարիք ունի.
- Ինչպիսի՞ն եք ցանկանում, որ լինի ջրի կառավարումը, ասենք, առաջիկա 15-20 տարիների ընթացքում.
- Ինչպե՞ս պետք է բարելավվեն կառավարումն ու ծառայությունները.
- Ե՞րբ կիրականացվեն նշված նպատակները:

Կանխատեսումը սկսվում է ապագայի ընդհանուր տեսակետ մշակելուց՝ ներառելով սահմանված ընդհանուր նպատակներն ու խնդիրները, և դրանք վերածում է քաղաքականությունների, օրենսդրության
ու պրակտիկ գործողությունների: Կանխատեսումը կարող է կիրառվել տարածաշրջանային (երկրների միջև), համատեղ օգտագործվող ջրհավաք ավազանի (ներքին գետավազան), ազգային կամ տեղական մակարդակներով (ենթաավազան):

Շրջանակ 7 . Ջրի հեռահար նպատակներ. օրինակներ

ԹԱԻԼԱՆԴԻ ՋՐԱՅԻՆ ՀԵՌԱՀԱՐ ՆՊԱՏԱԿ

- Մինչև 2025թ., Թաիլանդը կունենա բոլոր օգտագործողների համար լավորակ ջուր արդյունավետ կառավարման, կազմակերպչական և իրավական համակարգի բարեփոխումների միջոցով, ինչը կերաշխավորի ջրային ռեսուրսների արդարացի և կայուն օգտագործումը, կենսամակարդակի և շահագրգիռ կողմերի մասնակցության վրա համապատասխան ազդեցությամբ:

ԱՐԵՎՄՏՅԱՆ ԱՖՐԻԿԱՅԻ ՋՐԱՅԻՆ ՀԵՌԱՀԱՐ ՆՊԱՏԱԿ

- Մինչև 2025թ ջրային ռեսուրսները արդյունավետ կկառավարվեն էկոլոգիապես կայուն եղանակով այնպես, որ տարածաշրջանում յուրաքանչյուր անձ իր հիմնարար կարիքները բավարարելու համար կապահովվի անվտանգ խմելու ջրով, կեղտաջրի հեռացման անվտանգ կառույցներով, կապահովվի նաև սննդի անվտանգությունը, կնպաստի չքավորության կրճատմանը, կպահպանվի մարդկանց առողջությունը, ինչպես նաև ցամաքային ու ջրային էկոհամակարգերի կենսաբազմազանությունը:

Ի՞նչ է քաղաքականությունը

Քաղաքական գործիքների տիրույթը հաճախ կարող է շփոթեցնել:

- Գործադիր իշխանության անդամների քաղաքական հայտարարությունները ոչ պաշտոնական են, սակայն քաղաքական գործչի համար դրանք կարող են լուրջ պարտավորություն լինել:
- Քաղաքական պաշտոնական հայտարարությունները սովորաբար գրավոր են և կարող են լինել Կառավարության՝ հավանության արժանացրած պաշտոնական փաստաթղթեր:
- Այն, ինչ փաստացի տեղի է ունենում, կարող է տարբերվել վերոհիշյալից և փաստորեն *(դե ֆակտո)* լինել քաղաքականություն:

Ջրային քաղաքականություն ունենալու գլխավոր պատճառներից մեկը շահագրգիռ կողմերի պարտավորություն ստանձնելն է: Ուստի քաղաքական ձգտումներ արտահայտող գրավոր փաստաթուղթը, որը պաշտոնապես կամ ոչ պաշտոնապես հաստատել է կառավարությունը, ջրային բնագավառի բարեփոխումների՝ Կառավարության պարտավորության արտահայտման արժեքավոր երևույթ է: Սա անչափ տեղին է այնպիսի բարդ և միմյանց առնչվող միջբնագավառային հարց քննարկելիս, ինչպիսին ջրային ռեսուրսների կառավարումն է, որի ժամանակ պետք է հաշվի առնվեն բազմապիսի շահեր:

Կարծու՞մ եք արդյոք, որ անհրաժեշտ է մշակել ջրային հեռահար նպատակ կամ ջրային քաղաքականու-թյուն մինչև ՋՌՀԿ պլանը:

Քաղաքականություններն ավելի մանրամասն են, քան հեռահար նպատակը, և եթե ՋՌՀԿ գաղափարները լավ չեն հստակեցվել, ապա անիմաստ է ջրային քաղաքականություն մշակել: Սա կարելի է նախաձեռնել հետագայում՝ որպես պլանի իրականացման մի մաս:

5.3. ՋՐԻ ՀԵՌԱՀԱՐ ՆՊԱՏԱԿ ՄՇԱԿԵԼՈՒ ՔԱՅԼԵՐ

Պետք է հաշվի առնվի չորս մոտեցում.

- Առկա ջրային քաղաքականությունների կամ հեռահար նպատակի համապատասխանություն կայուն զարգացման մոտեցումներին:
- ՋՌՀԿ-ի բավարար ըմբռնման ապահովում:
- Շահագրգիռ կողմերի տեսակետները:
- Հեռահար նպատակի կամ քաղաքականության քաղաքական պարտավորության ստանձնում:

Այդուհանդերձ, հարկ է ուշադիր լինել, որպեսզի պլանավորման հաշվին հեռահար նպատակ մշակելու անհամապատասխան ջանքեր չգործադրվեն:

5.3.1. Առկա ջրային հեռահար նպատակ և քաղաքականություններ

Առկա ջրային հեռահար նպատակն ու ջրային քաղաքականությունը (նաև փորձը) պետք է ուսումասիրվեն՝ ջրային ռեսուրսների կայուն կառավարման հետ համապատասխանությունը բացահայտելու համար: Եթե համապատասխանությունն առկա է, ապա ՋՌՀԿ պլանավորման գործընթացը կարող է համեմատաբար հարթ լինել, քանի որ մինչ այդ արդեն իրականացվել է ՋՌՀԿ սկզբունքների խթանման գործընթաց: Իրազեկումը և պարտավորություն ստանձնելու ու շահագրգիռ կողմերի խորհրդատվության հետագա քայլերը կարող են ավելի պակաս եռանդուն ջանքեր պահանջել, քան եթե դրանք սկսվեին ավելի քիչ նախապատրաստված հիմքով:

Նման քաղաքականությունների կամ հեռահար նպատակների բացակայությունը կամ դրանց իրականացման անհաջողությունը առաջ է բերում ջրային հարցերի պարտավորության և իրազեկումը բարելավելու կարիք մասնավորապես քաղաքական մակարդակով:

5.3.2. ՋՈՌԿ ըմբռնման ապահովում

ՋՈՌԿ-ն ջրային ռեսուրսների կայուն կառավարման նպատակին հասնելու միջոց է: Ինչպես նշվել է նախորդ բաժնում, ջրային ռեսուրսների կայուն կառավարման ու զարգացման հասնելու մեթոդների ու միջոցառումների ընբռնումը և իրազեկումը բարելավելու ունակություններ ստեղծելը ընթացիկ գործընթաց է: Կարևոր է համապատասխան ուսուցողական նյութերի ու գործիքների մշակումը՝ թիրախ խմբերի շրջանում տարածելու համար: Ավելի բազմաբովանդակ նյութեր են անհարժեշտ ՋՈՌԿ սկզբունքների քաղաքական պարտավորություն ապահովելու, քան շահագրգիռ կողմերին համոզելու համար:

5.3.3. Շահագրգիռ կողմերի տեսակետներ

Արդեն շեշտվել է ազգային ջրային հեռահար նպատակ ու ազգային ջրային քաղաքականություններ ձևավորելու գործընթացում շահագրգիռ կողմերի մասնակցության կարևորությունը: Տեղական պայմաններից և ռեսուրսների առկայությունից կախված՝ հասարակության հետ խորհրդակցելու ակտիվությունը տարբեր երկրներում տարբեր է:

Խորհրդատվությունն առնվազն պետք է քաղաքականության նախագիծ մշակելու տեղեկատվություն ապահովի և այդ նախագիծը մատչելի դարձնի շահագրգիռ և ազդակիր կողմերին՝ նրանցից դիտողություններ ստանալու ակնկալիքով: Բացի դրանից շահագրգիռ և ազդակիր կողմերի հետ կարելի է անցկացնել պաշտոնական և ոչ պաշտոնական խորհրդակցություններ՝ հասարակական հանդիպումների և բաց կամ փակ հրավերներով սեմինարների միջոցով:

Որոշ երկրներում հասարակական խորհրդակցությունները եղել են միայն ցուցադրական՝ քիչ ուշադրություն դարձնելով դրանից բխող առաջարկներին: Նման դեպքերում վերջնական փաստաթուղթը հիմնականում նույնն է, ինչ առաջնային նախագիծը:

Այլ դեպքերում պատրաստվել են տարբեր նախագծեր և ուղարկվել լայն քննարկման, իսկ քաղաքականության վերջնական փաստաթուղթը ներառել է տարբեր մոտեցումներ: 1997թ. Ջրի օրենքը ձևակերպելիս Հարավային Աֆրիկայի ընդունած մոտեցումը ներառել է հետևյալը: Առանձին շահագրգիռ կողմերի հետ փաստաթուղթը քննարկելու համար նախապես հայտարարվել են սեմինարների օրերը: Ամեն մի հանդիպման ժամանակ քննարկումների արդյունքները ներառվել են փաստաթղթի մեջ և ներկայացվել հաջորդ սեմինարի շահագրգիռ կողմերին: Այսպիսով, քաղաքականության փաստաթղթի կրկնությունները երաշխավորել են տրամաբանորեն շաղկապված և համաձայնեցված, սակայն սահմանված ժամանակացույցով ընթացող խորհրդատվական գործընթաց:

Շահագրգիռ կողմերի ներգրավումը կարևոր է՝ ոչ միայն երաշխավորելու «առավել հաջողված» վերջնական փաստաթուղթ, այլև որովհետև այն ապահովում է մասնակցություն՝ փաստաթղթում նշված նպատակների ու սկզբունքների մշակմանը և ստեղծում է դրանք իր սեփականությունը համարելու զգացում: Նման ներգրավվածության ապահովումը շատ ավելի մեծ երաշխիք է, որ այն ամենը, ինչը ծրագրվել է, կիրականացվի առանց խոչընդոտների ՋՈՌԿ պլանի ներդրման հաջորդ փուլերում: Դոնորները լավ տեղյակ են սրան և շատ ավելի են հակված աջակցելու այն երկրների ջրային ծրագրերին, որտեղ ապահովված է շահագրգիռ կողմերի մասնակցության բարձր մակարդակ:

Օրինակ

Բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ սկզբնապես կարող է սեմինար անցկացվել՝ հիմնական հարցերը քննարկելու և համաձայնեցնելու, ինչպես նաև ՋՌՀԿ պլանի մշակման կառույցներ ստեղծելու: Այս փուլում ամենակարևորը ակտիվ քննարկումներ կազմակերպել ու հնարավորություններ ստեղծելն է, որպեսզի բոլոր մասնակիցները հնարավորություն ունենան խոսելու իրենց առանձնապես հուզող հարցերի մասին: Աշխատանքային ենթախմբերի՝ գլխավոր հարցերի քննարկումները կընդլայնեն բոլոր գլխավոր շահագրգիռ կողմերի իրականացրած ներդրումների հնարավորությունները: Այս աշխատանքային խմբերը կարող են կազմավորվել՝ հաշվի առնելով հնարավոր հիմնախնդիրներն այնպիսի ոլորտում, ինչպիսին ռազմավարական պլանավորման կառուցվածքն է:

Ամեն մի խմբի կարևոր է, որ նրա եզրակացությունները ու առաջարկները համարվեն իր սեփականությունը: Որպես կառավարման խմբի ղեկավարներ առաջատար մասնագետներ նշանակելը, որոնք համակարգող կոմիտեների անդամներ են, կարող է չափազանց արդյունավետ լինել:

Առաջին սեմինարը բոլոր շահագրգիռ կողմերի առաջին հնարավորությունն է՝ ծանոթանալու ռազմավարական պլանի նպատակներին, քննարկելու գլխավոր հարցերը և ըմբռնելու ՋՌՀԿ-ն ու ջրային ռեսուրսների բարելավված կառավարման նպատակները:

Ջրային հեռահար նպատակի, դրա նախագծի առաջարկությունները կամ առկա տարբերակի մասին դիտողությունները կարող են լինել սեմինարի արդյունք: Առաջին սեմինարը անչափ կարևոր է ամբողջ նախաձեռնության հաջողության համար, քանի որ այն կարող է երաշխավորել սկզբնական հետաքրքրություններն ու մասնակցությունը:

5.3.4. Հեռահար նպատակի կամ քաղաքականության քաղաքական պարտավորության ձեռքբերում

Ի՞նչ կանեիք, որպեսզի ջրային հեռահար նպատակն ընդունվեր քաղաքական նպատակով:

Քաղաքական պարտավորության ձեռքբերումը կարելի է գնահատել որպես առաջին փորձ՝ ՋՌՀԿ պլանի հավանական ընդունելի լինելը հաստատելու համար: Որքանո՞վ է ջրային ռեսուրսների կայուն կառավարումը հետաքրքրություն առաջացրել քաղաքական մակարդակով: Այս վաղ փուլում անհրաժեշտ է, որ երաշխավորվի ՋՌՀԿ ավարտված պլանի հետագա իրականացումը:

Մեթոդները ուրվագծված են Նմուշ 4-ում:

ՕԳՏԱԿԱՐ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐ ԻՆՏԵՐՆԵՏԻՑ

- Հեռահար նպատակ
  - ECDPM, Օժանդակ գործիքներ (Կառուցվածքային զարգացում, սովորել կիրառելով և խորհրդակցելով).
  http://www.cap-net.org/FileSave/34_facilitation_tools.doc
- Ինչպե՞ս կառավարել «ուղեղների հարձակում» թեմայով սեմինարները
  - http://www.uiweb.com/issues/issue34.htm



6. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

6.1. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Իրավիճակի վերլուծության արդյունքը հաշվետվություն է, որը պարունակում է ջրային ռեսուրսների բարելավված կառավարման գործընթացի, չլուծված հարցերի, հիմնախնդիրների և որոշ լուծումների նկարագրություններ: Այս հիմնախնդիրների, հարցերի և լուծումների վերլուծումն ու ըստ սոցիալական, տնտեսական և քաղաքական գերակայությունների դասակարգումը հաշվետվության կարևոր մոտեցումներից է: Վերլուծությունը կատարվում է ջրային ռեսուրսների կայուն կառավարման և զարգացման հասնելու տեսանկյունից:

Նկար 6 .Իրավիճակի վերլուծության փուլ. ուղղորդող ուժեր, արդյունքներ, գործողություններ



6.2. Ո՞Ր ԿԱՐԻՔՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԲԱՎԱՐԱՐՎԵՆ

Այս քայլի նպատակն է վերլուծել առկա իրավիճակը և օգտագործել տեղեկությունները՝ կանխատեսելու ՋՌՀԿ հետագա կարգավորումները:

Իրավիճակը վերլուծելիս որոշվում են ազդեցության հիմնական գործոնները: Հատկապես կարևոր է սկզբնապես դիտարկել այն ուղղակիորեն ազդեցություն կրողների տեսանկյունից: Հիմնախնդիրների իրազեկումը և լուծումներ փնտրելու դատողությունները ուղղակիորեն կապված են շահագրգիռ կողմերի փորձից:

ՋՈՌԿ պլանի հաջող մշակման նպատակով իրավիճակի վերլուծությունն իրականացվում է՝ այն համադրելով կայուն զարգացման սկզբունքներին, որոնք արտացոլված են ՋՈՌԿ մոտեցումներում:

Ջրի ազգային հեռահար նպատակը կամ քաղաքականությունը և այս նպատակները համադրելիս վերլուծությունն ու մեկնաբանությունը ավելի շուտ պետք է կենտրոնացվեն և նպատակաուղղվեն ոչ թե ախտանշանները, այլ հիմնական սահմանափակող գործոններն ու պատճառները վերացնելուն:

Հաշվետվությունը պետք է համապատասխան ձևով արտացոլի առկա ջրատնտեսական համակարգերի մտահոգություններն ու դրանց ազդեցությունները օգտագործողների, զարգացման, շրջակա միջավայրի և հասարակության վրա ընդհանուր առմամբ:

Հաշվետվությունը պետք է լայնորեն տարածվի. նշանակում է՝այն պետք է ամփոփվի համապատասխան մակարդակով: Հաշվետվությունը պետք է ծառայի որպես գործընթացի թափանցիկության և ջրային ռեսուրսների կայուն կառավարմանն անդրադառնալու Կառավարության պարտավորության կարևոր ցուցանիշ: Քաղաքական գործիչներին և կառավարության առաջատար անդամներին հաշվետվություն ներկայացնելը կօգի իրականացնելու քաղաքական պարտավորությունները, ստանալու նրանց՝ մշակվող լուծումների և գործողությունների աջակցությունը, ըմբռնելու մշակված պլանը իրականացնելու նշանակությունը:

6.3. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՔԱՅԼԵՐ

Մոտեցում

Մինչ շեշտադրվում է շահագրգիռ կողմերի մասնակցությունը, չպետք է անտեսվեն վիճակագրական մոտեցումները ու տվյալների որակի հարցերը: Իրավիճակի վերլուծության հիմնախնդիրներից մեկը վերլուծական մոտեցումների ու շահառուների ներդրումների հավասարակշռություն ստեղծելն է:

Վերլուծությունն իրականացնելիս կարևոր է նաև փորձագիտական գնահատումը, երբ պահանջվում է բարձրորակ մասնագիտական փորձաքննություն. անհրաժեշտ են լայնածավալ ուսումնասիրություններ կամ անկախ մասնագետի կարծիք:

Տվյալները համակարգված հավաքելու համար գոյություն ունեն մի քանի փոխկապակցված սկզբունքներ.

- Տարբեր բնագավառների շահառուների խմբերը պետք է իրենք պլանավորեն տեղեկություններ հավաքելու, վերլուծելու ու ուսումնասիրելու գործընթացները՝ ռազմավարության ու արդյունքների **սեփականության զգացում** երաշխավորելու համար:
- Վերլուծությանն առնչվող բոլոր առաջադրանքները լավագույնս իրականացվում են տեխնիկական փորձի, ուսուցման ու հետազոտության գոյություն ունեցող կենտրոնների հետ համատեղ՝ միաժամանակ աջակցելով դրանց գործունեությանը:
- Քանի որ վերլուծությունը առանցքային դեր ունի ռազմավարություն մշակելիս, այն պետք է **գործարկվի, համաձայնեցվի և հաստատվի ամենաբարձր մակարդակով** (այսինքն՝ Կառավարության գլխավոր նախարարությունների կամ պլանավորման ղեկավար կոմիտեի կողմից): Սա կընդարձակի այն հնարավորությունը, որ վերլուծությունը լինի կենտրոնացված պլանը և աշխատանքային ժամանակցույցը մշակելիս, և որ պլանը կիրականացվի:
- Միևնույն ժամանակ վերլուծությունը **ճշգրիտ համակարգման** կարիք ունի: Տրամաբանական է, որ կառավարման խումբը համակարգի վերլուծությունը, սակայն նա ինքնուրույն չպետք է իրականացնի հետազոտություններից և ոչ մեկը: Անհրաժեշտ է ընդգրկել շատ դերակատարների: Նրանց ակտիվ մասնակցությունը իրավիճակի նկարագրությանն ու վերլուծությանը կնպաստի ուսուցողական կառույցներ ստեղծելուն:

Խնդիրներ

Վերլուծության խնդիրները պետք է հստակ և հասկանալի լինեն: Ջրային բնագավառը լայն է և ընդգրկում է բազում հարցեր: Չնայած դրան՝ դասընթացի այս նյութերը նախապատրաստելու նպատակը ջրային ռեսուրսների կայուն կառավարման հասնելն է, ինչն արդեն իսկ սահմանափակում է վերլուծության սահմանները: Իրավիճակի վերլուծության նպատակն է ջրային ռեսուրսների կառավարման առկա համակարգը դիտարկել ՋՌՀԿ սկզբունքների և կայուն կառավարման ու զարգացման նպատակի տեսանկյունից: Լուծում պահանջող հիմնախնդիրներ ու հարցեր, բացահայտված թույլ կողմեր կարող են ծագել իրարից անկախ հետևյալ ոլորտներում.

- Ջրային ռեսուրսների քաղաքականություն
- Ջրային (ռեսուրսների) օրենսդրություն
- Ջրի կառավարման ինստիտուտներ
- Ջրային (ռեսուրսների) կառավարման գործընթացներ:

Արդյոք կա՞ ջրաբանական և սոցիոլոգիական տվյալների կարևորության տարբերություն :

Հիմնախնդիրների պատճառներ կարող են ծագել նաև այլ ոլորտում:

Ուստի երկրում ջրային ռեսուրսների կառավարման առկա իրավիճակի վերլուծությունը պետք է բացահայտի կառավարման կառույցների բացթողումները և հնարավորություն ընձեռի դասակարգելու անհրաժեշտ գործողությունները ըստ գերակայությունների:

Տվյալների հավաքում

Իրավիճակի վերլուծության համար տեղեկություններ հավաքվում են բազմազան աղբյուրներից:
Արդյունավետության տեսանկյունից պլանավորման գործընթացը պետք է հենվի նաև նախկին գիտելիքների ու փորձի վրա, և հաշվի առնվեն նախկին փորձից քաղած դասերը: Նման տեղեկատվությունը հազվադեպ է լինում օգտագործման համար մատչելի և ճիշտ ձևակերպված: Այն հաճախ գոյություն է ունենում որևէ առանձնահատուկ ձևով և գտնվում է ջրային ռեսուրսների ու ջրին առնչվող բնագավառների մասնագետների ու գործնական աշխատողների, ինչպես նաև Կառավարության ու կառավարման անձնակազմի տրամադրության ներքո: Երկրի ղեկավարները անչափ կարևոր տեղեկություններ են ունենում պլանի նպատակներին ընդհանուր առմամբ հավանություն տալու և դրա իրականացմանը աջակցելու տարբեր գործընթացների մասին:

Տեղեկությունները պետք է հավաքվեն և մատչելի լինեն՝ ներառյալ՝

- ՋՌՀԿ փորձը այն երկրի մակարդակով, որտեղ ՋՌՀԿ կառուցվածքային տարրերը լիովին կամ մասամբ ավարտված են: Ազգային ջրային օրենսդրությունը, կառավարման կազմակերպությունները և ջրային ռեսուրսների գնահատման գործիքները անընդհատ փոփոխվում են աշխարհի բազմաթիվ երկրներում և ՋՌՀԿ-ի կարևոր բաղադրիչներ են:
- ՋՌՀԿ միջազգային փորձը, որը կարող է միավորել և՛ տարբեր երկրներից, և՛ այն մի խումբ երկրներից ձեռք բերված փորձը, որտեղ գերակշռում են անդրսահմանային ջրերը և տարածաշրջանային մոտեցումները:
- Ազգային պլանավորման գործընթացների նախկին և ներկա փորձը այլ, հատկապես միջբնագավառային կապերով ոլորտներում: Նման գործընթացների օրինակներ են չքավորության նվազեցման ռազմավարությունների և կայուն զարգացման պլանների, շրջակա միջավայրի պահպանության ռազմավարությունների և գետավազանային կառավարման պլանների մշակումները:
- ՋՌՀԿ պլանավորման գործընթացում միջոլորտային հարաբերությունները կարգավորելու փորձը, ինչպիսին են հասարակության մասնակցությունը և գործընկերությունների զարգացումը, կանանց ներգրավումը ջրային ռեսուրսների կառավարման գործընթացին, ունակություններ ձեռք բերելը, լիազորություններ տալը և որոշումներ ընդունելու ապակենտրոնացումը:

ՋՌՀԿ-ի ընթացիկ իրավիճակի գնահատումը ներառում է միջբնագավառային մոտեցումներ, ինչպես ներկայացված է Շրջանակ 8-ում: Ընթացիկ իրավիճակի վերլուծությունը կարելի է սկսել ազգային զարգացման նպատակների ու ցուցանիշների ուսումնասիրությունից՝ գնահատելով այդ նպատակներին հասնելուն առնչվող ջրային ռեսուրսների դերը: Պետք է հաշվի առնվեն նաև սոցիալական/ մշակութային/ կառուցվածքային համատեքստը և մակրոտնտեսական քաղաքականությունները, որոնք պայմանավորում են ջրային ռեսուրսների զարգացման, կառավարման և օգտագործման ընթացիկ քաղաքականություններն ու փորձերը:

6.4. ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Իրավիճակի վերլուծության ժամանակ պետք է գնահատվի և՛ ստորերկրյա, և՛ մակերևութային ջրային ռեսուրսների քանակն ու որակը, ոչ ավանդական աղբյուրների (վերականգնված, կրկնակի օգտագործված, վերաշրջանառված և աղազերծված) օգտագործման հնարավորությունը, ինչպես նաև ջրի պահանջարկի կառավարումը: Անհրաժեշտ է ճշտել ջրաբանական շրջապտույտի համապատասխան պարամետրերը և գնահատել ջրի պահանջարկը զարգացման տարբեր այլընտրանքների ժամանակ: Վերլուծության ժամանակ պետք է հատուկ ուշադրություն դարձնել ջրային ռեսուրսների հիմնական հիմնախնդիրներին և հնարավոր հակամարտություններին, դրանց լրջությանն ու սոցիալական հետևանքներին, ինչպես նաև ռիսկերին ու վտանգներին, ինչպիսիք են հեղեղներն ու երաշտները: Հիմնական ոլորտները ամփոփ ներկայացված են Շրջանակ 8-ում: ՋՌՀԿ պլանավորման ժամանակ հարկ է զգույշ լինել, որպեսզի չցուցաբերվի խիստ տեխնիկական մոտեցում, այլ շեշտվեն կառավարման համակարգերը և շրջակա միջավայրի արդյունավետ, կայուն օգտագործման հնարավորությունները:

Ցամաքային և ջրային էկոհամակարգերի փոխկապակցվածության գիտակցումը ռեսուրսների գնահատման կարևոր տարրերից է: Ջրային ռեսուրսների որակյալ գնահատումը պետք է հենվի լավ հիմնավորված ֆիզիկական և սոցիալ-տնտեսական տվյալների վրա: Չնայած դրան՝ հաճախ այդ տվյալները բացակայում են, և դա ջրային ռեսուրսների կառավարման համակարգի թույլ կողմ է:

Սոցիալ-տնտեսական մոտեցումները կարևոր են ջրօգտագործողների (ներառյալ շրջակա միջավայրը) ու ընդհանրապես հասարակության վրա ջրի կառավարման գործող համակարգի ազդեցությունները դիտարկելիս: ՋՌՀԿ ներդնելիս ջրային ռեսուրսների գնահատումը ջրաբանական բաղադրիչը դիտարկում է զարգացման սոցիալ-տնտեսական հիմնահարցերի ավելի լայն համատեքստում, ինչպիսիք են քաղաքների աճը, հողօգտագործման փոփոխվող համակարգերը, շրջակա միջավայրի կայունությունը և անդրսահմանային հիմնախնդիրները:

Ձեր պայմաններում ո՞րն է ջրային ռեսուրսների կառավարման ամենակարևոր հիմնահարցը:

Վերոնշյալ մոտեցումը յուրահատուկ նշանակություն ունի ՋՌՀԿ գործընթացի տարածաշրջանային համագործակցության համար: Վերլուծության համապատասխան միավորը ամբողջ ավազանն է՝ անկախ այն հանգամանքից հատում է ազգային սահմանները, թե ոչ: Ազգային քաղաքականությունն ու ռազմավարությունները պետք է հատուկ պարտավորություն ստանձնեն ջրային ռեսուրսներն այս համընդգրկուն մոտեցմամբ գնահատելու համար, քանի որ միջազգային պայմանագրերն ու միջազգային ջրերի կառավարումը զգալիորեն կշահեն՝ ազգային մակարդակով ճիշտ հիմքերի վրա դրված ջրային ռեսուրսների կառավարումից:

Ցուցանիշներ

Անհրաժեշտ է հաջորդաբար որոշել նաև ջրային ռեսուրսների կայուն կառավարման ցուցանիշների կազմը: Հենց որ դրանք պարզաբանվեն, ցուցանիշներն աշխատանքի առաջընթացը գնահատելու և իրավիճակի վերլուծությունն իրականացնելու անհրաժեշտ հիմք կապահովեն:

Որո՞նք են ջրային ռեսուրսների կայուն կառավարման լավ ցուցանիշները:

Շրջանակ 8 . Ջրային ռեսուրսների իրավիճակի վերլուծության շրջանակներ

- **Կառուցվածքային և իրավական վերլուծությունը** գնահատում է կազմակերպությունների, օրենքների ու քաղաքականությունների մանդատները ջրային ռեսուրսների կայուն կառավարման հակամարտությունների, համապատասխանության, կրկնողության և համատեղելիության տեսանկյուններից:
- **Ջրաբանական և ջրաերկրաբանական գնահատումն** ուսումնասիրում է մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների մատչելիության աստիճանը՝ հաշվի առնելով սեզոնայնությունն ու առաջարկի երկարաժամկետ միտումները:
- **Պահանջարկի կառավարումը** վերլուծում է ջրի մրցակցային օգտագործումները առկա ֆիզիկական ռեսուրսի հիմքով և գնահատում ջրի պահանջարկը (տարբեր գնային պայմաններում)՝ այսպիսով օգնելով նաև որոշելու զարգացման տարբեր սցենարներում ջրային ռեսուրսների կառավարման սակագնային եկամուտներից մատչելի ֆինանսական ռեսուրսները:
- **Շրջակա միջավայրի վրա ազդեցությունների գնահատումներ (ՇՄԱԳ).** տվյալներ են հավաքվում զարգացման ծրագրերի սոցիալական և բնապահպանական ազդեցությունների վերաբերյալ: ՇՄԱԳ-ը միջբնագավառային ինտեգրացիայի կարևոր գործիք է, որն ընդգրկում է ծրագիրը մշակողներին, ջուրը կառավարողներին, որոշում կայացնողներին և հասարակությանը: Այն կարելի է դիտել որպես ջրային ռեսուրսների գնահատման հատուկ ձև:
- **Սոցիալական գնահատումը** ուսումնասիրում է, թե ինչպես են սոցիալական ու կազմակերպչական կառուցվածքներն ազդում ջրի օգտագործման ու կառավարման, ջրին հավասար մուտք ունենալու աստիճանի (ինչպես ըստ գենդերի) վրա, և թե ինչպես են առանձին ծրագրերն ազդում սոցիալական կառուցվածքի վրա:
- **Ռիսկի կամ խոցելիության գնահատումը** վերլուծում է արտակարգ իրավիճակների, ինչպես, օրինակ, հեղեղների հավանականությունը, զարգացման ծրագրերի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, կառավարման արդյունքները կամ որևէ առանձին ծրագրի ազդեցությունը սոցիալական կառուցվածքների վրա, երաշտները և դրանցից հասարակության խոցելիությունը:
- **Պահանջարկի կառավարման գնահատումը** ուսումնասիրում է ջուրը խնայողաբար օգտագործելու և պահանջարկը կառավարելու արդյունքում ջրամատակարարման հնարավորությունը:
- **Ոչ ավանդական աղբյուրների գնահատումն** ուսումնասիրում է ջրի մշակման, մաքրման, կրկնակի օգտագործման, վերաշրջանառության և աղազերծման հնարավորությունները:

Աղբյուր. Adapted from the ԳՋՀ ՋՈՌԿ Toolbox

Անցումային նպատակների որոշում

Իրավիճակի վերլուծության հաշվետվությունը պետք է ներկայացնի վիճելի հարցերն ու հիմնախնդիրները և ամենահրատապները դասակարգի ըստ գերակայության: Սրա համար պետք է մշակվեն չափանիշներ (տե՛ս Շրջանակ 9-ը): Հաշվետվությունը (ոչ թե պլանավորման փաստաթուղթը) պետք է պարունակի խորհրդակցությունների ընթացքում պարզաբանված լուծումների տեսակները և ապահովի դրանց նախնական վերլուծությունը՝ շահագրգիռ կողմերի համար ընդունելի լինելու, իրագործելիության և ռազմավարության տեսանկյունից: Այս մոտեցման նպատակն է աստիճանաբար ապահովել փոխհամաձայնեցված որոշումներ կայացնելու գործընթաց՝ ջրային ռեսուրսների հետագա ռազմավարության վերաբերյալ: Իրավիճակի վերլուծությունը հնարավոր լուծումների լայն հորիզոններ է բացում և հնարավորություն տալիս, որ այդ լուծումները հաշվի առնվեն մինչև ջրային ռեսուրսների ռազմավարություն և պլան մշակելը: Ռազմավարություն մշակելու ընթացքում շահագրգիռ կողմերը բավականին լավ են տեղեկացվում, որ կարողանան ավելի արդյունավետ արձագանքել առաջարկվող մոտեցումներին:

Նպատակներն ըստ գերակայության դասակարգելիս կարելի է կենտրոնանալ կառավարման հետագա իրավիճակին և ավելի քիչ ուշադրություն դարձնել դրան հասնելու միջոցներին: Նմանապես կարելի է դիտարկել սկզբնական հեռանկարը և գերակա նպատակների քննարկման հիմքերը մինչև ռազմավարություն ու պլան մշակելը: Քաղաքական մակարդակով ներգրավումն ու հետադարձ կապն այս փուլում կարևոր են՝ գործընթացի քաղաքական պարտավորություն ապահովելու համար, և որպես երաշխիք՝ հաշվի են առնվում իրավիճակի վերլուծությունն ու տեղեկացվում են հնարավոր լուծումներին ու գործողություններին:

Շրջանակ 9 .ՋՌՀԿ հիմնախնդիրներն ըստ գերակայությունների դասակարգման չափանիշների

- Այլ հիմնախնդիրների լուծման խոչընդոտ է:
- Ազդեցություն ունի մեծ թվով մարդկանց վրա:
- Արդարության հասնելու հիմնախնդիր է:
- Կբարելավի զարգացումը և կնվազեցնի չքավորությունը:
- Զգալիորեն կբարելավի ռեսուրսի արդյունավետությունը:
- Դրական ազդեցություն կունենա շրջակա միջավայրի վրա:
- Կբարելավի ջրային ռեսուրսների մատչելիությունը:

6.5. ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Շահագրգիռ կողմերի մասնակցությունն ընդհանուր առմամբ դիտարկվում է Նմուշ 3-ում:

Շահագրգիռ կողմերը կարևոր դեր են խաղում իրավիճակը վերլուծելիս, քանի որ կարող են թվերից ու վիճակագրական տվյալներից զատ բացահայտել ջրային ռեսուրսների կառավարման համակարգի իրական ազդեցությունը հասարակության ու զարգացման վրա: Այս փուլում նրանց ընդգրկելու նպատակը հիմնախնդիրները որոշելն է, ըստ գերակայության դասակարգելը և հստակ ու հասկանալի ձևակերպելը: Կարևոր է գիտակցել, որ շահագրգիռ կողմերի տեսակետները և հետաքրքրությունները կարող են իրարամերժ լինել: Այստեղ օգտակար կարող են լինել բանակցելու հմտությունն ու հակամարտություններ լուծելու մեթոդների կիրառումը:

Մտահոգության առարկա հարցերը պարզաբանելու համար կարելի է օգտագործել հետևյալ մոտեցումը.

Քայլ 1. Վերլուծել՝ ով է մասնակցում

Առաջին քայլը բացահայտում է ծրագրի/նախագծի խոշոր դերակատարներին/մասնակիցներին, վերլուծում է նրանց շահերն ու նպատակները և փոխհարաբերությունները: Դրա նպատակն է պարզաբանել սոցիալական իրավիճակը և ծրագրի կառուցվածքային շրջանակներում գերակշռող հարաբերությունները: Խոշոր դերակատարները ներառում են ոչ միայն հավանական հաղթող, այլև հնարավոր պարտվող կողմերին:

Քայլ 2. Հիմնախնդրի վերլուծություն

Ջրային ռեսուրսների հիմնախնդիրների նշանակալի և անհետաձգելի գերակա հարցերը բացահայտում են շահագրգիռ կողմերը և խմբավորում «հիմնախնդիրների ծառի» տեսքով. նշվում են հիմնախնդիրների պատճառներն ու հետևանքները, և որոշվում է հիմնական հիմնախնդիրը: Ջրային ռեսուրսների օգտագործման վերաբերյալ անխուսափելիորեն կծագեն հակասական տեսակետներ և պահանջարկներ:

Լուծում պահանջող խնդիրները կարող են բաժանվել եկամուտների ապահովման/պահանջարկի (օրինակ՝ տնտեսական տարբեր բնագավառների աճող և հաճախ հակամարտող պահանջարկների բավարարում) և ռեսուրսի վրա ազդեցության (օրինակ՝ կլիմայի փոփոխականության ու փոփոխությունների, մարդկային գործունեությունների և հողօգտագործման ազդեցություններ) հարցերի:

- *Եկամուտների ապահովում / պահանջարկի հարցեր*

Շատ երկրներում առկա են լուծման կարիք ունեցող այնպիսի հարցեր, ինչպիսիք են անվտանգ խմելու ջրի և ջրահեռացման մուտքի ապահովումը նրանց համար, ովքեր ներկայումս չեն սպասարկվում, քաղաքային ջրապահանջի և կեղտաջրի արտանետումների արագ աճը, սննդի աճող արտադրության համար ջուր ապահովելը, հեղեղներից և երաշտներից խոցելիության նվազեցումը (ներառյալ կլիմայի փոփոխության հնարավոր ազդեցությունները), մարդկանց առողջության և արտադրության վտանգների ռիսկի նվազեցումը, ոռոգվող գյուղատնտեսության, արդյունաբերության և այլ տնտեսական գործունեությունների աճող պահանջարկների բավարարումը, հիմնական ռեսուրսների և կենսական կարևոր էկոհամակարգերի պահպանությունը և այս հաճախ հակասական պահանջներն ըստ գերակայության դասակարգելը:
Այս հարցերին առնչվելիս կարևոր է տղամարդկանց և կանանց հավասար հնարավորության ապահովումը:

- *Ռեսուրսների վրա ազդեցություն հարցեր*

Եկամուտների ապահովում/պահանջարկ վերը նշված հարցերը պետք է հավասարակշռված լինեն՝ հենվելով հիմնական ռեսուրսների վիճակի և դրանց սպառնալիքների, մարդկային գործունեությունների և հողօգտագործման (ինչը կարող է առաջացնել անտառածածկ տարածքների կրճատում, հողասահքեր և նստվածքագոյացում, աղտոտում և էկոհամակարգերի վատթարացում, ճահճուտային տարածքների և ստորերկրյա ջրերի մակարդակների նվազում և աղի ջրի ներհոսք), ինչպես նաև բնական երևույթների այնպիսի ազդեցությունների գիտելիքների վրա, ինչպիսիք են կլիմայի տատանումներն ու փոփոխությունը, անապատացումը, հեղեղներն ու երաշտները:

Ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման հիմնական ուղղվածությունը հակամարտությունները կառավարելն է: Ի վերջո Կառավարության դերը ռազմավարական պլանավորման փուլում հնարավոր հակամարտությունների լուծումն է: Չնայած նմանատիպ միջոցառումները կնվազեցնեն իրականացման հաջորդ փուլերում ծագող հակամարտությունների թիվը, այնուամենայնիվ, չեն կարող լիովին վերացնել դրանք: Սովորաբար անհրաժեշտ է լինում ստեղծել հակամարտությունները շարունակական լուծելու պաշտոնական գործընթաց:

Որտե՞ղ են հնարավոր շահագրգիռ կողմերի միջև հակամարտությունները, և ինչպե՞ս կլուծեք դրանք:

Վարժություն

Փոքր խմբով պատրաստել իրավիճակի վերլուծության հաշվետվության բովանդակության նախագիծ՝ հաշվի առնելով Ձեր երկրի ջրային ռեսուրսների կառավարման իրավիճակը:

Քաղաք դասեր

1.Տեղեկատվություն փոխանակելու և մասնակցությունն ապահովելու պարտավորություն ստանձնելը մարտահրավեր է: Մյուս բնագավառները կարող են սպառնալիք զգալ և ընտրել ընդհանրապես չհամագործակցելու տարբերակ:
2. Ջրային ռեսուրսների գնահատումը հաճախ անհրաժեշտ է լինում իրականացնել մի քանի քայլով՝ աստիճանաբար բարդացնելով: Ջրային ռեսուրսների արագ գնահատումը կարող է օգնել՝ բացահայտելու և թվարկելու ամենակարևոր հարցերը և որոշելու գերակա ոլորտները: Նախնական գնահատմամբ կարելի է պարզել առավել մանրամասն ուսումնասիրությունների անհրաժեշտությունը:
3. Աղքատ տեղեկատվական բազան ջրային ռեսուրսների վատ կառավարման ցուցանիշ է:
4. Ջրային առանցքային հիմնախնդիրների և ռիսկերի ու կորուստների գնահատմամբ անհրաժեշտ տվյալների կարիքներն ըստ գերակայության դասակարգելը կնպաստի քաղաքական աջակցություն ու ռեսուրսներ ապահովելուն:
5. Երբ ջրային ռեսուրսների գնահատման համար պահանջվող տվյալները հավաքում են տարբեր կազմակերպություններ, դրանք պետք է համատեղվեն ստանդարտների, որակի երաշխավորության, էլեկտրոնային մատչելիության և փոխանցման տեսանկյուններից:
6.Ջրի կառավարման հիմնախնդիրների լուծումներ հաճախ առաջարկում են ուղղակիորեն ազդակիր շահագրգիռ կողմերը:

ՕԳՏԱԿԱՐ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐ ԻՆՏԵՐՆԵՏԻՑ

- Ջրային ռեսուրսների գնահատում. WMO UNESCO. Ազգային կարողությունների վերլուծության ձեռնարկ
  - http://www.wmo.ch/web/homs/documents/english/handbook.pdf
- Կալիֆորնիական ջրբաժանի գնահատման ուղեցույց:
  - http://cwam.ucdavis.edu/Manual_chapters.htm
- WB. Մասնակցություն և սոցիալական գնահատում. գործիքներ և մեթոդներ:
  - http://wwwwds.worldbank.org/servlet/WDSContentServer/WDSP/IB/1996/04/01/000009265_3980624143608/Rendered/PDF/multi0page.pdf
- Կանանց կարգավիճակը, Կանադայի կառավարություն. Գենդերային վերլուծություն: Քաղաքականության ձևավորման ուղեցույց:
  - http://www.swc-cfc.gc.ca/pubs/gbaguide/index_e.html
- Կիրարկման խորհրդատվություն. Տվյալների և տեղեկատվության գնահատման հենք.
  - http://www.methodfinder.net/pdfmethods/methodfinder/methodfinder_method67.pdf

Կանանց դերը ՋՌՀԿ-ում. Նմուշ 5. Կանանց դերը քաղաքական գործընթացում և կազմակերպություններում. հրահանգիչների ուսուցանում. GWA
- Այս նյութերը կարելի է անվճար պատվիրել info@cap-net.org հասցեով:
- Կիրառման հանձնարարականներ. Հիմնախնդիրների ծառ:
  - http://www.methodfinder.net/pdfmethods/methodfinder/methodfinder_method1.pdf



7. ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

7.1. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Պլանավորման այս փուլի արդյունքը ջրային ռեսուրսները հստակ նպատակներով կառավարելու ռազմավարությունն է: Ռազմավարությունը չպետք է ուղղվի ընթացիկ հիմնախնդիրների լուծմանը կամ կարճաժամկետ նպատակների իրագործմանը, այլ պետք է ստեղծի ջրային ռեսուրսների կայուն կառավարման և զարգացման հասնելու հստակ երկարաժամկետ շրջանակ: Այնուհետև ՋՌՀԿ պլանը կօգտագործվի, որպեսզի իրականացվի պլանավորված մի ռազմավարությունից մյուսին անցումը:

Նկար 7 . Ռազմավարությունների և տարբերակների մշակման փուլ. ուղղորդող ուժեր, արդյունքներ և գործունեություններ



7.2. ԻՆՉԻ՞Ց ՍԿՍԵԼ

Ընդունելով, որ ջրային ռեսուրսների համապարփակ կառավարումը ապահովում է ջրային ռեսուրսների կայուն կառավարման սկզբունքներ, հարց է ծագում՝ ինչ միջոցներ պետք է ձեռնարկել, ինչ փոխել ջրի կառավարման մեջ, և ինչպիսին կլինեն առաջարկված փոփոխությունների հետևանքները: Այս հարցերին պատասխանելը հեշտ չէ, և իրականում կարող են շատ տարիներ պահանջվել մինչ ջրային բարեփոխումները լիարժեք իրականացվեն և արդյունավետ գործեն:

Ի՞նչ տարբերություն կա ռազմավարության և պլանի միջև:

Տեսականորեն համապարփակ մոտեցումը, որը բարենպաստ պայմաններ է ստեղծում ջրային ռեսուրսները կայուն զարգացնելու համար, պետք է մեծ ազդեցություն ունենա: Գործնականում որոշակի հարցերից սկսելը կարող է ավելի լավ արդյունքներ տալ: Սկզբնական շրջանում չափազանց փառատենչ լինելը (քաղաքական, հասարակական և ունակությունների խնդիրների անտեսում, որոնց լուծման համար առավել հզոր միջոցներ են անհրաժեշտ) կարող է հանգեցնել այնպիսի ռազմավարության, որը հոյակապ շարադրված է թղթին, սակայն գործնականում անիրագործելի է: Փորձը ցույց է տալիս, որ սկզբնական շրջանում հիմնական բարեփոխումները չեն հանգեցնում արագ և լուրջ փոփոխությունների. հեշտությամբ իրականացվող առաջին քայլերը հաճախ բավարար են՝ ջրային ռեսուրսների կայուն զարգացման և կառավարման գործընթացը սկսելու համար:

Անկախ սկզբնական մոտեցումից ռազմավարությունները պետք է առնվազն նպատակաուղղվեն կառուցվածքային փոփոխություններին. դրանք կխթանեն ավելի ռազմավարական և շարունակական հիմքերով համակարգված որոշումներ ընդունելը: Այս պատճառով էլ ոչ միայն պետք է հաշվի առնել, թե ինչ, այլև երբ պետք է փոխվի: Ամեն ինչ միանգամից անելու փոխարեն գործողությունները պետք է իրականացվեն աստիճանաբար մի քանի տարվա ընթացքում:

Այս բաժինը պետք է անդրադառնա՝

- ռազմավարական որոշումների շրջանակներին
- ռազմավարական որոշումները իրականացնելու կառուցվածքներին
- ՋՌՀԿ փոփոխության ոլորտներին:

7.3. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐ

Նպատակներն առաջնորդում են դեպի ռազմավարության ընտրություն: Իրավիճակը վերլուծելիս պարզաբանված հարցերի ու հիմնախնդիրների հետ մեկտեղ առաջարկվում են դրանց լուծումները: Առաջարկվող լուծումները կարող են համաձայնեցվել տարբեր մակարդակներով, սակայն դրանք բոլորն էլ արտահայտում են խորհրդակցության մասնակցած շահագրգիռ կողմերի ցանկությունները: Այս առաջարկություններն իրականացնելը պետք է փոխադրվի այն փուլ, որում ՋՌՀԿ պլանի նպատակները հստակորեն ձևակերպված և համաձայնեցված են:

Քաղաքականությունը (կամ հեռահար նպատակը) հաճախ մտադրությունները հայտարարելու մեկնարկային կետ է: Քաղաքականությունից ռազմավարության անցնելու էական խնդիրն այն է, որ վերջինս ձգտում է գիտական ներդրումներով հասնելու որոշակի նպատակների: Ռազմավարության մեջ ներդրումային ռեսուրսները հասանելի են, և նպատակներին հասնելու տարբերակները պետք է գնահատվեն, իսկ այդ ռեսուրսների համար մշակված ծրագիրը պետք է նախատեսի դրանց արդարացի, բայց և միաժամանակ տնտեսապես արդյունավետ օգտագործում: Շահագրգիռ կողմերը կարող են շատ ավելի խիստ տեսակետներ ունենալ, որոնք կցանկանային արտահայտել փոխզիջումային որոշումների ռազմավարություն մշակելիս, բայց հազվադեպ է լինում, որ շահագրգիռ կողմերի կարծիքները ամփոփվեն ռազմավարության մեջ, երբ խոսքը վերաբերում է քաղաքականությանը և օրենսդրությանը:

Ռազմավարական նպատակները նկարագրում են, թե ինչպես հասնել հեռահար նպատակին: Ամեն մի նպատակ պետք է ընդգրկի մի որոշակի հարց (հիմնախնդիր կամ հնարավորություն), անդրադառնա կայուն կառավարման անցնելուն պահանջվող հիմնական փոփոխություններին և արտահայտվի հարցի բոլոր կողմերը ընդգրկող ծավալուն եղանակով՝ ապահովելով բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությունը, սակայն լինի նաև այնքան առանձնահատուկ, որ հնարավորություն ընձեռի իրագործելու լայնածավալ նպատակներ: Ռազմավարությունը պետք է պարունակի ջրային ռեսուրսների կայուն կառավարման հիմնական տնտեսական, սոցիալական և բնապահպանական խնդիրներին ուղղված հիմնավոր նպատակներ, սակայն դրանք միաժամանակ պետք է լինեն բավական հստակ և իրագործելի:

ՋՌՀԿ-ի հիմնական նպատակները կարելի է վերցնել հետևյալ հիմնական ոլորտներից.

- Միջազգային համատեքստում ջրային ռեսուրսները պետք է կառավարել՝ հետևելով միջազգային պայմանագրերին, համաձայնագրերին, համընդհանուր արժեքներին և բարիդրացիական հարբերություններին, ինչն էլ կհանգեցնի ջրի և անդրսահմանային ջրային ուղիներից ստացված օգուտների արդարացի բաշխման:
- Ազգային համատեքստում ջրային ռեսուրսները պետք է կառավարվեն այնպես, որ նպաստեն ազգային զարգացման նպատակներին՝ չքավորության կրճատմանը, հազարամյակի զարգացման և բնագավառային զարգացման նպատակներին սննդի և էներգիայի արտադրության, արդյունաբերության և շրջակա միջավայրի բնագավառներում:
- Մարդկային և էկոհամակարգերի կարիքների համատեքստում ջրային ռեսուրսները պետք է կառավարվեն բոլորին մատչելի ձևով, որպեսզի բավարարեն մարդկանց հիմնարար կարիքները և ջրային էկոհամակարգերի պահանջները: Այս պահանջները պետք է գերակայեն ջրային ռեսուրսների բաշխման ժամանակ:
- Կառավարման սկզբունքների համատեքստում ամենակարևոր սկզբունքները ներառում են հնարավոր ամենացածր մակադրակով պատասխանատվությունների ապակենտրոնացում, մասնակցային կառավարում ու որոշումների կայացում՝ ներառյալ գենդերային հավասարակշռությունը, համագործակցային (բնագավառների և գործակալությունների) և ջրաբանական միավորների (ավազաններ) կառավարումը:
- Ֆինանսական կայունության համատեքստում ջրային ռեսուրսների կառավարումը շահում է կառավարման համակարգում լրիվ ծախսածածկումից և ծառայությունների համար ջրօգտագործողների ու աղտոտողների վճարներից: Ֆինանսական կայունության հիմնական հարցերը հարկերն ու սակագները, նպաստները, խթաններն են ու դրանց բացակայությունը:

Որոշ նպատակներ կարող են ընդունվել որպես գերակա, համաձայնեցվել թիրախ խմբերի հետ (տե՛ս ստորև) և իրականացվել կարճ ժամանակահատվածում: Այլ նպատակներ, որոնք ընթացիկ գերակայություններ չեն, կարող են իրականացվել միայն այն դեպքում, եթե նախորդ գերակա խնդիրները լուծված են, կամ եթե հանգամանքները փոխվում են, և դրանք առավել գերակա են դառնում:

Ամեն մի նպատակի **առաջադրանքը** նեարկայացնում է որոշակի և չափելի աշխատանքներ, ձեռքբերումներ կամ մեկնարկներ, որոնց պետք է հասնել մինչև սահմանված ժամկետը: Սրանք ցանկացած գործողության պլանի առանցքն են և ծառայում են ռեսուրսները կենտրոնացնելուն և գործունեությունն ուղղորդելու տարբերակներ ընտրելուն: Քանի որ առաջադրանքները ենթադրում են առանձին շահագրգիռ կողմերի որոշակի գործողություններ և վարքագծի փոփոխություններ, դրանք պետք է ձեռք բերվեն բանակցությունների արդյունքում:

Այս նպատակներին հասնելը հաճախ կպահանջի իրավական և կառուցվածքային բարեփոխումներ, որոնց պետք է աջակցել առանձնահատուկ կառավարման հմտություններով ու միջոցներով: Այս բարեփոխումների նպատակները սահմանելը և կառավարման միջոցներն ու հմտությունները ըստ գերակայության դասակարգելը ՋՌՀԿ-ին անցնելու գործընթացի կարևոր մասն են:

Կառուցվածքային բաժինը ներառում է ռազմավարությունն իրականացնելու համար պահանջվող գործունեություններ, համագործակցություններ և համակարգեր: Սա բովանդակում է ՋՌՀԿ և այլ ռազմավարական պլանների, ինչպես նաև տարբեր մակարդակների՝ ազգային, ենթաազգային, տեղական կամ տարբեր բնագավառների ու աշխարհագրական շրջանների պլանների միջև կապերի հաստատում: Պետք է բացահայտել՝ որ կազմակերպությունները ռազմավարական գործողությունների որ մասի համար են պատասխանատու, նրանց ազատության աստիճանը, և երբ են նրանք պարտավոր ենթարկվելու այլ շահագրգիռ կողմերի կամ ռազմավարության համակարգողների:

Դա կարող է նաև համագործակցող կազմակերպությունների գործունեությունների բարելավման (հատկապես եթե պատասխանատվությունները կրկնվում են կամ հակասում) կամ անհրաժեշտության դեպքում անգամ նոր կազմակերպություններ հիմնադրելու ազդակ լինել:

Հենց որ երկիրը որոշի, թե ինչ ուղղությամբ է ցանկանում շարժվել նպատակների, խնդիրների ու գերակայությունների առումներով, հաջորդ քայլը պետք է լինի որոշել՝ ինչպես դրան հասնել՝ ՋՌՀԿ շրջանակներում հատուկ փոփոխություններ կատարելով: Ջրային ռեսուրսների կառավարման ռազմավարության բովանդակության օրինակը բերված է Հավելվածում:

Բերեք Ձեր երկրում ջրային ռեսուրսների կառավարման կարևոր որևէ նպատակի օրինակ:

Գործողությունների պլանը մշակվում է ռազմավարության արդյունքում և ներկայացված է հաջորդ նմուշում, թեև գոյություն ունի անբաժանելի կապ, որն ստիպում է նորից անդրադառնալ ռազմավարությանը պլանի հետագա գնահատման ու կարգավորման ժամանակ:

7.4. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՇՐՋԱՆԱԿ

Ջրային ռեսուրսների կառավարման վրա բացասական ազդեցություն ունեցող հիմնախնդիրն առանձնացնելը ջրային ռեսուրսների կայուն կառավարման ու զարգացման ճանապարհին առաջին հիմնական խոշոր քայլն է:

Ռազմավարական որոշումները պետք է փորձարկվեն և ընդունվեն՝ հաշվի առնելով՝

- Շահագրգիռ կողմերի՝ ներառյալ քաղաքական գործիչների կարծիքները.
- Ռազմավարության իրագործելիությունը՝ ներառյալ ռիսկերը.
- Փոխզիջումներն ու այլ գործոններ.
- Ծախսը:

Քաղաքական կառույցների, շահառուների կողմից ընդունվելու համար և ֆինանսական ու տեխնիկական իրագործելիության տեսանկյունից կպահանջվի առաջարկվող ռազմավարության վերանայում: Իրական մանրամասն պլանավորման փուլին մոտենալուն զուգընթաց այս փուլային գործընթացը կրկնվում է այնքան ժամանակ, քանի դեռ գործունեությունները, ժամանակացույցն ու ռեսուրսները իրագործելի և ընդունելի են շահագրգիռ կողմերի համար:

7.4.1. Կարևոր նկատառումներ

Փոխզիջումները ՋՌՀԿ պլանի անխուսափելի մոտեցումներից են: Միշտ լինում են հաղթողներ և պարտվողներ, և այս խնդրին տեղեկացված և թափանցիկ անդրադառնալը բարդ է, սակայն անհրաժեշտ: Ամենաակնհայտը տարբեր ջրօգտագործողների՝ ջուր կորցնողների (տնտեսական շահույթի կորուստ) և ջուր ստացողների (հասանելիություն հիմնական ծառայություններին) միջև փոխզիջումներն են: Մասնավոր և ջրային հատվածների

շահերը կարող են իրարամերժ լինել: Այլ տիպի փոխզիջումներ կարող են լինել սերունդների միջև (ներկայումս ջրային ռեսուրսների օգտագործումը կարող է հանգեցնել ջրի կորուստի՝ եկող սերունդների համար) կամ տնտեսական զարգացման ակնհայտ տարբեր նպատակների և շրջակա միջավայրի պահպանության միջև:

Իրական աշխարհի հետ առնչվելը: Հաճախ պլանները կազմվում են լավագույն նպատակներով և ձախողվում են, քանի որ հաճախ չեն գիտակցվում չափազանց լուրջ իրական գործոններն ու սահմանափակումները: Պլանները հաճախ քաղաքականապես պարզամիտ են և խոչնդոտում են ճանաչել զարգացման խնդիրներն առնչվող քաղաքական որոշումների գլխավոր դերը: Ֆինանսական և այլ ռեսուրսների իսկությունը հաճախ չի դիտարկվում, և արժեքների գործող ճկուն համակարգերը աննկատ «պաշտպանում» են որոշ շահագրգիռ կողմերի կարծիքներ՝ ի վնաս մյուսների:

Ընդունված արժեքային համակարգ օգտագործելը պլանի ընդունելիության ապահովման և դրա իրականացման հավանականության համար որոշիչ է: Օրինակ, եթե ռազմավարությունը հաշվի չի առնում տեղական արժեքները, ապա դժվար թե այն «սեփականացվի» կամ իրականացվի, անգամ եթե մոտեցումը տրամաբանական լինի: Սա կարող է ծագել այնպիսի խնդրահարույց ոլորտներում, ինչպիսիք են ջրի համար վճարելը կամ կնոջ և տղամարդու դերերը: Այստեղ պետք է շատ զգույշ լինել, եթե ակնկալում ենք արժեքային համակարգի փոփոխություն:

Ջրի անդրսահմանային բնույթը թելադրում է, որ երկրները համաձայնությունների հասնելու և հաջողություն ապահովելու համար օգտագործեն արժեքային ընդհանուր համակարգ: Արժեքային համընդհանուր համակարգը՝ ներառյալ այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են մարդու իրավունքը, արդարության և ՋՌՀԿ սկզբունքները, կարող է նպաստել՝ հասնելու միջազգային համաձայնության, սակայն միշտ չէ, որ դրանք կարող են ամբողջությամբ ընդունվել ազգային մակարդակով:

> **Ձեր երկրում ո՞ր խումբը ամենից ավելի կընդդիմանա ջրի կառավարման փոփոխություններին և ինչու՞:**

7.4.2. Ընթացակարգային միջոցառումներ

Ինչպե՞ս է կատարվում

Ինչպե՞ս են իրականացնում այն հիմնական որոշումները, որոնք կարող են նախանշել ՋՌՀԿ պլանի համընդհանուր նպատակն ու մոտեցումը:

Կառավարությունը, մասնավոր հատվածը և քաղաքացիական հասարակությունը պետք է լայնորեն սատարեն ռազմավարությանը: Այդ օժանդակությունը պետք է հաստատվի և պահպանվի պլանավորման գործընթացի հենց սկզբից: Սա ենթադրում է, որ քաղաքացիական հասարակությունը, մասնավոր հատվածը և Կառավարությունը ներկայացնող շահագրգիռ կողմերը պետք է ընդգրկվեն ռազմավարության մշակման ու իրականացման գործընթացի բոլոր փուլերում, ինչպես նաև մասնակցեն աշխատանքի ծավալների, գործընթացի և արդյունքների մասին որոշումներ կայացնելիս: Շատ երկրներում նկատելի է մեկ կամ մի քանի առանցքային շահառուների՝ պլանավորման գործընթացը որպես «սեփականություն» ընդունելու պակաս: Սրա հիմնական պատճառը հավասարակշռված մասնակցության բացակայությունն է և Կառավարության՝ չափազանց ակտիվ հսկողությունը, ինչպես նաև արտաքին գործակալությունների ազդեցությունը:

Գործողությունները պետք է ներառեն ջրային ռեսուրսների կառավարման գերակա կառուցվածքների (ներառյալ հիմնական ջրօգտագործողները, ովքեր ազդում են ջրային ռեսուրսների վրա)՝կայուն կառավարման նպատակներին, ՋՌՀԿ սկզբունքներին ու կիրառման փորձին առնչվող ամբողջական վերլուծություն:
Հարկ է վերլուծել այն մոտեցումները, որոնց օգնությամբ ջրային բնագավառը կարող է բարեփոխվել և այդ բարեփոխումների կարիքը: Ի՞նչ տարբերակներ կան, և ինչիսի՞ն են ծախսերը: Այդ տարբերակներից ո՞րն է ընդունելի սոցիալական, տնտեսական, քաղաքական

և էկոլոգիական տեսանկյունից: Պետք է որոշումներ կայացնել համապատասխան տարբերակների վերաբերյալ և պատրաստ լինել հիմնավորելու դրանք:

Բազմաթիվ շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցություն

Սեմինարներն անհրաժեշտաբար կարևոր են էական որոշումները բացատրելու և դրանք հասունացնելու համար: Վտանգն այն է, որ սեմինարները կարող են օգտագործվել, որպեսզի այլ տեղերում ընդունված որոշումները «կնքվեն»-հաստատվեն, կամ անպայման համաձայնություն ձեռք բերելու փորձերի արդյունքում ընդհանրապես որոշում չկայացվի:

Փոխզիջում/մասնակի համաձայնություն

Փոխզիջում նշանակում է համաձայնություն, լուծում, որին կարող են համաձայնել բոլորը, որը, որը սակայն, կարող է լավագույնը չլինել շահագրգիռ կողմերից որևէ մեկի համար: Այն իրավիճակներում, երբ փոխզիջումների անհրաժեշտություն կա, կարող են լինել հաղթողներ և պարտվողներ, այդ իսկ պատճառով էլ դժվար կլինի համաձայնության հասնել: Ի վերջո մշտապես պետք է տեսադաշտում ունենալ այն փաստը, որ քաղաքական գործիչները կարևոր դեր են խաղում: Կարևոր է, որ որոշումներ կայացնողները, ովքեր ամենամեծ պատասխանատվությունն են կրում նաև որոշումներ ընդունելիս և դրանք իրականացնելիս, լիովին ընդգրկվեն և խորհրդատվություն ստանան բոլոր փուլերում և իրադրություններում, եթե ռազմավարությունը պետք է ընդունվի ու իրականացվի:

Ռազմավարությունների համաձայնեցում ու համապատասխանություն

Չափազանց լավատեսական է այն մոտեցումը, որ ազգային մակարդակով տարբեր քաղաքականությունների ու ռազմավարությունների միջև հնարավոր է հասնել և՛ համաձայնեցման, և՛ համապատասխանության:

Սակայն մաքուր ջրի ռազմավարություն ընդունելը կարող է օժանդակել այլ քաղաքականությունների ու ծրագրերի իրականացմանը, որոնք ընդունում են ջրի հեռահար նպատակներ և համատեղելի են ջրային ռեսուրսների կայուն կառավարմանը: ՋՌՀԿ պլանի պասիվ տարածումը բավարար չի լինի՝ դրան հասնելու համար: Պլանի մշակումը պետք է ուղեկցվի պլանավորման գործընթացը համակարգող կառավարական կառույցների ակտիվ ներգրավմամբ:

Շրջանակ 11 . Ռազմավարության ընտրությանն աջակցող սկզբունքներ

Չափման ենթակա

- **Գոյություն ունեցող հզորությունների առավելագույն օգտագործում.** Հնարավորության սահմաններում օգտվել գոյություն ունեցող կառուցվածքներում առկա հզորություններից նոր կառույցներ ստեղծելու փոխարեն:
- **Ստեղծել համակարգող մեխանիզմներ.** Հնարավոր է, որ հարկ լինի ստեղծել մեկ «համակարգման գրասենյակ» (կամ այլ հարմար մեխանիզմ), որը կհամակարգի ռազմավարության ընտրության և պլանավորման գործընթացի մեջ շահագրգիռ կողմերի և նախարարությունների ներգրավումը:
- **Տվյալների կառավարում.** Լավ համակարգումը կհեշտացնի և առավելագույնի կհասցնի կառույցների, ծրագրերի և պլանների միջև գիտելիքների և փորձի փոխանակումը (ինչպես չքավորության կրճատման ռազմավարությունները, ջրամատակարարման ու ջրահեռացման, բնապահպանական ծրագրերը) և հետևաբար հնարավորություն կտա ավելի արդյունավետ օգտագործել ռեսուրսները:

7.5 ՋՌՀԿ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

Ջրի կառավարման ու զարգացման առավել կայուն և համապարփակ մոտեցում ընդունելը փոփոխություններ է պահանջում շատ ոլորտներում և տարբեր մակարդակներով: Եվ մինչ այս հայտարարությունը կարող է վանել, կարևոր է հիշել, որ աստիճանական փոփոխությունը ավելի կայուն արդյունքներ կարող է տալ, քան միանգամից համակարգն ամբողջությամբ վերափոխելու փորձը: Փոփոխությունների գործընթացը սկսելիս պետք է հաշվի առնել հետևյալը.

- Ի՞նչ փոփոխություններ են անհրաժեշտ համաձայնեցված նպատակների հասնելու համար:
- Որտե՞ղ է հնարավոր իրականացնել տվյալ փոփոխությունը ընթացիկ սոցիալական, քաղաքական և տնտեսական իրավիճակի դեպքում:
- Ո՞րն է փոփոխության տրամաբանական հաջորդականությունը: Նախ և առաջ ի՞նչ փոփոխություններ են անհրաժեշտ մյուս փոփոխությունները հնարավոր դարձնելու համար:

Հետագայում ջրային ռեսուրսների կառավարման եղանակը քննարկելիս պլանավորողները կարող են ընտրել մատչելի փոփոխությունների բազմազան տարբերակներ, սակայն պետք է հաշվի առնել երեք մոտեցումներ՝հետևյալ երեք հիմնասյուները՝ հնարավորություն ընձեռող միջավայր, կառուցվածքային շրջանակ և կառավարման միջոցներ (Նկ. 8): Փոփոխության ոլորտները պարզաբանվել են ԳՋՀ «Գործիքների արկղ» գրքում և թվարկված են Շրջանակ 12-ում:

7.5.1. Հնարավորություն ընձեռող միջավայր

Ներառում է քաղաքականության, օրենսդրության և ֆինանսական համակարգերը: Օրենսդրական գործընթացները հաճախ երկարատև են, պահանջում են տարիներ, իսկ փոփոխությունները՝ լայնածավալ: Օրենսդրությունը հաճախ հետ է մնում ջրային ռեսուրսների իրավիճակին և հասարակության ընթացիկ փոփոխություններին արձագանքելիս: Սովորաբար օրենքներն ու դրանց առնչվող ենթաօրենսդրական ակտերը, որոնք կարգավորում են ջրային ռեսուրսները, մշակվում են տարբեր բնագավառներում և միաժամանակ կազմում են ընդհանուր օրենքների մաս, ինչն էլ ավելի է բարդացնում իրավիճակը:

Նկար 8 . Ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման երեք հիմնասյուներ



Շրջակա միջավայրի օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը, կեղտաջրի արտանետման կանոնները, ջրամատակարարման օրենքներն ու կանոնները և ջրընդունիչների կանոնները հաճախ համաձայնեցված չեն և մշակված են տարբեր գործակալությունների կողմից տարբեր ժամանակահատվածներում: Իրավական բարեփոխման գործընթացի համընդհանուր նպատակն է երաշխավորել, որ հիմնական քաղաքականության նպատակներին հնարավոր լինի հետևել իրավական հիմքով, և որ ջրային ռեսուրսների վրա ազդեցություն ունեցող բոլոր

բնագավառներում օրենքներն ու կանոնները համաձայնեցվեն: Համապատասխան պայմաններ ստեղծելու հիմնական նպատակները ներառում են.

- Կառավարության՝ որպես ամբողջ ջրային ռեսուրսների հիմնական սեփականատիրոջ, ընտրված նախարարության՝ որպես ջրային ռեսուրսների կառավարման մարմնի և կարգավորող գործակալության ընդգրկում:
- Միջազգային համաձայնագրերի և պայմանագրերի ընդունում՝ ներառյալ անդրսահմանային արձանագրությունները, օրինակ՝ ջրաճահճային տարածքների մասին համաձայնագիրը և համատեղ օգտագործվող ջրային ուղիների մասին արձանագրությունը:
- Ջրի բաշխման արդյունավետ մեխանիզմների մշակում՝ ներառյալ ըստ գերակայության որոշումներ կայացնելու աջակցությունը, օրինակ՝ կենցաղային օգտագործումն ու բնապահպանական հոսքերը որպես առաջնային գերակայություն ընդունելը:
- Շրջակա միջավայրի աղտոտումը կառավարելու մեխանիզմների ստեղծում, որը համահունչ լինի բնապահպանական օրենքներին և կարգերին, օրինակ՝ ջրային մարմինների դասակարգում, արտանետման և մոնիթորինգի ստանդարտներ:
- Կառուցվածքային բարեփոխման իրավական հիմքի ապահովում, օրինակ՝ ավազանային հիմքով կառավարում, ջրային ռեսուրսների կոմիտեներ, Կառավարությունը՝ որպես հնարավորություն ընձեռող և ոչ որպես մատակարար:
- Ջրի սակավության, հեղեղներին և աղտոտմանն առնչվող արտակարգ իրավիճակները կարգավորող պայմաններ:
- Կայունությանը աջակցելու ծախսածածկման, հարկերի, խթանների և ֆինանսական կարգավորումների ապահովում:
- Օրենքը խախտելու դեպքում այն պարտադրելու դրույթներ և տուգանքներ:

Ձեր երկրում այս նպատակներից որի՞ վերաբերյալ ամենից դժվար կլինի համաձայնություն ձեռք բերել:

7.5.2. Կառուցվածքային դերեր

Կառավարական կառույցները, գործակալությունները, տեղական իշխանությունները, մասնավոր հատվածը, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները և գործընկերությունները կազմում են կառուցվածքային շրջանակ, որը լավագույն դեպքում պետք է ուղղվի քաղաքականության և իրավական դրույթների իրականացմանը:
Անկախ նրանից՝ հենվում եք ջրի կառավարման գործող կառուցվածքների վրա, թե ձևավորում նորերը, խնդիր է դրանք արդյունավետ դարձնելը, ինչն էլ իր հերթին թելադրում է հզորությունների ստեղծում:
Իրազեկման բարելավումը, մասնակցությունն ու խորհրդատվությունը պետք է ծառայեն բոլոր բնագավառներում որոշումներ կայացնողների, ջուրը կառավարողների և մասնագետների հմտություններն ու փոխըմբռնումը բարելավելուն: Կառուցվածքային շրջանակի հիմական նպատակներն են.

- Տարանջատել ջրային ռեսուրսների կառավարման և ծառայության մատուցման գործառույթները (ոռոգում, հիդրոէներգիայի արտադրություն, ջրամատակարարում և ջրահեռացում) և որպես ջրային ռեսուրսների սեփականատեր՝ հզորացնել Կառավարության լծակները՝ որպես ծառայություններ մատուցելու իրավունք ընձեռող և ոչ որպես ծառայություններ ապահովող: Այսպիսով, հնարավոր կլինի խուսափել շահերի բախումից և խրախուսել արտադրական ինքնուրույնությունը:
- Կառավարել ջրային ռեսուրսները ոչ թե վարչական, այլ ավազանի սահմաններում՝ապակենտրոնացնելով կարգավորման ու ծառայությունների գործառույթները մինչև համապատասխան ամենացածր մակարդակ, խթանելով շահագրգիռ կողմերի ներգրավումն ու հասարակության մասնակցությունը պլանավորման և կառավարման որոշումներ կայացնելու գործում:

- Ապահովել կարգավորման գործառույթների սահմանների և բարդության, ինչպես նաև դրանց առնչվող հմտությունների ու մարդկային ռեսուրսների հավասարակշռությունը: Պահանջվում է ունակությունների ստեղծման շարունակական ծրագիր՝ համապատասխանաբար դրանք զարգացնելու և պահպանելու համար:
- Հեշտացնել, կարգավորել և խրախուսել ծառայությունների ֆինանսավորման ու մատուցման համար (ոռոգում, հիդրոէներգիայի արտադրություն, ջրամատակարարում և ջրահեռացում) մասնավոր հատվածի հնարավոր ներդրումները:

Ինչպե՞ս պետք է խոշոր ջրօգտագործողները (ոռոգումն ու հիդրոէներգետիկան) բերվեն կառուցվածքային դաշտ՝ ջրի կառավարման որոշումներ կայացնելու համար:

Շրջանակ 12 . ՋՌՀԿ փոփոխության տասներեք հիմնական ոլորտներ

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԸՆՁԵՌՈՂ ՄԻՋԱՎԱՅՐ

1. Քաղաքականությունը ջուրը օգտագործելու, պահպանելու ու պաշտպանելու նպատակներ սահմանելն է:
2. Օրենքները քաղաքականությունների ու նպատակների հասնելու խթանող կանոններ են:
3. Ֆինանսավորումը և խթանիչ կառուցվածքները ջրի կարիքները բավարարելու համար ֆինանսական ռեսուրսներ հատկացնելն է:

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԴԵՐԵՐ

4. Կազմակերպչական շրջանակը ձևեր և գործառույթներ ստեղծելն է:
5. Կառուցվածքային հզորություններ ստեղծելը մարդկային ռեսուրսները զարգացնելն է:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

6. Ջրային ռեսուրսները գնահատելը ռեսուրսները և կարիքները հասկանալն է:
7. ՋՌՀԿ պլանները զարգացման տարբերակների, ռեսուրսի օգտագործման և մարդկային փոխազդեցությունների համատեղումն է:
8. Պահանջարկը կառավարելը ջուրն ավելի արդյունավետ օգտագործելն է:
9. Սոցիալական փոփոխության միջոցները քաղաքացիական հասարակությանը խրախուսելն է, որ ջուրը խնայողաբար օգտագործվի:
10. Հակամարտություններ լուծելը վեճերը կառավարելն ու ջրի համատեղ օգտագործումն ապահովելն է:
11. Կարգավորման գործիքները բաշխման և ջրօգտագործման սահմանափակումներն են:
12. Տնտեսական միջոցները արժեքը և գինը արդյունավետ և արդար օգտագործելն է:
13. Տեղեկությունները կառավարելը և փոխանակելը ջուրը ավելի լավ կառավարելու գիտելիքները բարելավելն է:

7.5.3. Կառավարման գործիքներ

Մենք արդեն իսկ ունենք կառավարման չաշխատող շատ գործիքներ. ի՞նչ տարբերություն կլինի այս անգամ:

Քաղաքականություններն ու օրենսդրությունը ստեղծում են «խաղի կանոններ», կառուցվածքային դերերը որոշում են՝ ովքեր են «խաղացողները», և ինչ պետք է նրանք անեն այն դեպքում, երբ կառավարման գործիքները «խաղացողների իրավասություններն ու հմտություններն են», որոնք պահանջվում են՝ այդ խաղը խաղալու համար:
Որոշ երկրներում ջրային ռեսուրսների կառավարման հարցերը որոշում են, թե որ կառավարման գործիքներն են առավել ընդունելի, և որտեղ պետք է կենտրոնացվեն ջանքերը: Այնպիսի հիմնախնդիրներ արդյունավետ լուծելու համար, ինչպիսիք են հեղեղումների ռիսկերը, ջրի սակավությունը, աղտոտումը, ստորերկրյա ջրերի սպառումը, վերին/ստորին հոսքերի միջև հակամարտությունները, էրոզիան և նստվածքագոյացումը պահանջում են կառավարման գործիքների որոշակի համադրություն:

Կառավարման միջոցների համատեքստում գլխավոր նպատակներն են.

- Ստեղծել ջրաբանական և ջրաերկրաբանական ծառայություններ, որոնք համապատասխանում են ջրային ռեսուրսների առկա իրավիճակին և ջրային ռեսուրսների կառավարման հիմնական խնդիրներին:
- Ստեղծել ջրային ռեսուրսների վերաբերյալ տեղեկատվական բազա, որը հենվում է մոնիթորինգի ու ջրային ռեսուրսների գնահատումների վրա, անհրաժեշտության դեպքում լրացվում է նաև մոդելավորման տվյալներով և օգտագործվում հասարակության իրազեկումը բարելավելու նպատակով:
- Մշակել ջրի բաշխման, մակերևութային ու ստորերկրյա ջրերի ջրառի և կեղտաջրի արտանետման թույլտվության մեխանիզմներ և դրանց առնչվող տվյալների բազաներ:
- Մշակել քաղաքականության և պլանավորման ունակություններ և զարգացնել ռիսկերի գնահատման, բնապահպանական, սոցիալական և տնտեսական գնահատումների հմտություններ:
- Պատրաստել պահանջարկը կառավարող և գին ու արժեք հասկացությունները օգտագործելու հմտություններով մասնագետներ ջրային ռեսուրսներն արդյունավետ օգտագործելու և դրանց մատչելիության արդարացիությունը ապահովելու նպատակով:
- Զարգացնել մարդկային ռեսուրսները և ձեռք բերել ջրային ռեսուրսների կառավարման և կառուցվածքային հարցերը լուծելու ունակություններ:

Շրջանակ 13. Ռազմավարության որոշ խաչաձև հարցեր ինքնագնահատման համար

ՉՔԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Կօգնի՞ արդյոք մեր ռազմավարությունը՝

- ընդլայնելու ջրի մատչելիությունը արդյունավետ ջրօգտագործումների համար՝ ստորերկրյա ջրային պաշարները մշակելով, փոքրածավալ էժան տեխնոլոգիաներ կիրառելով և բազմակի ջրօգտագործման համակարգեր ներդնելով.
- բավարարելու չքավոր մարդկանց ջրային կարիքները.
- ստեղծելու ծառայություններ, որոնք առավելագույնս կհամապատասխանեն ջրօգտագործողների կարիքներին, վճարունակությանը և ենթակառուցվածքը կառավարելու ու պահպանելու ունակությանը.
- բավարարելու մարդկանց՝ ոռոգման, անասնաբուծության, ձկնարտադրության և տնամերձ հողատարածքները մշակելու ջրային կարիքները:

ՋՐԻ ՍԱԿԱՎՈՒԹՅԱՆ ՈՒ ՋՐԻ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Թույլ կտա՞ արդյոք մեր ռազմավարությունը՝

- ռազմավարական ձևով բաշխելու ջուրը.
- բարձրացնելու ջրօգտագործման արդյունավետությունը և խթանելու պահանջարկի կառավարումը.
- խրախուսելու ոչ ավանդական ջրօգտագործումները:

ԿԱՆԱՆՑ ՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Արդյոք ռազմավարությունը ավելի շա՞տ է ուշադրություն դարձնում՝

- խմելու և կենցաղային օգտագործումների համար լավորակ ջրով մոտակա աղբյուրի մատչելիությանը.
- կանանց՝ ջուր պահանջող գործունեության արդյունքում եկամուտների ապահովմանը.
- կանանց՝ ջրային ռեսուրսների նկատմամբ իրավունքներին.
- ջրատնտեսական կազմակերպություններում և ծրագրերում կանանց ներգրավելու հարցերին.
- ջրին վերաբերող երկխոսության մեջ կանանց ներգրավելուն և նրանց տեսակետները ու կարիքները հաշվի առնելու երաշխիքներին:

ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Արդյոք մեր ռազմավարությունը նկատի՞ է առնում՝

- բնապահպանական հոսքերին ջրային ռեսուրսներ հատկացնելը.
- ջրի կառավարումը՝ էկոհամակարգերը ժամանակին անհրաժեշտ որակի և քանակի ջրով ապահովելու համար.
- ինչպե՞ս գնահատել էկոհամակարգերի կողմից ապահովվող ապրանքներն ու ծառայությունները.
- ջրային ռեսուրսների աղտոտման հսկողությունը.
- քաղցրահամ ջրի կառավարման ազդեցությունը ափամերձ և ծովային միջավայրերի վրա.
- ստորերկրյա ջրերի կայուն օգտագործումը:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Արդյոք ռազմավարությունը ակտիվորեն նպաստու՞մ է՝

- ջրային տնտեսության զարգացմանն ու կառավարմանը՝ ջրից առաջացող այնպիսի հիվանդությունները նվազեցնելուն, ինչպես մալարիան, շիստոսոմոզը և աղիքային հիվանդությունները.
- քաղաքային և գյուղական շրջաններում ջրահեռացման համակարգերի բարելավմանը.
- բնակչության ամենաչքավոր խավի ջրամատակարարման ու ջրահեռացման կայուն ծառայությունների ապահովմանը:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Արդյոք մեր ռազմավարությունը՝

- ջուրը բաշխում է բնագավառների միջև այնպիսի եղանակով, որը նպաստում է տնտեսական զարգացմանը՝ հաշվի առնելով նաև չքավորության նվազեցումը և շրջակա միջավայրի կայունությունը.
- ստեղծում է ջրային ռեսուրսների ճիշտ կառավարմանն օժանդակող մակրոտնտեսական միջավայր:

ՕԳՏԱԿԱՐ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐ ԻՆՏԵՐՆԵՏԻՑ

- ԳՋՀ Toolbox
  - http://gwpforum.netmasters05.netmasters.nl/en/
- ՋՈՀԿ կառավարման գործիքներ
  - http://www.cap-net.org/showhtml.php?filename=imi
- ՋՈՀԿ ուսուցողական նյութեր
  - http://www.cap-net.org/showhtml.php?filename=tm_tm1
- Մեթապլան. Խնդիրները լուծելու, վերլուծելու, ծրագիրը պլանավորելու ռազմավարությունը տեսանելի դարձնել խմբերում աշխատելիս
  - http://www.techcomm-online.org/issues/v45n4/full/0296.html#METHODS
- Լուծումների ծառի վերլուծություն՝ հավանական արդյունքների կանխատեսումով. տարբերակի ընտրություն
  - http://www.mindtools.com/dectree.html
- Ուժային դաշտի վերլուծություն
  - http://www.acig.com.au/library/forcefield.PDF
- «5 մտածող գլխարկներ». լուծումների դիտարկում բոլոր տեսանկյունից
  - http://www.mindtools.com/pages/article/newTED_07.htm



8. ԿԱԶՄՎԱԾ ԵՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՋՐՀԿ ՊԼԱՆ

8.1. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔ

Ջրային ռեսուրսների կառավարման ռազմավարության համաձայնեցմանը պետք է հետևի այն պլանի վերածելը: Պլանը պետք է մանրամասնի՝ ինչ պետք է արվի, ով, երբ, և ինչ ռեսուրսներ պետք է օգտագործվեն: Իրագործելի, ընդունելի և համապատասխանող պլան հրատարակելը պլանավորման շրջանի այս քայլից ակնկալվող արդյունքն է:

8.2. ՉՈՐՍ ՀԱՐՑ

Իրական պլանը կազմելիս հարկ կլինի պատասխանել չորս հարցի.

- Պլանի բովանդակություն.
- Քաղաքական կառույցների և հասարակական մասնակություն.
- Պլանը իրականացնելու ժամանակացույց և
- Պլանը կազմող պատասխանատու:

Նկար 9 . ՋՐՀԿ պլանը կազմելու ու հաստատելու փուլ. ուղղորդող ուժեր, արդյունքներ և գործունեություններ



8.2.1. Պլանի բովանդակություն

Գոյություն ունեն մի շարք հարցեր, որոնց կարող է անդրադառնալ ՋՌՀԿ պլանը: Ամեն մի երկրում այս հարցերը տարբեր են՝ կախված նրանից, թե ինչպիսին են ջրային ռեսուրսները և դրանց կառավարումը տվյալ երկրում, և ինչը պետք է կանխատեսի ռազմավարության և երկարաժամկետ պլանի նպատակները: Պլանը կարող է իրագործվել միայն կարճաժամկետ գործողություններով կամ կարող է ապահովել միջնաժամկետ հեռանկարի հատկանշական գործունեություններ (օրինակ՝ Շրջանակ 14):

Իրատեսակա՞ն է արդյոք պլանը

ՋՌՀԿ պլանն առնվազն պետք է ներառի՝

- ՋՌՀԿ պլանով փոփոխման ենթակա ջրային ռեսուրսների կառավարման նկարագրություն. ինչպե՞ս է առաջացել, որքա՞ն է օգտագործվել, ի՞նչ իրավական միջոցներով (քաղաքականություններ, օրենքներ և ինստիտուտներ) են օժանդակում դրան, և որո՞նք են ջրային ռեսուրսների կառավարման ընթացիկ մոտեցման սահմանափակումները:
- Երկրում ջրային ռեսուրսների առկա իրավիճակի նկարագրություն (ջրային ռեսուրսների գնահատում), որն անդրադառնում է հետևյալ հարցերին.
    - Տեղումների տարածական և ժամանակային բաշխում, խոշոր գետեր, լճեր, ջրամբարներ և այլն: Ըստ էության՝ նկարագրություն, թե որտեղ ջուր կա և որտեղ չկա:
    - Ջրօգտագործումներ և ովքե՞ր են օգտագործողները, որքա՞ն են օգտագործում և ի՞նչ նպատակներով:
    - Ջրի կառավարմանը վերաբերող ընթացիկ սոցիալական և կառուցվածքային միջոցառումներ:
    - Հեղեղների ու երաշտների, դրանց հաճախականության, ինչպես նաև ծավալների նկարագրություն:
    - Ջրային ռեսուրսների պահպանության ու պահանջարկի գործող ռազմավարություններ:
    - Օգտագործվող այլ ջրաղբյուրների (աղազերծում, վերաշրջանառություն և այլն) նկարագրություն:
    - Մասնակցության գործընթացում շահագրգիռ կողմերի հարուցած հարցեր:

- Պլանի շրջանակի նկարագրություն: Որո՞նք են այն մտադրությունները, նպատակներն ու խնդիրները, որոնց ուզում ենք հասնել ՋՌՀԿ պլանով: Ջրային ռեսուրսների կառավարման կանխատեսում, նաև պլանի մակարդակ (ազգային, շրջանային կամ տեղական):
- Նկարագրություն, թե ինչպես ենք պլանավորում մտադրությունները, նպատակներն ու խնդիրները: Կա՛մ ուղղակի հղում ենք ջրային ռեսուրսների ռազմավարությանը, կա՛մ ներառում համապատասխան հարցերը հենց պլանի մեջ: Բուրկինա Ֆասոյի պլանը պարունակում է 6-րդ գլխում թվարկված բոլոր բաժինները: Պլանի նկարագրությունը կարող է ընդգրկել այնպիսի վերնագրեր, որոնք շահագրգիռ կողմերն են որոշել (օրինակ՝ Կառավարում, Հողօգտագործում, Ջրի արդյունավետություն, Ռեսուրսի պահպանություն և այլն.): Հենց սա է իրականացման ռազմավարությունը:
- Պլանը պետք է ներառի նաև ՋՌՀԿ պլանը այլ ազգային գործընթացներին և կամ պլաններին առնչվող բաժին: Օրինակ՝ ինչպես է կապակցվում ՋՌՀԿ պլանը չքավորության նվազեցման ծրագրին կամ համապարփակ զարգացման պլանին:
    - Պլանը իրականացնելու պահանջվող ռեսուրսներ:

Շրջանակ 14 . Բուրկինա Ֆասոյի ՋՌՀԿ պլան. բովանդակություն

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ
ՆԱԽԱԲԱՆ
ԱՄՓՈՓՈՒՄ
1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ
2. ՋՌՀԿ ՄԻՋՈՑՆԵՐ ՈՒ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ
2.1. Միջոցներ
2.1.1. Ազգային քաղաքականություններ ու ռազմավարություններ
2.1.1.1. Մարդկային կայուն զարգացման քաղաքական մտադրությունների ուղերձ (LIPDHD)
2.1.1.2. Չքավորության դեմ պայքարելու ռազմավարական շրջանակ (CSLP)
2.1.1.3. Ապակենտրոնացված գյուղական զարգացման քաղաքական ուղերձ (LPDRD)
2.1.1.4. Պետական բարեփոխում ապակենտրոնացման արդյունավետ իրականացմամբ
2.1.1.5. Ջրի ազգային քաղաքականություն
2.1.1.6. Ջրային ռեսուրսների կառավարման օրենք N 002-2001/AN
2.1.2. Քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի աճող դերը
2.2. Սահմանափակումներ
2.2.1. Կառուցվածքային, կազմակերպչական և մարդկային սահմանափակումներ
2.2.2. Օրենսդրական և պայմանագրային սահմանափակումներ
2.2.3. Տնտեսական և ֆինանսական սահմանափակումներ
2.2.4. Տեխնիկական սահմանափակումներ
2.2.5. Ջրի կառավարմանն առնչվող հաղորդակցության բնագավառի սահմանափակումներ
3. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԻ ԽՆԴԻՐՆԵՐ
4. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԻ ՌԱՋՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
5. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԻ ԿԱՐԵՎՈՐ ՌԱՋՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ
5.1. Վերասահմանել պետության առաքելությունները
5.1.1. Պետության ինքնավարության առաքելություններ
5.1.2. Իրականացել պետության ինքնավարության առաքելությունները պետական գործունեության տարբեր մակարդակներում
5.1.2.1. Կառավարության դերերն ու պատասխանատվությունները
5.1.2.2. Ջրի տեխնիկական կոմիտե (CTE)
5.1.2.3. Վարչական շրջանների (շրջաններ, գավառներ, մասնաճյուղեր ու գյուղեր) դերերն ու պատասխանատվությունները
5.2. Ստեղծել ազգային ջրային խորհուրդ
5.3. Ստեղծել կառավարման նոր տարածքներ
5.3.1. Որոշել ջրի կառավարման նոր տարածքներ՝ որպես ավազանային կառավարման կոմիտեների և ավազանային գործակալությունների իրավասության ոլորտներ
5.3.2. Ջրագրական ավազանների կառավարման կառուցվածքների դերը, բնույթը և առաքելությունը
5.3.2.1. Ավազանային կառավարման կոմիտե (CGB)
5.3.2.2. Ավազանային գործակալություն
5.3.2.3. Տեղական ջրային կոմիտե (CLE)
5.3.3. Ավազանային կառավարման կառուցվածքների միջամտության միջոցներ
5.3.3.1. Կառավարման կառուցվածքների ֆինանսական ռեսուրսներ
5.3.3.2. Ֆինանսական ռեսուրսների հատկացում ավազանային գործակալություններին
5.3.3.3. Գործակալությունների միջամտության պլանավորում
5.3.3.4. Միջամտության ոլորտներ
5.4.2. Տեղական համայնքների կարողությունների հզորացում
5.5. Զարգացնել և հզորացնել պետական կառավարման մարդկային ռեսուրսները
5.6. Բարելավել բնակչության իրազեկումը, զարգացնել և հզորացնել նրա գործնական մասնակցությունը
5.7. Ուրվագծել ջրի բնագավառի հետագա կառուցվածքային շրջանակը
6. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ
6.1. Առաջին գործողությունը պայմաններ ստեղծելն է
6.1.1. Բնագավառային հիմնավորում
6.1.2. Ակնկալվող արդյունքներ
6.1.3. Բնագավառի գործողություններ
6.2. Երկրորդ գործողությունը ջրի տեղեկատվական համակարգ ստեղծելն է
6.2.1. Բնագավառային հիմնավորում
6.2.2. Ակնկալվող արդյունքներ
6.2.3. Բնագավառի գործողություններ
6.3. Երրորդ գործողությունը իրականացնելու ընթացակարգերն են
6.3.1. Բնագավառային հիմնավորում
6.3.2. Ակնկալվող արդյունքներ
6.3.3. Բնագավառի գործողությունները
6.4. Չորրորդ գործողություն. հետազոտություն/զարգացում
6.4.1. Բնագավառային հիմնավորում
6.4.2. Ակնկալվող արդյունքներ
6.4.3. Բնագավառի գործողություններ
6.5. Հինգերորդ գործողություն. մարդկային ռեսուրսներ
6.5.2. Ակնկալվող արդյունքներ
6.5.3. Բնագավառի գործողություններ
6.6.Վեցերորդ գործողություն. տեղեկություններ, կրթություն, ակտիվացում, պաշտպանություն
6.6.1. Բնագավառային հիմնավորում
6.6.2. Ակնկալվող արդյունքներ
6.6.3. Բնագավառի գործողություններ
6.7. Յոթերորդ գործողություն. կառուցվածքային շրջանակ
6.7.1. Բնագավառային հիմնավորում
6.7.2. Ակնկալվող արդյունքներ
6.7.3. Բնագավառի գործողություններ
6.8. Ութերորդ գործողություն. արտակարգ իրավիճակների միջոցառումներ
6.8.1. Բնագավառային հիմնավորում
6.8.2. Ակնկալվող արդյունքներ
6.8.3. Բնագավառի գործողություններ
7. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԻ ԱՐԺԵՔ ՈՒ ՌԱՋՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
7.1. Առաջին փուլի ընդհանուր արժեքը
7.1.1. Ըստ գործողությունների բնագավառների ընդհանուր արժեքի բաժանում
7.1.2. Արժեքն ըստ գործողությունների
7.2. Ֆինանսավորման ռազմավարություններ
8. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ
8.1. Պլանն իրականացնելու վերահսկողություն
8.2. Իրականացում ըստ փուլերի մինչև 2015թ.
8.2.1. Փուլ I (2003-2008)
8.2.2. Փուլ II (2008-2015)
8.3. Պլանի մոնիթորինգ-գնահատում
8.4. Ռիսկի գործոններ
8.5. Պլանն իրականացնելու պլանավորող
9. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

8.2.2. Քաղաքական կառույցների և հասարակության մասնակցություն

Քաղաքական և հասարակական մասնակցությունն ապահովելու գործընթացը ավելի որոշակի նկարագրվել է առաջին բաժնում («Պլանավորման գործընթացի համակենտրոնացում»): Անհրաժեշտ է որոշել, թե որքան ազատ պետք է լինի մասնակցությունը, ինչ հաճախականությամբ շահագրգիռ կողմերին աջակցելու հնարավորություն կընձեռվի, հաղորդակցության ինչ միջոցներ կօգտագործվեն: Ինչպե՞ս պետք է տեղեկացվեն շահագրգիռ կողմերը, ինչպե՞ս են ստացվելու նրանց կարծիքները, և ինչպե՞ս պետք է այդ կարծիքները ներառել պլանի մեջ (խորհրդատվություն, հաղորդակցություն և հետադարձ կապ):

Պլանը գրելիս քաղաքական մասնակցությունն ու պարտավորությունը երաշխավորելու ի՞նչ քայլեր ձեռնարկել:

Այս ամենը պետք է իրականացնել պլանի պարտավորություն ստանձնելու ենթատեքստում: Քաղաքական պարտավորությունը պետք է պահպանվի պլանավորման ողջ գործընթացի ժամանակ, սակայն այս փուլում կարող է լինել դիմադրություն, եթե որևէ վտանգ սպառնա իշխանությանը, կամ էլ առաջարկվեն կառուցվածքային զգալի բարեփոխումներ: Պլանը նախագծելու ողջ ընթացքում կարևոր է ազդակիր նախարարությունների բարձր մակարդակով սերտ համագործակցությունն ու խորհրդատվությունը:

8.2.3. Պլանը կազմող պատասխանատու

Վերջին հարցն այն է՝ ով է կազմում պլանը: Արդյոք պլանը պետք է մշակի մե՞կ մարդ, թե՞ մի ամբողջ խումբ : Խմբում ընդգրկվելու են պլանավորման բաժնի՞, թե՞ նախարարության աշխատակիցներ: Կա՞ արդյոք խորհրդատուների կարիք: Ո՞վ է ընտրում և նշանակում խորհրդատուներին: Կարևոր է երաշխավորել, որ պլանը մշակող մարդիկ ընդգրկվեն գործընթացի բոլոր փուլերում կամ տեղյակ լինեն դրանց արդյունքներին:

8.3. ՊԼԱՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Պլանն ավարտելուց հետո այն պետք է ընդունեն բոլոր շահագրգիռ կողմերը՝ ներառյալ Կառավարությունը: Իմաստ չունի ռեսուրսներ ծախսել՝ մշակելու մի պլան, որն ի վերջո մերժվելու է կամ դրվելու է դարակում, որ երբեք չիրականացվի: Այդ իսկ պատճառով էլ կարևոր են ՋՈՒՀԿ պլանը մշակելու գործընթացի հենց սկզբից քաղաքական աջակցությունը և շահագրգիռ կողմերի մասնակցությունը: Եթե մասնակցային գործընթացը լավ է կազմակերպվել, ապա պլանը հաստատելիս խնդիրներ չեն ծագի: Շահագրգիռ կողմերի հետ առաջին հանդիպման ժամանակ հարկ է որոշել, թե որոնք են լինելու պլանն ընդունելու պայմանները: Այս եղանակով սկզբից ևեթ կարելի է հետևել՝ արդյոք գործընթացը բավարարում է առաջադրված պայմանները: Հարավային Աֆրիկայում, օրինակ, Ջրային տնտեսության և անտառտնտեսության նախարարությունը հստակ հայտարարեց, որ ավազանային կառավարման գործակալություն կստեղծվի միայն այն դեպքում, եթե ապացուցվի, որ հասարակության մասնակցության գործընթացը կազմակերպվել է ընդունելի մակարդակով:

Ի՞նչ քայլեր ձեռնարկել, որ ջրի գերակայությունները ընդգրկվեն կառավարության զարգացման այլ ծրագրերում:

Պլանը մշակելու գործընթացը և պլանի բովանդակությունը հենց սկզբից համաձայնեցնելը կմեծացնի շահագրգիռ կողմերի և Կառավարության՝ պլանն ընդունելու հավանականությունը: Եթե բոլոր շահագրգիռ կողմերը (ներառյալ Կառավարությունը) սկզբից ևեթ ներգրավվեն պլանի մշակմանը, ապա հաստատումը պարզապես ձևական կլինի:

Պլանը մշակելիս շահագրգիռ կողմերի և Կառավարության հաղորդակցության ռազմավարությունը պետք է լինի պլանավորման ողջ գործընթացի համար կառավարման

խմբի ստեղծած հաղորդակցության ռազմավարության մաս: ՋՌՀԿ վերջնական պլանը պետք է լայնորեն հայտնի և մատչելի լինի: Սա կարևոր է, որովհետև, ինչպիսին էլ լինի խորհրդատվության գործընթացը, անհնար կլինի բավարարել բոլոր շահագրգիռ կողմերի պահանջները: Խորհրդատվական գործընթացների մեծ մասը կարող է միայն օրինակ ծառայել, ուստի հենց որ ազգային պլանն ընդունվի, կարևոր է, որ այն հասանելի լինի բոլորին և բոլորն ի վիճակի լինեն քննարկելու ու պատրաստ այն իրականացնելու:

Շրջանակ 15. ՋՌՀԿ պլանի գնահատումը. հարցաթերթիկ

Ստորև ներկայացվում են որոշ հարցեր, որոնք պետք է օգտագործվեն պլանը գնահատելիս:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐԻ «ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ» ՍՏԵՂԾՄԱՆԸ

- Արդյոք ՋՌՀԿ պլանը նկարագրու՞մ է մասնակցային գործընթացը, որը սովորաբար պահանջվում է պլանի «սեփականության իրավունք» ստեղծելու համար:
- Արդյոք ՋՌՀԿ պլանն ամփոփու՞մ է մասնակցային գործընթացի ժամանակ ծագած խոշոր հարցերը և գործընթացի ազդեցությունները պլանի բովանդակության վրա:
- Արդյոք պլանը նախատեսու՞մ է ազգային զարգացման այլ պլանների և կառավարության այն փաստաթղթերի կապը, որոնք անդրադառնում են կամ պետք է անդրադառնան ջրային ռեսուրսների կայուն կառավարմանն ու զարգացմանը:
- Կա՞ն արդյոք պլանը հասարակության շրջանում տարածելու ծրագրեր:

ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ԱԽՏՈՐՈՇՈՒՄ

- Հուսալի՞ են ջրային ռեսուրսների առկա տվյալները:
- Լիարժե՞ք են պարզաբանված ջրային ռեսուրսների հիմնախնդիրների բնույթն ու պատճառները: Կա՞ն նկատելի միտումներ:
- Ի՞նչ չափով է հիմնախնդիրների վերլուծությունը նկատի առնում ջրային ռեսուրսների կառավարմանն առնչվող կարծիքները:

ԹԻՐԱԽՆԵՐ, ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

- Արդյոք ՋՌՀԿ պլանը սահմանու՞մ է ջրային ռեսուրսների կայուն կառավարմանն ուղղված միջնաժամկետ և երկարաժամկետ նպատակներ, ստեղծո՞ւմ է առաջընթացի ցուցանիշներ և տարեկան ու միջնաժամկետ խնդիրներ:
- Արդյոք այս ցուցանիշներն ու խնդիրները համապատասխանում և համատեղելի՞ են պլանի քաղաքականության և ռազմավարության ուղղություններին:
- Արդյոք մոնիթորինգի ու գնահատման ընթացիկ և առաջարկվող համակարգերը բավարա՞ր են ու կայուն:

ԳԵՐԱԿԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Արդյոք պլանը պարունակու՞մ է գերակա միջոցառումներ, որոնք համապատասխանում են նպատակներին ու խնդիրներին և իրագործելի են ախտորոշման, թիրախների, գնահատված արժեքների, առկա ռեսուրսների, կառուցվածքային հզորությունների և նախկին քաղաքականությունների արդյունավետության տեսակետից:
- Ունի՞ արդյոք ռազմավարությունը համապատասխան ու հուսալի ֆինանսավորման պլան, և հնարավո՞ր է այն փոխել՝ անկայուն ֆինանսական հոսքերին հարմարեցնելու համար:
- Ի՞նչ չափով են պլանի կառուցվածքային ու բնագավառային նպատակներն ու գործողությունները ուղղված ջրային ռեսուրսների կայուն կառավարման հիմնական քաղաքականությանը, կառուցվածքային և ղեկավարման պարտավորությունների իրականացմանը:
- Արդյոք դրանք ներառու՞մ են ջուրը՝ որպես տնտեսական և սոցիալական ապրանք, ստորին հոսքերի պատասխանատվությունները, ռեսուրսի տարբեր ձևերն ու անկախ բնույթը և ավազաններում մրցակցային ջրօգտագործումները:
- Հաշվի՞ են առնված մասնակցային և գենդերային սահմանափակումները և ջրային ռեսուրսների կառավարման առկա համակարգերի ազդեցությունները:

ՕԳՏԱԿԱՐ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐ ԻՆՏԵՐՆԵՏԻՑ

- Տրամաբանական մոտեցման շրջանակ (ՏՄՇ)

o NORAD. ՏՄՇ Ձեռնարկ. http://www.baltichealth.org/getfile.php/11071.354/LFA%20handbook.pdf

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Cap-Net, 2003. *Capacity Building for Strategic Planning in Integrated Water Resources Management 2004 – 2007*. Project Proposal, Delft The Netherlands.

Dalal-Clayton B. Swiderska K, Bass S(2002) Stakeholder Dialogues on Sustainable Development Strategies. Lessons, Opportunities and Developing Country Case Studies. Environmental Planning Issues No 26, November 2002. International Institute For Environment and Development. London, United Kingdom.

Dalal-Clayton B, Bass S. 2002. Sustainable Development Strategies: A ResourceBook. 388pp. National Strategies For Sustainable Development (NSSD).

DWAF, 2004. National Water Resources Strategy, First Edition Department of Water Affairs and Forestry, South Africa. http://www.dwaf.gov.za/Documents/Policies/NWRS/Default.htm

GWP, 2000. Integrated Water Resources Management. GWP. Technical Committee Background Paper 4. Stockholm: GWP.

GWP, 2003. An Action Partnerships Programme for Sustainable African Water Development, September 2003(Project Document)

GWP, 2004. Guidelines in Preparing a National Integrated Water Resources Management and Efficiency Plan. Advancing the WSSD Plan of Implementation. Version 1. Stockholm Sweden. February 2004.

GWP, 2004. Catalyzing change. A handbook for developing integrated water resources management (IWRM)and water efficiency strategies. GWP Technical Committee . Stockholm:GWP.

GWP, 2004. Synthesis of Workshop on Guidance to IWRM Plan held on February 2004-Stockholm. August 2004.

Jønch-Clausen T, 2004. "… Integrated Water Resources Management (IWRM) and Water Efficiency Plan by 2005". Why, What and How. Global Water Partnership, Technical Committee Background Papers No. 10.

Ministry of Agriculture, Hydraulics, and Fishing Resources, 2003. Action Plan for Integrated Water Resources Management in Burkina Faso (PAGIRE)

Overseas Development Administration 1995. Guidance Note on How To Do Stakeholder Analysis of Aid Projects and Programmes. Social Development Department. London: ODA

SADC Water Sector, 2004. Guidelines for the Development of National Water Policies and Strategies to Support IWRM. RSAP Projects 9& 10,

UNEP/GPA-UNESCO-IHE. 2004. Improving Municipal Wastewater Management in Coastal Cities. Training Manual Version 1. Stakeholders Analysis, Pg 33, and Optional Analysis, Pg 42. The Hague, The Netherlands.

UNESCO, 2002. Preparation of National Plans of Actions. Country Guidelines. Paris, France.

Webster D, Le-Huu Ti, 2003. Guidelines on Strategic Planning and Management of Water Resources (Draft). United Nations Economic and Social Commission for Asia and the Pacific. Project on Capacity building in Strategic Planning and Management of Natural Resources in Asia and the Pacific (2000- 2004) Bangkok. Version 7.

	ԲՆՈՒԹԱԳՐԵՐ		
	ԳԱՂԱՓԱՐ. ԸՍՏ ՀԱՐԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ		
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ	Օրենքի սկզբունք	• Կանխատեսելիություն • Ուժի կամայական օգտագործման բացակայություն	• Օրենքների անկողմնակալ կիրառում • Դատական համակարգի անկախություն
	Մասնակցություն	• Միությունների և խոսքի ազատություն • Տեղեկատվության մատչելիություն • Մասնակցության մեխանիզմներ	• Որոշումներ կայացնելու գործընթացի օրինականություն (պլանավորումից մինչև իրականացում) • Գենդերային և էթնիկ հավասարություն մասնակցության գործընթացին
	Գործունություն	• Ջրի հիմնախնդրի գիտելիքներ • Ջրի հիմնախնդիր առաջանալու պատճառների գիտելիքներ • Հիմնախնդիրների պատճառների լուծմանը ուղղված քաղաքական նպատակներ	• Տարբեր բնագավառներում քաղաքականությունների համաձայնեցվածություն • Համապատասխան դերակատարների վրա ազդեցություն • Գործողությունները համակարգելու ունակություն • Իրականացնելու ունակություն
	Արդյունավետություն	• Նվազագույն ֆինանսական, քաղաքական, սոցիալական ու բնապահպանական ծախսեր	• Նվազագույն պայմանագրային արժեքներ
	Արդարություն	• Եկամտից, սեռից և որևէ էթնիկական խմբի պատկանելիությունից կախված՝ ջրային ռեսուրսները բաշխելու կամ որոշումներ կայացնելու լիազորություններ ընձեռելու տար-բերությունների նվազեցում	• Օրենքի անկողմնակալ ձևակերպում և կիրառում
	Արձագանքելու ունակություն	• Բոլոր շահագրգիռ կողմերի ներգրավում • Որոշումները ժամանակին կայացնել՝ արձագանքելով շահագրգիռ կողմերի պահանջներին	• Արձագանք՝ հնարավոր ամենացածր մակարդակին • Լրացուցիչ արձագանք
	Թափանցիկություն	• Ընթացակարգերի մասին գիտելիք-ների հասանելիություն • Բավարար տեղեկատվություն	• Հասկանալի տեղեկատվություն
	Համաձայնության գալու միտում	• Մանսակցային մոտեցում համաձայն-ություններին • Համագործակցային մոտեցում	• Տարածական և բնագավառային համագործակցությունն ուժեղացնելու միջնորդության մեխանիզմ
	Հաշվետվություն	• Այլոց վրա ազդող պատասխանատվություններ իրակա-նացնելու երաշխիք • Հաշվետվության համար հասարակա-կան ֆորումներին մասնակցություն • Կանոնների հստակություն • Հիմնական կարծիքի պարզաբանում	• Քաղաքականության մոնիթորինգ • Ձեռքբերումների կամ դրանց բացակայության պարզաբանում • Հաշվետու մասնավոր հատված, քաղաքացիական հասարակություն և կառավարում
	Վեճերի խաղաղ լուծում	• Շահագրգիռ կողմերի վեճերը լուծելու միջնորդության մեխանիզմ	• Միջնորդությամբ չլուծվող վեճերը լուծելու համար միջնորդ դատարանի պարտադրման մեխանիզմ

Աղյուսակ. ՋՈՒԿ տարբերակները գնահատելիս հաշվի առնելիք սկզբունքներ

	ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ		
	ԳԼՈՒԽ. ԸՍՏ ՀԱՐԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ		
ՀԻՄՆԱԿՈՐՈՂ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ	Ջրի համապարփակ (փոխկապակցված) բնույթ	• Ստորերկրյա և մակերևութային ջրերի փոխկապակցվածություն • Ջրի որակի ու քանակի և հողային ու ջրային էկոհամակարգերի փոխկապակցվածություն	• Ջրի ինքնամաքրման հատկության սահմանափակումներ • Վերին ու ստորին հոսքերում ջրի քանակի ու որակի փոխկապակցվածություն
	Ջրային քաղաքակա-նությունների համա-պարփակ մշակում	• Բոլոր տիպի ջրօգտագործումների վերլուծում • Բոլոր ջրօգտագործողների հաշվառում • Համաձայնություններն հզորացնելու համակարգման մեխանիզմ	• Ջրի և կեղտաջրի կառավարման համակարգում • Առաջարկի ու պահանջարկի կառավարման համակարգում • Գետավազանային կառավարում և ջրային ռեսուրսների պահպանու-թյուն
	Կանանց դերը	• Գենդերային հավասարություն ջրային հարցերում	• Կանանց լիազորությունների խթանում
	Ջուրը՝ տնտեսական ապրանք	• Ջրի տնտեսական և բնապահպանական արժևորում • Ջուր ապահովելու ամբողջ ծախսը որպես այլընտրանքային օգտագործումների մասին որոշում կայացնելու գործիք	• Ամբողջական ծախսածածկում • Պահանջարկը կառավարելու տնտեսական գործքիների օգտագործում • Ջուրը շռայլելու դեմ պայքար՝ ամենացածր գնորոշմամբ
	Համապատասխանեց-ման ամենացածր մակարդակ	• Ավելի ցածր մակարդակով որոշումներ կայացնելու հնարավորություն • Ավելի ցածր մակարդակով մասնակցության հնարավորություն	• Ավելի ցածր մակարդակով վեճերի լուծում
	ԳԼՈՒԽ. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ		
	Կայուն օգտագործում	• Գործունեությունները պլանավորելու ու իրականացնելու առավելագույն կայուն արդյունք	• Գործունեությունները պլանա-վորելու ու իրականացնելու պոտենցիալ հզորություն
	Նախազգուշության սկզբունք	• Շրջակա միջավայրին անորոշության պատճառով վնաս հասցնելուց խուսափելու գործողությունները ձգձգելու բացառում	• Կանխելու միջոցառումներ մեղմելու միջոցառումների փոխարեն
	«Աղտոտողը վճարում է» սկզբունք	• Երրորդ կողմին բնապահպանական ազդեցությունների հետևանքով հասցված վնասի փոխհատուցում	• Բնապահպանական ծախսի հաշվառում
	Նախնական բնապահպանական գնահատում	• Շրջակա միջավայրի վրա ծրագրերի և գործունեությունների ազդեցության ուսումնասիրություն	• Այլընտրանքները դիտարկելու և ազդեցությունները նվազեցնելու գնահատում
	Նախնական ծանուցում	• Ազդակիր մարդկանց որևէ գործունեության կամ ծրագրի տեղեկատվություն	• Ազդեցությունից խուսափելու/ նվազեցնելու նպատակով և վարչական ու դատական ընթացակարգերին համահավասար մատչելիություն
	Բնապահպանական ստանդարտներ և մոնիթորինգ	• Պահպանության ստանդարտների սահմանում • Փոփոխությունների մոնիթորինգ	• Շրջակա միջավայրի վիճակի համապատասխան տվյալների հրապարակում
	Սերունդների իրավունքների արդարացի պահպանություն	• Պահպանության և օգտագործման երկարաժամկետ հեռանկար	

Աղյուսակ. ՋՈԿ տարբերակները գնահատելիս հաշվի առնելիք սկզբունքներ

ՀԱՎԵԼՎԱԾ 2
ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿ

Հարավաֆրիկյան ջրային ռեսուրսների ազգային ռազմավարությունից, 2004թ.
http://www.dwaf.gov.za/Documents/

Գլուխ 1. Ջրի քաղաքականություն, ջրի օրենք և ջրային ռեսուրսների կառավարում
1.1 Ջրի ազգային քաղաքականություն
1.2 Ջրի ազգային օրենք
1.3 Ջրային ռեսուրսների ազգային ռազմավարություն
1.4 Ջրային ռեսուրսների համապարփակ կառավարում

Գլուխ 2. Հարավային Աֆրիկայի ջրի իրավիճակը և առաջարկն ու պահանջարկը հավասարակշռելու ռազմավարություններ
2.1 Ներածություն
2.2 Ջրի իրավիճակի լայն հեռանկար
2.3 Ջրային ռեսուրսներ
2.4 Ջրի պահանջարկներ
2.5 Առաջարկի ու պահանջարկի փոխազդեցությունը հավասարակշռելու ռազմավարություններ
2.5.1 Ներկա իրավիճակ
2.5.2 Հեռանկար
2.5.3 Զարգացման հնարավորություններ
2.5.4 Համաձայնեցման միջամտություններ
2.6 Ջրի մատչելիության ու պահանջների վրա ազդող այլ գործոններ
2.6.1 Հողօգտագործում
2.6.2 Կլիմայի փոփոխություն
2.7 Նախարարի ուղղակի հսկողության ներքո գտնվող ջրային ռեսուրսներ
2.7.1 Պաշար
2.7.2 Միջազգային իրավունքների ու պարտավորությունների համար պահանջվող ջուր
2.7.3 Ռազմավարական նշանակության ջրօգտագործում
2.7.4 Նախատեսված հետագա աճը բավարարելու չնախատեսված իրավիճակներ
2.7.5 Ջրային ռեսուրսների կառավարման տարածքների միջև վերաբաշխելու պաշարներ

Գլուխ 3. Ջրային ռեսուրսների կառավարման ռազմավարություններ
Մաս 1 Ջրային ռեսուրսների պահպանություն
3.1.1 Ներածություն
3.1.2 Ռեսուրսի պահպանությանն ուղղված միջոցառումներ
3.1.3 Աղբյուրների ուղղակի հսկողություն
3.1.4 Ստորերկրյա ջրային ռեսուրսների պահպանություն
3.1.5 Ջրաճահճային տարածքներ

Մաս 2. Ջրօգտագործում
3.2.1 Ներածություն
3.2.2 Ջրօգտագործում
3.2.3 Ջրօգտագործման լիազորություն/թույլտվություն
3.2.4 Ջրի որակ

Մաս 3. Ջրի խնայողություն և ջրի պահանջարկի կառավարում
3.3.1 Ներածություն
3.3.2 Ջրի խնայողության և ջրի պահանջարկի կառավարման ազգային ռազմավարություն
3.3.3 Ջրի խնայողության և ջրի պահանջարկի կառավարման սկզբունքներ
3.3.4 Բնագավառային ռազմավարություններ
3.3.5 Ներմուծված, արագ տարածվող բուսականության հսկողություն

Մաս 4. Ջրի գին և ֆինանսական աջակցություն
3.4.1 Ջրի գին
3.4.2 Ջրօգտագործման վարձեր
3.4.3 Ֆինանսական աջակցություն

Մաս 5. Ջրի կառավարման կառույցներ
3.5.1 Ներածություն
3.5.2 Ջրի կառավարման կառուցվածքային շրջանակ
3.5.3 Ջրի կառավարման կառույցների փոխհարաբերություններ

Մաս 6. Մոնիթորինգ և տեղեկատվություն
3.6.1 Ներածություն
3.6.2 Մոնիթորինգի համակարգեր
3.6.3 Տեղեկատվական համակարգեր

Մաս 7. Աղետների կառավարում
3.7.1 Ներածություն
3.7.2 Աղետները կառավարելու ազգային քաղաքականություն և օրենսդրություն
3.7.3 Վարչությունների դերը աղետները կառավարելու գործում

Մաս 8. Գործունեություններ ակնկալող ծրագիր
3.8.1 Ներածություն
3.8.2 Շահագործական գործունեություններ
3.8.3 Ջրի բաշխման միջազգային համաձայնագրեր
3.8.4 Ֆիզիկական ենթակառուցվածքի զարգացում

Մաս 9. Ֆինանսական ենթադրություններ
3.9.1 Ներածություն
3.9.2 Շահագործման ծախսեր
3.9.3 Կապիտալ ծախսեր
3.9.4 Առկա ֆինանսավորում
3.9.5 Հետագա ֆինանսավորման պայմանագրեր
3.9.6 Եզրակացություն

Գլուխ 4. Լրացուցիչ ռազմավարություններ
4.1 Ներածություն
4.2 Ջրի բնագավառում ունակությունների ձեռքբերում
4.3 Հասարակական խորհրդատվության կազմակերպում, կրթություն և տեղեկատվության տարածում
4.3.1 Հասարակական խորհրդատվություն
4.3.2 Ջրային կրթության ծրագիր
4.3.3 Հաղորդակցություն
4.4 Հետազոտություններ ջրային բնագավառում

Գլուխ 5. Ազգային պլանավորում և համակարգում. ջրային ռեսուրսների բնագավառում միջազգային համագործակցություն
5.1 Ներածություն
5.2 Կառավարության՝ առկա կարևոր քաղաքականության շրջանակ
5.3 Ազգային այլ օրենքների առանձնահատուկ պահանջներ
5.3.1 Ջրային ծառայությունների օրենք, 1997
5.3.2 Բնապահպանական օրենսդրություն
5.3.3 Արտակարգ իրավիճակների ազգային օրենսդրություն
5.3.4 Պետական ֆինանսների կառավարման օրենք, 1999
5.3.5 Տեղեկատվության մատչելիության օրենք, 2000
5.3.6 Վարչաիրավական օրենք, 2000
5.4 Միջկառավարական պլանավորում
5.5 Ազգային ծրագրեր
5.5.1 Գյուղական բնակավայրերի համապարփակ զարգացման ծրագիր
5.5.2 Քաղաքային բնակավայրերի վերակառուցման ռազմավարություն
5.6. Ջրային միջազգային համագործակցություն
5.6.1 Հարևան երկրների հետ ջուրը համատեղ օգտագործելու պայմանագրեր
5.6.2 Համագործակցություն հարավաֆրիկյան տարածաշրջանում
5.6.3 Այլ միջազգային հարաբերություններ
5.6.4 Միջազգային դոնոր կազմակերպությունների համագործակցություն

ՄԱՍ 2

Աշխատանքային ուղեցույց

Օժանդակողի գրառումներ

ԴԱՍԸՆԹԱՑԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ

Դասընթացը ներկայացնելը կարևոր պահ է և հնարավորություն՝ համոզվելու, որ ակնկալիքները համապատասխանում են դասընթացի նպատակին: Հարկ է գտագործել առաջին 1-2 ժամերը և

- ներկայացնել դասընթացը, նպատակը և բացատրել՝ ինչու է այն անցկացվում այստեղ.
- ծանոթացնել մասնակիցներին.
- մասնակիցների շրջանում ստեղծել փոխըմբռնման թիմային տրամադրություն.
- ներկայացնել ընդունող կազմակերպությունը և մյուս գործընկերներին.
- հաշվի առնելով դասընթացի ակնկալիքները՝ համապատասխանեցնել դրանք դասընթացի բովանդակությանն ու ծրագրի ընդհանուր ժամանակացույցին.
- քննարկել սեմինար կազմակերպելու հարցերը՝ սկիզբը և այլն:

Պետք է քննարկել նաև դասընթացն անցկացնելու, ցուցադրական նյութերը ներկայացնելու տեղի (սենյակ, պատի մակերես) և այլնի վերաբերող ընդհանուր հարցերը:

Շրջանակ 17. Համակարգչային ցուցադրում /Սլայդներ. ընդհանուր խորհուրդներ

- Միջինը 2-3 րոպե ծախսել ամեն սլայդը բացատրելու համար: 45 րոպե տևողությամբ ելույթի համար պետք է ունենալ ոչ ավելի քան 10-15 սլայդ:
- Խուսափել սլայդի վրա մեծ ծավալի տեքստերից և չկարդացալ սլայդից:
- Տեքստը սլայդի վրա ներկայացնել որպես վերնագրեր կամ կարճ հուշումներ այն մասին, թե ի՛նչ պետք է ասել և ի՛նչ հերթականությամբ:
- Խուսափել դժվարընթեռնելի գույներից, ինչպես կարմիրը կամ դեղինը:
- Ամենակարևորը. ստուգել՝ արդյոք հնարավոր է սլայդները կարդալ այն տեղից, որտեղ պետք է նստեն մասնակցիները:

Դասընթացի նպատակը

Դասընթացի նպատակն է մասնակիցներին ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման (ՋՌՀԿ) պլանը մշակելու գիտելիքներ և հմտություններ տալ, որպեսզի այն քաղաքականապես և սոցիալապես ընդունելի, ինչպես նաև իրագործելի լինի:

ԴԱՍԸՆԹԱՑ 1. ՋՌՀԿ. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ուսուցման նպատակներ

Սա ջրային ռեսուրսները համապարփակ կառավարելու իմաստը և այն սկզբունքները ներկայացնելն է, որոնցով անհրաժեշտ է ղեկավարվել՝ ջրային ռեսուրսների կայուն կառավարման ու զարգացման ընդհանուր նպատակի հասնելու համար: Դասընթացի ավարտին մասնակիցները պետք է կարողանան.

- ներկայացել ՋՌՀԿ իմաստը և հիմնական սկզբունքները.
- գիտակցել ՋՌՀԿ մոտեցումն ընդունելու հիմնական պատճառները.
- նկարագրել այն հիմնախնդիրները, որոնք պետք է ընդգրկվեն իրենց երկրի ՋՌՀԿ ռազմավարության մեջ:

Դասընթացն անցկացնելու անհրաժեշտ նյութեր

Ներկայացնելու համար պատրաստված նյութեր
Քննարկման նախապատրաստված թեմաներ

Մոտեցում

Խորհուրդներ

- Ստուգել մասնակիցների գիտելիքները դասընթացի տևողությունը ճշտելու նպատակով: Մասնակիցների գիտելիքներից կախված՝ այն կարող է ներկայացվել որպես հիշեցում մեկ ժամվա ընթացքում, իսկ եթե խումբը ավելի քիչ փորձ ունի, կարող է տևել մինչև կեսօր:
- Հնարավորության դեպքում մասնակիցներին նախապես բաժանել Cap-Net-ի ՋՌՀԿ դասագիրքը, որպեսզի նախապատրաստվեն և կարողանան ավելի լավ քննարկել:
- Ընդհատել ելույթը մի քանի րոպեն մեկ՝ մասնակիցներից արձագանք ստանալու համար: Օգտագործել ձեռնարկի այն հարցերը, որոնք կօգնեն Ձեզ:
- Տարածաշրջանից կախված՝ կարող են ծագել խթանող հարցեր, օրինակ՝ ջրի համար վճարման հիմնական սկզբունքների կամ գենդերային հարցեր: Հեշտացնել մասնակիցների հետ քննարկումը, չփորձել շրջանցել հարցը, սակայն թույլ չտալ, որ այն չափազանց շատ ժամանակ խլի:

ԴԱՍԸՆԹԱՑ 2. ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՊԼԱՆԱՎՈՐԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑ. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ուսուցման նպատակներ

Այս դասընթացի նպատակն է ներկայացնել ՋՌՀԿ պլանավորման գործընթացն ու դրա հիմնական տարրերը:

Դրանք համառոտ են նկարագրվում՝ որպես նախաբան հաջորդ գլուխներում ներկայացնելու համար:

Դասընթացի ավարտին մասնակիցները պետք է կարողանան.

- գիտակցել ջրային ռեսուրսները կառավարելու ՋՌՀԿ պլանների նշանակությունը,.
- ճանաչել պլանավորման շրջանի հիմնական փուլերը և հասկանալ՝ ընդհանուր առմամբ ինչ են դրանք նշանակում ջրային ռեսուրսների կայուն կառավարման համատեքստում.
- գնահատել ՋՌՀԿ պլանը մշակելու տարբեր գործողությունները և դրանց ծավալն ու շրջանակը.
- հասկանալ, թե ինչու են անհրաժեշտ պլանն ու պլանավորման գործընթացի միջանկյալ փուլերը.
- քննարկել՝ ինչ է դա նշանակում մասնակիցների երկրների պայմաններում:

Դասընթացն անցկացնելու անհրաժեշտ նյութեր

Ներկայացնելու համար պատրաստված նյութեր
Քննարկման նախապատրաստված թեմաներ
Խմբային աշխատանքի ուղեցույց
Գրիչ, թուղթ, ժապավեն կամ մեկուսացնող ժապավեն, գրատախտակ:

Մոտեցում

1. Կիրառել ազգային, ավազանային և ենթաավազանային պլանավորումների միևնույն սկզբունքները: Անհրաժեշտ է համապատասխանեցնել ելույթը և վարժությունները՝ ըստ մասնակիցների պատրաստվածության:
2. Հնարավորության դեպքում օգտագործել վարժություններ՝ օգնելու մասնակիցներին մշակել փաստացի աշխատանքային պլան կամ բարելավել առկա աշխատանքային պլանը: Այս եղանակով վարժությունները ողջ դասընթացի ժամանակ հենվում են մեկը մյուսին և օգտակար լինում նաև դասընթացից հետո:
3. Ելույթի մեջ ներառել հիմնական քննարկման հարցերը՝ որպես ելույթը հատվածների բաժանելու և մասնակիցներին ներգրավելու միջոց:
4. Վարժություն: Ստորև ներկայացվում է խմբային աշխատանքի վարժության կառուցվածքի օրինակը: Պետք է պատրաստ լինել փոխելու այն ըստ մասնակիցների հետաքրքրությունների. արդյոք նրանք ցանկանում են զբաղվել փաստացի պլանավորմա՞մբ, թե՞ դասընթացը պարզապես տեսություն սովորելու փորձ է:

Վարժություն. պլանավորման շրջանի ծրագրում (1ժամ)

Կազմել խմբեր: Մասնակիցներին ըստ երկրների և տարածաշրջանների բաժանել խմբերի: Կազմել այլընտրանքային պատահական խմբեր, եթե դա տեսական վարժություն է, կամ եթե բոլոր մասնակիցները միևնույն երկրից են:

Տալ առաջադրանք: Ամեն մի խմբի տրվող ցուցումը կարող է նույնը լինել. օրինակ՝ «Մշակել ՋՈՒԿ պլանի՝ ամբողջ շրջանով սխեմատիկ ծրագիր՝ իր ժամանակացույցով»: Կարող է մշակվել երկրի կամ ավազանի մակարդակով, ինչպես հարմար է: Խնդրել ամեն մի խմբի, որ ընտրեն ղեկավար և հաշվետու անձ: Երբ հաշվետվությունը ներկայացվի, քննարկմանը ժամանակ տրամադրել:

Ներկայացնել հաշվետվություն: Տալ հստակ ուղեցույց, թե ինչպես պետք է ներկայացնել հաշվետվությունը՝ ներառելով ամեն մի ելույթի հատկացվող ժամանակը: Համոզվել, որ հաշվետվություն ներկայացնողն ունի բոլոր անհրաժեշտ նյութերը՝ համակարգիչ, գրատախտակ կամ համապատասխան թղթեր:

ԴԱՍԸՆԹԱՑ 3. ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒՄ

Ուսուցման նպատակներ

Այս դասընթացը կենտրոնանում է ջրային ռեսուրսների կառավարման պլանավորման գործընթացի նախնական քայլերի վրա: Դասընթացի ավարտին մասնակիցները պետք է՝

1. հասկանան ՋՌՀԿ պլանավորման գործընթացը նախաձեռնելու հիմնական գործոնները.
2.մշակեն պլանավորման գործընթացը կառավարելու խումբ ձևավորելու ուղեցույց :

Դասընթացն անցկացնելու անհրաժեշտ նյութեր

Ներկայացնելու համար պատրաստված նյութեր
Քննարկելու նախապատրաստված թեմաներ
Խմբային աշխատանքի ուղեցույց
Գրիչ, քարտ, ժապավեն կամ մեկուսացնող ժապավեն, գրատախտակ:

Մոտեցում

1. Պլանավորման գործընթացի նախաձեռնում. ներկայացնել 30 րոպե, խմբային աշխատանք՝ 60 րոպե.
2. Ձեռնարկում նշվում է ազգային պլանի կառավարության պարտավորությունը: Սակայն եթե պլանավորումը մշակվում է տեղական մակարդակով, այն պետք է հարմարեցվի որոշումներ կայացնող տեղական կառույցներին, որպեսզի ապահովվի աջակցությունը:
3. Ելույթի մեջ ներառել հիմնական քննարկման հարցերը՝ որպես ելույթը հատվածների բաժանելու և մասնակիցներին ներգրավելու միջոց:
4. Վարժություն: Առաջարկվող վարժությունը նեկայացվում է ստորև:

Վարժություն. պլանն ու՞մն է (1ժամ)

Կազմել խմբեր: Մասնակիցներին ըստ երկրների և տարածաշրջանների բաժանել խմբերի: Ստեղծել այլընտրանքային պատահական խմբեր, եթե դա տեսական վարժություն է, կամ եթե բոլոր մասնակիցները միևնույն երկրից են:

Տալ առաջադրանք: Կարող են օգտագործվել հետևյալ հարցերը.

- Որտեղի՞ց է ՋՌՀԿ պլանի պահանջը:
- Ովքե՞ր են պլանի ակնկալվող իրականացնողները և արդյոք նրանք արդեն ընդգրկվա՞ծ են պլանը մշակելու գործում:
- Արդյոք այդ մարդիկ ՋՌՀԿ բավարար գիտելիքներ ունե՞ն:
- Ո՞րը կլինի Ձեր երկրի՝ պլանը մշակելու համապատասխան կառավարման կառույցը:

Խնդրել ամեն մի խմբի, որ ընտրեն ղեկավար և հաշվետու անձ: Երբ հաշվետվությունը ներկայացվի, քննարկմանը ժամանակ տրամադրել:

Ներկայացնել հաշվետվություն: Տալ հստակ ուղեցույց, թե ինչպես պետք է ներկայացնել հաշվետվությունը՝ ներառելով ամեն մի ելույթի հատկացվող ժամանակը: Համոզվել, որ հաշվետվություն ներկայացնողն ունի բոլոր անհրաժեշտ նյութերը՝ համակարգիչ, ցուցապաստառ կամ պրոյեկտոր:
Քննարկման հնարավորություն ընձեռել ելույթների ակնհայտ տարբերությունների դեպքում:

ԴԱՍԸՆԹԱՑ 4. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ՄՇԱԿՈՒՄ

Ուսուցման նպատակներ
Այս դասընթացը կենտրոնանում է աշխատանքային պլանը մշակելու վրա: Դասընթացի ավարտին մասնակիցները պետք է.
1. տեղյակ լինեն աշխատանքային պլանի հիմնական տարրերին.
2. գնահատեն՝ ինչ է ներառված ամեն մի խոշոր առաջադրանքում և ձեռք բերելիք ունակությունները.
3. ի վիճակի լինեն որոշելու այն ռազմավարությունները, որոնք պետք է օգտագործվեն քաղաքական և շահագրգիռ կողմերի պարտավորությունը ձեռք բերելու և պահպանելու համար:

Դասընթացն անցկացնելու անհրաժեշտ նյութեր

Ներկայացնելու համար պատրաստված նյութեր
Քննարկելու նախապատրաստված թեմաներ
Խմբային աշխատանքի ուղեցույց
Գրիչ, քարտ, ժապավեն կամ մեկուսացնող ժապավեն, գրատախտակ:

Մոտեցում
1. Աշխատանքային պլանի ստեղծում. ելույթ՝ 45 րոպե, խմբային աշխատանք՝ 90 րոպե:
2. Ձեռնարկն անդրադառնում է ազգային պլանի կառավարության պարտավորությանը: Այդուհանդերձ, տեղական պլանավորման հետ գործ ունենալիս այն պետք է հարմարեցվի տեղական որոշումներ կայացնող կառույցներին, և թե ինչպես կարելի է երաշխավորել, որ դրանք լինեն աջակցող:
3. Ելույթների մեջ ներառել հիմնական քննարկման հարցերը՝ որպես ելույթը հատվածների բաժանելու և մասնակիցներին ներգրավելու միջոց:

Վարժություն. քաղաքական և շահագրգիռ կողմերի ներգրավում պլանավորման մեջ (1.5ժամ)

Ձևավորել խմբեր: Երեք խումբ

Տալ առաջադրանք: Երեք առաջադրանք: Դրանք կարող են բաժանվել խմբերի միջև, եթե բոլորը միևնույն երկրից են, կամ ամեն մի խումբ կարող է ստանձել բոլոր երեք հարցերը:

- Ի՞նչ քայլեր ձեռնարկել պլանավորման ամբողջ գործընթացում մինչև պլանն ընդունելն ու իրականացնելը քաղաքական պարտավորություն ստանձնելու և պահպանելու համար:
- Բավարա՞ր է շահագրգիռ կողմերի մասնակցությունը: Ո՞ր փուլերում է անհրաժեշտ և ինչպե՞ս պետք է իրականացվի շահագրգիռ կողմերի խորհրդատվությունը:
- Կազմել ունակություններ ձեռք բերելու պլան՝ որոշելով, թե որ խումբը և ինչ ունակություններ ձեռք բերելու կարիք ունի:

Խնդրել ամեն մի խմբի, որ ընտրեն ղեկավար և հաշվետու անձ: Երբ հաշվետվությունը ներկայացվի, քննարկմանը ժամանակ տրամադրել:

Ներկայացնել հաշվետվություն: Տալ հստակ ուղեցույց, թե ինչպես պետք է ներկայացնել հաշվետվությունը՝ ներառելով ամեն մի ելույթի հատկացվող ժամանակը: Համոզվել, որ հաշվետվություն ներկայացնողն ունի բոլոր անհրաժեշտ նյութերը՝ համակարգիչ, ցուցապաստառ կամ պրոյեկտոր:
Քննարկման հնարավորություն ընձեռել ելույթների ակնհայտ տարբերությունների դեպքում:

ԴԱՍԸՆԹԱՑ 5. ՀԻՄՆԱՎՈՐԵԼ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ

Ուսուցման նպատակներ

Այս դասընթացը պետք է բացատրի ջրի ազգային հեռահար նպատակի կամ ջրային քաղաքականության կարևորությունը՝ որպես ազգային պլանավորման գործընթացի ուղեցույց:
Դասընթացի ավարտին մասնանակիցները պետք է.

- հասկանան ջրի հեռահար նպատակի կամ ջրային քաղաքականության և պլանավորման կապը.
- գիտակցեն այն քայլերը կամ գործողությունները, որոնք կարող են ձեռնարկվել՝ հեռահար նպատակին հասնելու համար:

Դասընթացն անցկացնելու անհրաժեշտ նյութեր

Ներկայացնելու համար պատրաստված նյութեր
Քննարկելու նախապատրաստված թեմաներ
Խմբային աշխատանքի ուղեցույց
Գրիչ, քարտ, ժապավեն կամ մեկուսացնող ժապավեն, գրատախտակ:

Մոտեցում

1. Ելույթի մեջ ներառել հիմնական քննարկման հարցերը՝ որպես ելույթը հատվածների բաժանելու և մասնակիցներին ներգրավելու միջոց:
2. Հիշեցնել մասնակիցներին՝ պլանավորման շրջանի որ փուլում են:
3. Դասընթացի հիմնական մասը պետք է կազմի վարժությունը: Դերակատարների խաղը կարող է օգնել՝ շեշտելու ջրային ռեսուրսների կառավարման առկա համակարգի հիմնախնդիրները և այն բարելավելու կարիքը: Հիմնախնդիրները կարող են օգտագործվել որպես այն հեռահար նպատակի հիմք, որին մասնակիցները կցանկանային հասնել 25 տարի հետո:

Վարժություն 1. դերակատարների խաղ (45րոպե)

Օգտագործել դերակատարների խաղը, որպեսզի մասնակիցները կարողանան վեր հանել ջրային ռեսուրսների կառավարման առկա հիմնախնդիրները:

Դերակատարների խաղից հետո խնդրել մասնակիցներին, որ նրանք արձագանքեն խաղին և բերեն օրինակներ, որոնցում շեշտվում են անարդարության, տնտեսական անարդյունավետության և անկայուն օգտագործման հարցերը:

Այս կարծիքներն այնուհետև կարող են օգտագործվել՝ հետագայում հեռահար նպատակ մշակելու համար, որը հաջորդ վարժությունն է:

Վարժություն 2. կանխատեսման մշակում (30 րոպե)

Կազմել խմբեր: Կազմել երեք խումբ:

Տալ առաջադրանք: Դերակատարների խաղի ընթացքում պարզաբանված հիմնախնդիրների և կայուն զարգացման պարտավորության հիման վրա խմբերում մշակել 2025թ. ջրային ռեսուրսների կառավարման հեռահար նպատակ: Խնդրել ամեն մի խմբի, որ ընտրեն ղեկավար և հաշվետու անձ: Երբ հաշվետվությունը ներկայացվի, քննարկմանը ժամանակ տրամադրել:

Ներկայացնել հաշվետվություն:. Ամեն մի խումբ պատի վրա փակցնում է իր տարբերակը, բարձրաձայն կարդում և թողնում է պատին: Ստուգել, եթե որոշ անհամաձայնություններ կան կամ անհրաժեշտ պարզաբանումների կարիք կա: Քննարկման հնարավորություն ընձեռել ելույթների ակնհայտ տարբերությունների դեպքում:

ԴԱՍԸՆԹԱՑ 6. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ուսուցման նպատակներ

Այս դասընթացն ուղղված է ջրային ռեսուրսների կառավարման առկա իրավիճակի վերլուծությանը և նրան, թե ինչպես են ձևավորում հետագա գործունեությունների ընտրության հիմքեր:
Դասընթացի ավարտին մասնակիցները պետք է.

- հասկանան, թե ինչ է վիճակի վերլուծությունը, և ինչպես է այն խթանում ՋՌՀԿ պլանի մշակումը:
- Կարողանան կենտրոնացնել իրավիճակի վերլուծությունն առավել կարևոր տարածքներում և որոշեն վերլուծությունների լավագույն շրջանակներն ու ծավալները:

Դասընթացն անցկացնելու անհրաժեշտ նյութեր

Ներկայացնելու համար պատրաստված նյութեր
Քննարկելու նախապատրաստված թեմաներ
Խմբային աշխատանքի ուղեցույց
Գրիչ, թուղթ, ժապավեն կամ մեկուսացնող ժապավեն, գրատախտակ:

Մոտեցում

1. Ելույթի մեջ ներառել հիմնական քննարկման հարցերը՝ որպես ելույթը հատվածների բաժանելու և մասնակիցներին ներգրավելու միջոց:
2. Հարկ կլինի ելույթը հարմապատասխանեցնել լսարանին, իսկ հարցերն օգտագործել հասկանալու, թե ինչքան խորը պետք է լինի քննարկումը, որ լսարանն իրեն հարմարավետ զգա:
3. Իրավիճակը պետք է վերլուծվի: Հետևաբար վերլուծական միջոցների ցուցադրումը, ինչպես, օրինակ, Մեթապլանը (հիմնական պլանը), կարող է օգտակար լինել:

Վարժություն. հիմնախնդիրներ և դրանց պատճառները (1.5 ժամ)

Ամբողջությամբ կատարում է փորձառու օժանդակողը՝ օգտագործելով քարտեր (Մեթապլան. տրվում է հղում՝ ուսումնասիրել այն, եթե տեխնիկային ծանոթ չեք):

Բաժանել թղթիկներ և գրիչներ:

Մասնակիցները թղթիկների վրա գրանցում են, թե որոնք են իրենց կարծիքով ջրային ռեսուրսների կառավարման հիմնախնդիրները կամ իրավիճակը:

Թղթիկները բարձրաձայն ընթերցվում են և փոքր ամրակներով, կպչուն ժապավեններով (զգուշությամբ, որ պատը չվնասվի) ամրացվում պատին կամ գրատախտակին:
Օժանդակողը մասնակիցների օգնությամբ խմբավորում է դրանք «հիմնախնդիրների ծառում»՝ ըստ դրանց առաջացման պատճառների (եթե դա ևս դժվար է, ապա որպես օրինակ կարելի է դիտարկել մեկ խնդրի ոլորտ՝ մի կողմ դնելով մյուսները):

Այս վարժությունը ցույց է տալիս, թե իրավիճակները ինչպես են փոխկապակցված և մի քանի պատճառ վերացնելը կհանգեցնի մեկ խնդրի լուծման: Հաճախ այս «խնդիրների ծառը » հետագայում վերափոխվում է «նպատակների ծառ»: Սա մեր վարժության համար չափազանց բարդ է, և պետք է սահմանափակվել «խնդիրների ծառի» կազմելով:

Մասնակիցների հետ քննարկել.

- ծագած խնդիրների բնույթը.
- փոխկապակցվածությունը միմյանց.
- հարցնել արդյոք տեսնում են որևէ կառավարման խնդիր, որը տվյալ իրավիճակի հիմքն է, ապա գրի առնել.

- քննարկել ներառված այլ գործոնների և պարտավորությունների համախումբը, որոնք կարիք ունեն փոփոխման.
- Այս դասընթացի արդյունքներն ուղղակիորեն կապված են հաջորդ դասընթացին:

Այլընտրանքային վարժություն. իրավիճակի վերլուծություն (45 րոպե)

Կազմել խմբեր: Ձևավորել երկու խումբ:

Տալ առաջադրանք: Տարածաշրջանի իրավիճակը վերլուծելու համար մշակել աշխատանքային պլան՝ ներառելով շահագրգիռ կողմերի հետ հետադարձ կապը:
Խնդրել ամեն մի խմբի, որ ընտրեն ղեկավար և հաշվետու անձ:

Նշանակել քննարկման ժամանակացույց և հաշվետվություն ներկայացնելու վայրը:

Ներկայացնել հաշվետվություն: Տալ հստակ ուղեցույց, թե ինչպես է հաշվետվությունը ներկայացվում՝ ներառելով ամեն մի ելույթի հատկացվող ժամանակը: Համոզվել, որ հաշվետու անձն ունի անհրաժեշտ նյութեր՝ համակարգիչ, գրատախտակ: Քննարկման հնարավորություն ընձեռել ելույթների ակնհայտ տարբերությունների դեպքում:

ԴԱՍԸՆԹԱՑ 7. ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՐԶԱԲԱՆՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

Ուսուցման նպատակներ

Այս դասընթացը պետք է ստուգի, թե ինչպես է մշակվել ջրային ռեսուրսների կառավարման ռազմավարությունը: Դասընթացի վերջում մասնակիցները պետք է.

- գիտակցեն ջրային ռեսուրսների կառավարման հստակ նպատակներ ունենալու կարևորությունը.
- հասկանան, թե ինչպես մշակեն ՋՌՀԿ պլանի ընդունելի և իրագործելի ռազմավարություն:

Դասընթացն անցկացնելու անհրաժեշտ նյութերը

Ներկայացնելու համար պատրաստված նյութեր
Քննարկման նախապատրաստված թեմաներ
Աշխատանքային խմբի ուղեցույց
Գրիչ, թուղթ, ժապավեն կամ մեկուսացնող ժապավեն, գրատախտակ:

Մոտեցում

1. Այս դասընթացի ժամանակ դիտարկվում են ինչպես որոշումներ կայացնելու գործընթացը, այնպես էլ որոշումներ ընդունելու տեխնիկական կողմերը:
2. Հիշեցնել մասնակիցներին, թե պլանավորման որ փուլում են: Քննարկվում են հեռանկարները, նպատակները, վերլուծվում իրավիճակը այնքան ժամանակ, մինչև բոլորը ներգրավվեն այս դասընթացին:
3. Ելույթ՝ 45 րոպե:
4. Հարկ կլինի ելույթը համապատասխանեցնել լսարանին, իսկ հարցերն օգտագործել՝ հասկանալու, թե ինչպիսին պետք է լինի քննարկումը, որ լսարանն իրեն հարմարավետ զգա:
5. Առաջարկվում է երկու այլընտրանքային վարժություն:

Վարժություն 1. ՁՈՒՀԿ ներդրման բարեփոխումների հիմնական ոլորտներ (1 ժամ)
Կազմել խմբեր: Ձևավորել երեք խումբ:
Տալ առաջադրանք: Ամեն մի խումբ անդրադառնում է ՁՈՒՀԿ բարեփոխումների երեք հիմնական ոլորտներից մեկին.

- Հնարավորություն ընձեռող միջավայր
- Կառուցվածքային դերեր
- Կառավարման միջոցներ

3-րդ շրջանակում թվարկված ամեն ոլորտի համար ի՞նչ է նախատեսվում փոխել, և փոփոխությունը ի՞նչի կհանգեցնի:
Խնդրել ամեն մի խմբի, որ ընտրեն ղեկավար և հաշվետու անձ:
Նշանակել քննարկման ժամանակացույց և հաշվետվություն ներկայացնելու վայրը:

Ներկայացնել հաշվետվություն: Տալ հստակ ուղեցույց, թե ինչպես է հաշվետվությունը ներկայացվում՝ ներառելով ամեն ելույթի հատկացվող ժամանակը: Համոզվել, որ հաշվետու անձն ունի անհրաժեշտ նյութեր՝ համակարգիչ, գրատախտակ:
Քննարկման հնարավորություն ընձեռել ելույթների ակնհայտ տարբերությունների դեպքում:

Այլընտրանքային վարժություն 2. խմբային աշխատանք (1.5ժամ)
Կազմել խմբեր: Ձևավորել երեք խումբ:
Տալ առաջադրանք

- Խումբ 1. Ու՞մ պետք է ներգրավել ռազմավարություն մշակելու, համաձայնեցնելու ու հաստատելու գործընթացում, և ի՞նչպես է դա իրագործվելու:
- Խումբ 2. Ի՞նչ քայլեր պետք է ձեռնարկել՝ ապահովելու համար տվյալ ռազմավարության համապատասխանությունը այլ օրենքների, քաղաքականությունների և ռազմավարությունների:
- Խումբ 3. Սկսել ինքնագնահատումից (Շրջանակ 4). ռազմավարության ի՞նչ փոփոխություններ են անհրաժեշտ արդյունքի հասնելու համար: (Կենտրոնանալ ռազմավարության և ոչ թե գործունեության փոփոխության վրա):

Խնդրել ամեն մի խմբի, որ ընտրեն ղեկավար և հաշվետու անձ:
Նշանակել քննարկման ժամանակացույց և հաշվետվություն ներկայացնելու վայրը:

Ներկայացնել հաշվետվություն: Տալ հստակ ուղեցույց, թե ինչպես է հաշվետվությունը ներկայացվում՝ ներառելով ամեն ելույթի հատկացվող ժամանակը: Համոզվել, որ հաշվետու անձն ունի անհրաժեշտ նյութեր՝ համակարգիչ, գրատախտակ:
Քննարկման հնարավորություն ընձեռել ելույթների ակնհայտ տարբերությունների դեպքում:

ԴԱՍԸՆԹԱՑ 8. ՄՇԱԿՎԱԾ ԵՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՁՈՒՀԿ ՊԼԱՆ

Ուսուցման նպատակներ

Այս դասընթացի նպատակն է կազմել ՁՈՒՀԿ պլանի բովանդակությունը, շարադրել պլանը, քննարկել և ապահովել դրա հաստատումը:

Դասընթացի վերջում մասնակիցները պետք է.
- կարողանան պարզաբանել ՁՈՒՀԿ պլանի գլխավոր բովանդակությունը,
- տեղյակ լինեն պլանը մշակելու և հաստատելու համապատասխան քայլերին և գործողություններին,
- դիտարկեն՝ ինչ հարցերի պետք է անդրադառնա պլանը մասնակիցների երկրներում:

Դասընթացն անցկացնելու անհրաժեշտ նյութեր

Ներկայացնելու համար պատրաստված նյութեր
Քննարկման նախապատրաստված թեմաներ
Աշխատանքային խմբի ուղեցույց
Գրիչ, թուղթ, ժապավեն կամ մեկուսացնող ժապավեն, գրատախտակ:

Մոտեցում

1. Հիշեցնել մասնակիցներին, թե պլանավորման շրջանի որ փուլում են: Հեռահար նպատակը, նպատակները, իրավիճակի վերլուծությունը և ռազմավարությունը պլանը ձևավորելու հիմք են:
2. Ելույթ՝ 30 րոպե:
3. Ելույթի մեջ ներգրավել քննարկումների հիմնական կետերը՝ որպես ելույթը հատվածների բաժանելու և մասնակիցներին ներգրավելու միջոց:
4. Պլանը գրելը ռազմավարությունն իրականացնելու վերջին քայլն է, սակայն դասընթացի ժամանակ կարևոր է, որ պլանը շարադրվի ***տրամաբանական շրջանակի մոտեցմամբ (ՏՇՄ)***: ՏՇՄ պետք է ներկայացվի, և եթե անհրաժեշտ է , որոշ ժամանակ պետք է հատկացվի այն ներկայացնելուն: Այնուամենայնիվ, դասընթացին հատկացված կարճ ժամանակահատվածում հնարավոր չէ լիովին բացատրել այս մոտեցումը:
5. Ուշադրություն հրավիրել գնահատման չափանիշներին և պլանի համապատասխանության ապահովմանն ու ընդունելիության տեսակետից դրանց օգտակարությանը:

Վարժություն 1. պլանի ընդունում (1ժամ)

Կազմել խմբեր: Ձևավորել երեք խումբ: Խմբերից մեկում պետք է լինեն ՏՇՄ-ի որոշ փորձ ունեցող մարդիկ:

Տալ առաջադրանք

- Խումբ 1. Պլանը հաստատելու ի՞նչ գործընթաց պետք է իրականացնել: Արդյոք կարևո՞ր է շահագրգիռ կողմերի հաստատումը, և ի՞նչպես դա պետք է իրագործել: Ի՞նչպես պետք է պլանը ներդաշնակեցնել զարգացման այլ ծրագրերի:
- Խումբ 2. Ինչպե՞ս կարելի է երաշխավորել պլանի ֆինանսավորումը: Տրվա՞ծ են արդյոք միջոցառումները, որոնք կընդլայնեն պլանը ֆինանսապես և քաղաքականապես հասանելի և իրականացնելի դարձնելու հնարավորությունը:
- Խումբ 3. ՏՇՄ կառույցում ՁՈՒԿ-ի օրինակի մշակում:

Խնդրել ամեն մի խմբի, որ ընտրեն ղեկավար և հաշվետու անձ:
Նշանակել քննարկման ժամանակացույց և հաշվետվություն ներկայացնելու վայրը:

Ներկայացնել հաշվետվություն: Տալ հստակ ուղեցույց, թե ինչպես է հաշվետվությունը ներկայացվում՝ ներառելով ամեն ելույթի հատկացվող ժամանակը: Համոզվել, որ հաշվետու անձն ունի անհրաժեշտ նյութեր՝ համակարգիչ, գրատախտակ:
Քննարկման հնարավորություն ընձեռել ելույթների ակնհայտ տարբերությունների դեպքում:
Օժանդակողը պետք է մասնակիորեն պատրաստվի՝ բացատրելու ՏՇՄ-ն:

Վարժություն 2. որոշակի դեպքի ուսումնասիրություն. ինչպե՞ս այլ կերպ անել դա:

Կազմել խմբեր

Տալ առաջադրանք

Ընթերցել ուսումնական օրինակը: Խորհուրդ տալ, թե ինչպես այլ կերպ անել դա կամ առաջարկել բավարար ուշադրության չարժանացած մոտեցումներ:

Ուսումնական օրինակ

Արտաքին գործակալությունը (օրինակ՝ Գլոբալ ջրային համագործակցությունը՝ ԳՋՀ) ֆինանսապես աջակցում է Ա երկրին՝ մշակելու ՋՌՀԿ պլան: ԳՋՀ-ն հանձնարարել է տարածաշրջանային ԳՋՀ-ին և երկրի ազգային ջրային համագործակցությանը (ԱՋՀ), որ աջակցեն գործընթացին:

Տարածաշրջանային ԳՋՀ բանակցել է Ա երկրի նախարարի հետ և կարողացել է համոզել նրան և անմիջական քարտուղարին, որ ՋՌՀԿ-ն լավ գաղափար է, և որ ՋՌՀԿ պլանը կարող է աջակցել Ա երկրին առավել արդյունավետ կառավարելու իր ջրային ռեսուրսները: ԳՋՀ-ն համոզել է նաև նախարարությանը, որ պլանը մշակվի ԳՋՀ-ի համագործակցությամբ:

Տարածաշրջանային ԳՋՀ սկսում է ծանոթացնել ազգային ՋՀ-ին և այլ շահագրգիռ կողմերի ՋՌՀԿ պլանի նախապատմությանը:

Տ-ԳՋՀ շահագրգիռ կողմերի հետ կազմակերպում է առաջին համաժողովը, որին ներկա են բոլոր շահագրգիռ կողմերի ներկայացուցիչները (կառավարություն, ԱՋՀ և ԱՋՀ-ից դուրս շահագրգիռ կողմեր): Այս համաժողովում որոշվում են հիմնական կետերը, ինչպես ներկայացված է 7.2 բաժնում (պատասխան է տրվում չորս հարցերի):

Առաջին հանդիպման արդյունքներն են.

Բովանդակություն.

- Հիմնական դրույթներ և ՋՌՀԿ-ին անցնելու պահանջ
- Ջրային ռեսուրսների վիճակը
- Հեռանկարներ ու նպատակներ (Հազարամյակի զարգացման նպատակների հիման վրա ձևավորված)
- Ջրային ռեսուրսների կառավարման նպատակների նշանակություն
- Հեռանկարի իրականացում.
    - *Ջուր սննդի համար*
    - *Ջրային ծառայություններ*
    - *Ջուր և շրջակա միջավայր*
- Ռեսուրսային պահանջներ

<u>Շահագրգիռ կողմերի ներգրավում (հասարակության մասնակցություն)</u>
Շահագրգիռ կողմերը պետք է տեղեկացվեն ժամանակին՝ ռադիոյով պարբերաբար ծանուցելով, ամսագրերում ու թերթերում հոդվածներ և հաշվետվություններ հրատարակելով:

3 ամիսը մեկ տեղի կունենան տարածաշրջանային հանդիպումներ, իսկ 6 ամիսը մեկ՝ ազգային հանդիպումներ:

<u>Ժամկետներ</u>

Գործընթացը ավարտվելու է երկու տարում: Շահագրգիռ կողմերի համաժողովը տեղի կունենա 2006թ.-ի դեկտեմբերի 31-ին, տարածաշրջանային հանդիպումները՝ 2005թ.-ի մարտին, 2005թ.-ի հունիսին, 2005թ.-ի սեպտեմբերին, 2006թ.-ի մարտին, 2006թ.-ի ապրիլին և 2006թ.-ի հունիսին, մինչդեռ ազգային հանդիպումները տեղի կունենան 2005թ.-ի հունիսին, 2005թ.-ի դեկտեմբերին, 2006թ.-ի հունիսին և 2006թ.-ի դեկտեմբերին:

Հեղինակներ	*Սկսած*	*Հանդիպման օր*
ԳՋՀ-ից պրն.Հ-ը գրելու է «Հիմնական դրույթները և ՋՈՀԿ-ին անցնելու կարիքները» բաժինը:	փետրվար 2005	հունիս 2005
Երկու տարի առաջ ջրային վարչությունը հաշվետվություն է ներկայացրել Ա երկրի ջրային ռեսուրսների մասին:. ՋԿ-ն պետք է բանակցի խորհրդատու ճարտարագետների հետ՝ հաշվետվությունը ուսումնասիրելու և բացթողումների մասին հաշվետվություն տալու համար:	մինչև 2005 ապրիլ	մայիս 2005 հունիս 2005
AN Consulting-ից տիկին Y-ը գրելու է «Հեռանկարներն ու նպատակները» բաժինը:	օգոստոս 2005	դեկտեմբեր 2005
Ջրային ռեսուրսների կառավարման նպատակների նշանակությունը:	օգոստոս 2005	դեկտեմբեր 2005
Գյուղատնտեսական միությունը գրելու է «Ջուր սննդի համար» բաժինը:	հունվար 2005	հունիս 2006
Capital –ի գլխավոր ճարտարագետը գրելու է «Ջրային ծառայություններ» բաժինը:	հունվար 2005	հունիս 2006
Շրջակա միջավայրի վարչությունը (դր. Z –ն է համակարգելու) գրելու է «Ջուր և շրջակա միջավայր» բաժինը:	հունվար 2005	հունիս 2006
Ջրի վարչությունը գրելու է «Ռեսուրսային պահանջներ» բաժինը:	օգոստոս 2005	դեկտեմբեր 2006
Հաստատել և ներկայացնել Կառավարությանը		դեկտեմբեր 2006

Ներկայացնել հաշվետվություն: Տալ հստակ ուղեցույց, թե ինչպես է հաշվետվությունը ներկայացվում՝ ներառելով ամեն ելույթի հատկացվող ժամանակը: Համոզվել, որ հաշվետու անձն ունի անհրաժեշտ նյութեր՝ համակարգիչ, գրատախտակ:
Քննարկման հնարավորություն ընձեռել ելույթների ակնհայտ տարբերությունների դեպքում:

ԹԱՐՄԱՑՆՈՂ / ԱԿՏԻՎԱՑՆՈՂ ՎԱՐԺԱՆՔՆԵՐ

(«Կանայք, կանանց ջրային միություն ու ջրային ռեսուրսներ» դասընթացների նյութերից. հղում ինտերնետ էջին)

Այս վարժանքները կարող են օգտագործվել ցանկացած պահի՝ հետաքրքրությունը վերականգնելու, որոշ աշխուժություն հաղորդելու կամ ճաշից հետո մարդկանց թարմացնելու համար:

1. Ծանոթություն մասնակիցների հետ

Նպատակ. ավելի լավ ճանաչել մասնակիցներին և փոքր-ինչ ծանոթանալ նրանց բնավորությանը, օգնել մասնակիցներին հանգստանալու:

Ինչի՞ կարիք կա. տարբեր առարկաներ, ինչպես օրինակ՝ փափուկ խաղալիք, գդալ, բաժակ, մի կապոց թուղթ, գլխարկ, գոտի, մատիտ, քար կամ հայելի: Ամեն մի մասնակից պետք է ունենա մեկ առարկա:

Տևողություն. 20 րոպե

Ընթացք

- Մասնակիցները պետք է նստեն շրջանաձև, իսկ առարկաները դրվեն շրջանի կենտրոնում;
- Խնդրել մասնակիցներին՝ ընտրեն մեկ առարկա, որն ինչ-որ կերպ բնութագրում է իրենց:
- Մասնակիցները պետք է բացատրեն խմբի անդամներին, թե ինչու են ընտրել տվյալ առարկան, և ինչպես է այն բնութագրում իրենց անհատականությունը:

Ծանուցում օժանդակողին. այս վարժանքն օգնում է մասնակիցներին անկեղծանալու և կիսելու անձնական փորձը:

2. Քայլ՝ ըստ հրահանգի

Նպատակ. հասկանալ՝ ինչպես է մասնակիցը վերաբերվում հակառակ սեռի ներկայացուցչին և դրան առնչվող ցանկացած անհարմարության, նվազեցնել պահպանողականությունը, մասնակիցներին օգնել հաղթահարելու ամոթխածությունը և անհարմարության զգացումը:

Ինչի՞ կարիք կա. ձայնագրիչ և թեթև երաժշտություն (պարտադիր չէ)

Տևողություն. 25 րոպե

Ընթացք

- Խնդրել մասնակիցներին, որ քայլեն սենյակում: Նրանք պետք է ցրվեն և քայլեն տարբեր ուղղություններով՝ այլ մասնակիցների հետ կապ պահպանելով հայացքով:
- Քանի դեռ նրանք քայլում են, հետևեն հետևյալ հրահանգներին՝
    - Արագ քայլ
    - Դանդաղ քայլ
    - Քայլել տղամարդու նման
    - Քայլել կնոջ նման
    - Քայլել երեխայի նման
    - Քայլել ծեր կնոջ պես
    - Քայլել ծերունու պես
    - Կարելի է ընտրել այլ ձևեր:

- Փոխել հրահանգներ մի քանի րոպեն մեկ:
- Խնդրել մասնակիցներին՝ պատմեն, թե ինչ էին զգում կնոջ/տղամարդու պես քայլելիս: Ե՞րբ էին իրենց հարմարավետ կամ անհարմար զգում: Ոգևորել նրանց, որ քննարկեն զգացողությունների պատճառները:

Ծանուցում օժանդակողին. քննարկել, թե ինչպես են տղամարդիկ և կանայք զգում իրենց տարբերությունը, և ինչպես է հասարակությունը թելադրում մեզ մեր գենդերային դերերը:

3. Մրգային աղցան

Նպատակ. մասնակիցներին թարմացնել/ակտիվացնել:

Ինչի՞ կարիք կա. գրատախտակ

Տևողություն. 15 րոպե

Ընթացք

- Խնդրել մասնակիցներին՝ նստեն աթոռներին շրջանաձև, և ասել, որ պատրաստվում է մրգային աղցան: Օժանդակողը կանգնած է. այսպիսով, աթոռների թիվը մեկով պակաս է խաղի մասնակիցներից:
- Խնդրել մասնակիցներին, որ թվարկեն իրենց սիրած մրգերը և մասնակիցների օգնությամբ ընտրել ցանկացած չորսը. օրինակ՝ խնձոր, նարինջ, ծիրան, դեղձ:
- Գրել այդ չորս մրգերի անունները գրատախտակին: Պատմել մասնակիցներին, որ նրանք հիմա պետք է «միրգ»դառնան: Խնդրել մասնակիցներին՝ մեկ առ մեկ բարձրաձայնեն գրատախտակին գրված մրգերի անունները: Յուրաքանչյուր մասնակից «դառնում է» իր բարձրաձայնած միրգը: Օրինակ՝ առաջին մասնակիցը «խնձոր» է, երկրորդը՝ «նարինջ» և այսպես շարունակ: Չորրորդ մասնակիցը «դեղձ» է, հաջորդը նորից սկսում է «խնձորից»:
- Ասել մասնակիցներին, որ արագ փոխեն իրենց տեղերը, երբ բարձրաձայնեն իրենց մրգի անունը: Օրինակ՝ եթե օժանդակողը բարձրաձայնի «խնձոր», բոլոր «խնձորները» փոխում են իրենց տեղերը: Եթե օժանդակողը բացականչում է «մրգային աղցան», ապա բոլոր մասնակիցներն իրար հետ են փոխում տեղերը:
- Օժանդակողը նույնպես մասնակցում է և բացականչելուց հետո փորձում տեղ գտնել: Նա, ով առանց աթոռի է մնում, շարունակում է բարձրաձայնել:

Ծանուցում օժանդակողին. օժանդակողը կարող է միաժամանակ բարձրաձայնել մեկ կամ մեկից ավելի մրգերի անուններ: Օրինակ՝ «խնձոր և դեղձ»:

4. Համարակալման խաղ

Նպատակ. օգնել մասնակիցներին կենտրոնանալու. մասնակիցներին թարմացնել:

Ինչի՞ կարիք կա. ոչնչի

Տևողություն. 10 րոպե

Ընթացք

- Խնդրել խմբին, որ շրջան կազմեն:
- Ասել նրանց, որ պատրաստվեն 1-ից մինչև 50-ը հաշվելուն: Առաջին մասնակիցը ասում է 1, հաջորդը՝ 2, և այսպես շարունակ: Այն մասնակիցը, ում համարը կլինի 5 կամ դրա կրկնա-, եռա-, քառապատիկը և այլն, թիվն ասելու փոխարեն պետք է ծափահարի:
- Եթե ինչ-որ մեկը սխալվում է (ծափահարելու փոխարեն թիվն է ասում), ապա նա դուրս է գալիս խաղից, և հաջորդ մասնակիցը սկսում է հաշվել 1-ից: Եթե հաջորդ մասնակիցն էլ է սխալվում, ապա նույնպես դուրս է մնում խաղից:

Ծանուցում օժանդակողին. օժանդակողը պետք է աջակցի մասնակիցներին հաշվել եռանդով:

Այլ տարբերակներ ևս կարող են օգտագործվել, օրինակ՝

- Ծափահարել 7-ի և դրա կրկնա-, եռա-, քառապատիկի և այլն փոխարեն, և կամ այն բոլոր թվերի դեպքում, որոնց մեջ կա 7 (17, 27, 37…):
- Ծափահարել 5-ի և դրա կրկնա-, եռա-, քառապատիկի և այլն դեպքում, իսկ ամեն 10-ի և դրա կրկնա-, եռա-, քառապատիկը և այլն դեպքում՝ բացականչել:

5. Կոկոս

Ինչի՞ կարիք կա. ոչինչի

Տևողություն. 5 րոպե

Ընթացք

- Խնդրել մասնակիցներին, որ շրջան կազմեն:
- Ցույց տալ, թե ինչպես է գրվում Կ Ո Կ Ո Ս բառը՝ մարմնի հետևյալ շարժումներով.

  - **C:** Մի փոքր ծալել ձեռքերն արմունկից և ուսերին հավասար ազատ տարածությամբ առաջ պարզել
  - **O:** Մի փոքր ծալել ձեռքերն արմունկից և ուսերին հավասար առաջ պարզել, երկու ձեռքերի մատներն ագուցելով՝ կազմել փակ շրջան
  - **N:** Կռանալ և երկու ձեռքով հպվել ոտքերի ծայրերին
  - **U:** Երկու ձեռքերը ձիգ պահած բարձրացնել վեր
  - **T:** Պարզել երկու ձեռքերն ուսերին զուգահեռ, ափերով ներքև

- Մեկ առ մեկ բացականչել տառերը և խնդրել, որ մասնակիցները ցույց տան տառին համապատասխանող շարժումը:
- Դանդաղ ընթացքից անցնել արագի: Կարելի է նաև բացականչել տառերը առանց հերթականության:

Ծանուցում օժանդակողին. այբուբենի տառերը բացականչելիս օժանդակողը պետք է եռանդուն և աշխույժ լինի:

6. Ի՞նչ է անունդ:

Նպատակ. օգնում է՝ մասնակիցները հիշեն միմյանց անունները և թարմացնում է մասնակիցներին:

Ինչի՞ կարիք կա. գնդակ կամ ժապավենային փաթթոց

Տևողություն. 15 րոպե

Ընթացք

- Խնդրել մասնակիցներին, որ շրջան կազմեն:
- Մասնակիցներին խնդրել, որ գնդակը պատահականորեն փոխանցեն միմյանց: Գնդակ ստացողը բացականչում է փոխանցողի անունը:
- Եթե մասնակիցն անուն չի բացականչում, ապա շրջանի կենտրոնում պետք է պարի:

Ծանուցում օժանդակողին. օժանդակողը կամ խմբի անդամները կարող են պարի փոխարեն ընտրել նաև այլ հետաքրքիր «պատիժ»: Այս վարժությունը կարող է օգտագործվել նաև տարբեր մասնակիցների երկրները հիշելու համար:

7. Ընբռնել փոփոխությունները

Նպատակ. փոփոխությունների գործընթացի վերաբերյալ մասնակիցների իրազեկման բարելավում:

Ինչի՞ կարիք կա. ոչնչի

Տրողություն. 15 րոպե

Ընթացք

- Խնդրել մասնակիցներին, որ շրջան և զույգ կազմեն դիմացինի հետ:
- Զույգերից մեկը փակում է աչքերը, մինչ մյուսը որևէ բան է ձևափոխում (հագուստը, մազերի ձևը, ակնոցը և այլն):
- Երբ փոփոխությունն արված է, գործընկերը բացում է աչքերը և փորձում գուշակել փոփոխությունը:
- Գործողությունը կրկնվում է 3 անգամ, և այնուհետև գործընկերները փոխում են տեղերը:

Ծանուցում օժանդակողին. օժանդակողը կարող է հակիրճ քննարկել հետևյալ հարցերը՝

- Ի՞նչ էիք զգում, երբ փոփոխություն էր կատարվում:
- Ի՞նչ զգացիք, երբ կռահեցիք փոփոխությունը:
- Ո՞րն է հեշտ. փոխե՞լը, թե՞ կռահելը:
- Որո՞նք են այն գործոնները, որոնք օգնում են կռահելու փոփոխությունը:

8. Փոխանակում

Նպատակ. փոխանակման միջոցով խթանել խմբի անդամների փոխհարաբերությունները:

Ինչի՞ կարիք կա. ոչնչի

Տևողություն. 20 րոպե

Ընթացք

- Բաժանել մասնակիցներին երկու թիմի:
- Խնդրել, որ նրանք երկու շրջան կազմեն: Ներքին շրջանի մասնակիցները կանգնում են դեմքով դուրս:
- Արտաքին շրջանի մասնակիցները կանգնում են դեմքով ներս. այսպիսով, ներքին և արտաքին շրջանների մասնակիցները կանգնում են երես առ երես:
- Դեմ դիմաց կանգնած մասնակիցները փոխանակում են տեղեկություններ դասընթացի մասին, կամ թե ինչ են անելու դասընթացից հետո և այլն:
- Մասնակիցները միմյանց հետ խոսում են 2 րոպե, և հետո խումբը շարժվում է ժամացույցի սլաքի ուղղությամբ:
- Այս ընթացքը տևում է որոշ ժամանակ, մինչև փոխանակումն ամբողջությամբ ավարտվում է:

Ծանուցում օժանդակողին. այս վարժանքը կարող է օգտագործվել դասընթացների ընթացքում որպես թարմացնող/ակտիվացնող միջոց, նաև որպես դասընթացի կրկնողություն կամ գնահատում:
Օժանդակողը կարող է որոշել մասնակիցների քննարկելիք թեման:

9. Կապ

Նպատակ. ցույց տալ, որ համագործակցությունը և բազմակողմանի մոտեցումը կարող է օգնել այնպիսի խնդիր լուծելուն, որը անլուծելի է թվում:

Ինչի՞ կարիք կա. ոչնչի

Տևողություն. 10 րոպե

Ընթացք

- Խնդրել խմբին, որ ձեռք ձեռքի բռնած՝ շրջան կազմեն:
- Ասել խմբին, որ առանց ձեռքերը բաց թողնելու դեմքով շրջվեն մեկ դեպի շրջանի ներսը, մեկ դեպի դուրս:
- Թողնել՝ խումբը մի քանի րոպե պայքարի:
- Խնդրել երկու անդամի, որ բարձրացնեն ձեռքերը, իսկ խմբի մյուս անդամները ձեռքերի տակով անցնեն մյուս կողմը: Արդյունքում ամբողջ խումբը կկանգնի դեմքով դեպի դուրս:

2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳՐԻ ՆՄՈՒՇ

Ժամանակ	Առարկա	Բովանդակություն/ նպատակ
Առաջին օր 09:00 –10:30	**Ներածություն**	Ներկայացնել ինքն իրեն: Մասնակիցներին համառոտ ներկայացնել մշակված նյութերը և դրանց ակնկալվող օգտագործումը: Ներկայացնել ուսուցողական նյութերի փաթեթը՝ ներառյալ օժանդակ նյութերը: Պատմել ԳՋՀ-ի մասին:
11:00 – 12:30	**Ի՞նչ է ՋՈՒՀԿ**	<u>ՋՈՒՀԿ սկզբունքներ:</u> Հիշեցնել ՋՈՒՀԿ-ի մասին, պատասխանել հարցերի: <u>Մոտեցում:</u> Ներկայացնել համառոտ. հարցեր և պատասխաններ:
12:30 – 13:00	**Ճաշ**	
13:00 – 15:00	**Պլանավորման սկզբունքներ**	<u>Պլանավորման շրջան</u>: Ներկայացնել պլանավորման շրջանը. նշել այն տարրերը, որոնց հետ պետք է գործ ունենալ դասընթացի ընթացքում, ցույց տալ շրջանը՝ որպես դասընթացի ուսումնասիրման հիմական կառուցվածք: Ներկայացնել և քննարկել 45 րոպե: <u>Վարժություն</u>. խմբերով իրականացնել պլանավորման շրջանի ամեն մի փուլի այն գործունեությունները, որոնք Ձեր կարծիքով կարևոր են Ձեր երկրի համար: Կատարված աշխատանք 1 ժամ + 15 րոպե հաշվետվություն:
15:00 – 15:15	**Ընդմիջում**	
15:15 – 17:00	**Գործընթացի նախաձեռնում**	<u>Պլանավորման գործընթացի նախաձեռնում</u> Համակարգել և ստեղծել գործընթացի կառավարման խումբ: Դերերի, աշխատանքի պլանավորում: Ինչպե՞ս բարելավել իրազեկումը՝ պարտավորություն ստանձնելու և ըմբռնելու համար: Ունակություններ ձեռք բերելու դերը գործընթացում: <u>Մոտեցում:</u> Ներկայացնել և քննարկել 30 րոպե: <u>Վարժություն</u>. քննարկել՝ ով է պլանավորման գործընթացի շարժիչ ուժը, ինչպես ապահովել Կառավարության պարտավորությունը և գործընթացի կառավարման կառուցվածքը. (օժանդակող դասընթաց քարտերով կամ խմբային աշխատանքով) 45 րոպե + 15 րոպե հաշվետվություն ներկայացնելու համար:
Երկրորդ օր 09:00 -09:15	**Անցած նյութի կրկնություն**	Վերանայել նախորդ օրվա դասընթացը:
09:15 – 11:45	**Աշխատանքային պլան**	<u>Քաղաքական կամք և շահագրգիռ կողմերի մասնակցություն</u> Քաղաքական պարտավորության ստանձնում: Շահագրգիռ կողմերից ստացվող օգուտներ. ինչպե՞ս որոշել հիմնական շահագրգիռ կողմերին և նրանց դերը պլանավորման գործընթացում: Աշխատանքային պլանի մշակում: Ունակությունների ձեռքբերում: <u>Մոտեցում</u>: Ներկայացնել և քննարկել 45 րոպե: <u>Վարժություն</u>. երկու խումբ. 1 ժամ + 30 րոպե հաշվետվություն ներկայացնելու համար: 1. Քաղաքական մասնակցությունն ու պարտավորությունը երաշխավորելու ի՞նչ քայլեր ձեռնարկել պլանը շարադրելիս մինչ այն ընդունելն ու իրականացնելը: 2. Ի՞նչ քայլեր առաջարկել, որ ապահովվի շահագրգիռ կողմերի մասնակցությունը պլանավորման ողջ գործընթացին:

13:30-15:00	**Ռազմավարական հեռահար նպատակ: Ինչի՞ ենք ձգտում**	Ռազմավարական հեռահար նպատակ Ցույց տալ, որ ՋՌՀԿ-ի և ջրային ռեսուրսների կայուն կառավարման նոր հեռահար նպատակի պարտավորությունը պլանի վերլուծության և որոշումներ կայացնելու գործընթացի ուղեցույց է: Հիմնավորել, որ նպատակները էական նշանակություն ունեն պլանը կազմելիս: Ջրային քաղաքականության կամ հեռահար նպատակի հիմքեր ստեղծել: Կառավարության պարտավորությունն անհրաժեշտ է հենց սկզբից: Մոտեցում: Ներկայացնել այն (30 րոպե): Քննարկել, թե ինչպես պետք է ջրի հեռահար նպատակը կամ ջրային քաղաքականությունը մշակվի՝ ՋՌՀԿ մոտեցումը ներառելու համար. հնարավորություններ և խոչընդոտներ (45 րոպե + 15 րոպե հաշվետվություն ներկայացնելու համար):
Երրորդ օր 09:00-12:00	**Ինչպիսի՞ն է իրավիճակը**	Իրավիճակի վերլուծություն Ներկայացնել՝ ինչպես պետք է վերլուծվի իրավիճակը և վերլուծության օժանդակությունը պլանին: Վերլուծության չափանիշները (ՋՌՀԿ, հեռահար նպատակ), խնդրահարույց հարցերի տարրերը և վերլուծության նպատակները: Մասնակցային գործընթացի, շահագրգիռ կողմերի խորհրդատվության կարևորություն: Մոտեցում: Դերակատարների խաղը, երբ ֆերմերը, քաղաքի աղքատ և հարուստ բնակիչները, արդյունաբերողն ու քաղաքական գործիչը հանդիպում են քաղաքացիական ծառայողին, որը ցանկանում է ջրի նոր վարձ սահմանել՝ ջրային ռեսուրսների նախարարությանը ֆինանսավորելու համար (30 րոպե): Ներկայացնել և քննարկել՝ ինչպես վերլուծել իրավիճակը (45րոպե): Վարժություն. երկու խումբ. (45 րոպե, 30 րոպե հաշվետվություն ներկայացնելու համար): 1 Ինչպե՞ս վերլուծել երկրի իրավիճակը. գրել աշխատանքային պլան: 2. Շարադրել երկրի ջրային ռեսուրսների կառավարման իրավիճակի վերլուծության հաշվետվության բովանդակությունը:
13:30-16:30	**Ջրային ռեսուրսների կառավարման որոշված ռազմավարություն: Ո՞րն է առաջ ընթանալու լավագույն եղանակը**	Ջրային ռեսուրսների կառավարման տարբերակներ/ որոշված ռազմավարություն Նպատակների որոշում: Ի՞նչ ռազմավարություն պետք է ընդունվի նպատակներին հասնելու և հիմնախնդիրները լուծելու համար: Կապը ՋՌՀԿ սկզբունքներին: Անդրադառնալ հնարավորություն ընձեռող միջավայրի, կառուցվածքային շրջանակի, կառավարման գործիքների ոլորտներին: Ունակություններ ձեռք բերելու, ֆինանսավորման և իրագործելիության նշանակությունը: Խորհրդատվություն: Մոտեցում: Ներկայացնել և քննարկել նպատակները և ռազմավարություն մշակելու եղանակը (30րոպե): Ներկայացնել ՋՌՀԿ ներդնելիս անհրաժեշտ բարեփոխումները (30 րոպե): Վարժություն. որոշել երկրի իրավիճակի բարեփոխումների գերակա ոլորտները: Ի՞նչ գործընթաց օգտագործել ռազմավարությունը մշակելիս (1 ժամ):

Չորրորդ օր 09:00-10:15	**ՋՈՒՀԿ պլանի կազմում**	<u>ՋՈՒՀԿ պլան</u> Կառուցվածք, ծավալ, բովանդակություն: Խորհրդատվություն, իրագործելիություն, ֆինանսավորում: Գնահատել պլանը: Հաստատելու գործընթաց: <u>Մոտեցում</u>: Ներկայացնել պլանը մշակելու գործընթացը և բովանդակությունը (30 րոպե): Քննարկել՝ օգտագործելով պլանը մշակելու գործընթացի թղթիկներ մինչև Կառավարության կողմից հաստատելը (45 րոպե):
11:00–12:30	**Իրականացման պլանավորում**	<u>Պլանի իրականացում</u> Հասարակական և քաղաքական աջակցության համակենտրոնացում: Ֆինանսական և դոնորների աջակցության համակենտրոնացում: Պլանի համապատասխանեցում ազգային և տեղական այլ պլանների: Իրականացման պլան: Գնահատել առաջընթացը և թարմացնել պլանը: <u>Մոտեցում</u>: Խմբային քննարկում:
13:00-14:00	**Հետագա քայլեր**	<u>Գործողությունների պլան</u> Հետագա քայլերի նախաձեռնում, իրականացում: <u>Մոտեցում</u>: Խմբային աշխատանք: Նախորդ դասընթացների արդյունքները համախմբել գործողությունների պլանում (90 րոպե):